



# ԲԱԶՄԱԶԱՆ

թեմաներ,

# ՄԻԵՎՆՈՒՅՆ

հիմնախնդիր

---

հոդվածների ժողովածու



Երևան 2017

ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և  
առաջնորդության կենտրոն  
Հոդվածների ժողովածու  
2017

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Աննա Հովհաննիսյան, Սիրանուշ Դավթյան**

Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ.....5

**Թերեզա Ամրյան**

Եզդի կանանց փոփոխվող կերպարը (Անգլերեն).....14

**Անժելա Աֆյան**

Աշխատանքային վարքի ստրատեգիաների ընտրության գենդերային ասպեկտները.....28

**Մերի Ստեփանյան**

Մոր դերային սպասելիքները տարբեր սեռի երեխաներից.....47

**Աննա Բաղրամյան**

Մեռականությունը և դրա բաղադրիչները.....66

## CONTENT

### **Anna Hovhannisyan, Siranush Davtyan**

The Features of Feminist Approach in Social Work and Psychological Counseling.....5

### **Tereza Amryan**

The Changing Image of Yezidi Women (English).....14

### **Anzhela Afyan**

Gender Aspects of Choosing the Strategies for Working Behavior.....28

### **Mary Stepanyan**

What Kind of Role Expectations Have Mothers from the Children of Different Sexes.....47

### **Anna Baghramyan**

Sexuality and Components of Human's Sexuality.....66

**Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ**

***Ֆեմինիստական սոցիալական աշխատանք***

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը սկիզբ առավ ֆեմինիստական սոցիալական շարժումից, որն առաջնորդվում էր կանանց կողմից, ովքեր աշխատում էին այլ կանանց հետ իրենց համայնքներում: [1, էջ 138-140] Նրանք նպատակ էին հետապնդում բարձրացնելու կանանց սոցիալ-տնտեսական բարեկեցության մակարդակը՝ գտնելով ընդհանրություններ նրանց անհատական կարիքների և հասարակությունում ունեցած սոցիալական կարգավիճակի միջև: Չնայած նրան, որ որոշ տեսաբաններ ևս նշում էին, որ հասարակությունն է ստեղծում «անձնային հիվանդությունները», ֆեմինիստական սոցիալական աշխատանքն էր, որ առաջինը մատնանշեց կանանց հիմնախնդիրների և կնոջը վերագրվող սոցիալական դերերի միջև կապի մասին:

Կանանց ազատագրման շարժումն իր մեկնարկից սկսած թիրախավորեց այն դժվարությունները, որոնց բախվում են կանայք սեքսիզմի (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում) պատճառով: Այս շարժումը պարտավորեցրեց սոցիալական աշխատողներին փոխել մինչ այդ առկա մոտեցումը և վերաձևակերպել սոցիալական գործողությունների նպատակը:

Ֆեմինիստական շարժման պատմությունը հաճախ բաժանվում է երեք հիմնական «ալիքների», ինչի շնորհիվ հնարավոր եղավ ներկայացնել տարբեր տեսական հեռանկարները: Առաջին «ալիքը» սկսվում է կանանց **սուֆրաժիստական շարժումը** (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում), 1800-ականների վերջին: Այս շրջանում ավելի շատ պայքար էր մղվում մանկական աշխատանքի, սեքս աշխատողների (sex workers) անվտանգության, աղքատ գյուղաբնակ կանանց կյանքը բարելավելու և այլ հարցերի համար: Լիբերալ ֆեմինիստական մոտեցումը, որը կենտրոնանում էր քաղաքական նիրավական գործողությունների վրա, հանդիսանում էր ալիքի հիմնական տեսական մոտեցումը: Ֆեմինիստական շարժման **երկրորդ «ալիքը»** սկիզբ է առել 1960-70-ական թվականներին, քաղաքացիական իրավունքների և հակամիլիտարիստական (antimilitarism) շարժումների (բացատրությունը տես տերմինաբանական բառարանում) հետ զուգահեռ, և դիտարկվում է ավելի ռադիկալ, քան առաջինը: 1960-ականների վերջին ռադիկալ ֆեմինիզմն

առավել նշանակալից դեր սկսեց ունենալ ֆեմինիստական շարժման մեջ՝ հաճախ քննադատելով լիբերալ ֆեմինիստական մոտեցումը: Թեև ֆեմինիստական շարժման երկրորդ «ալիքը» հաճախ ասոցացվում է ռադիկալ ֆեմինիզմի հետ, այնուամենայնիվ, լիբերալ ֆեմինիստական մոտեցումը շարունակում էր մնալ այս ալիքի մասնակց: 1970-ականներին, երկրորդ ալիքի զարգացման պատմական ընթացքի ավարտին, սկսում է ի հայտ գալ սոցիալիստ-ֆեմինիստական մոտեցումը և սևամորթ, ասիացի կալոռասայական ու էթնիկ խմբերի պատկանող կանանց (women of color) մոտեցումը, որն առավել ընդգծեց ֆեմինիստների շրջանում առկա գաղափարախոսական տարբերությունները: Երկրորդ «ալիքի» շրջանում կարևորվեց հայրիշխանական ինստիտուտների փոփոխությունը, կանանց վերարտադրողական առողջության ու իրավունքների, սեռականության և սեռականության բռնության հետ կապված հարցերը: Ֆեմինիզմի **երրորդ «ալիքը»** սկիզբ առավ 1990-ականներին, երբ սևամորթ, ասիացի կալոռասայական ու էթնիկ խմբերի պատկանող կանայք (women of color) և լեզբի, բիսեքսուալ և տրանսգենդեր կանայք, բարձրացրեցին «սպիտակ» և տարասեռական (հետերոսեքսուալ) կանանց կողմից խտրականության ենթարկվելը: Երրորդ «ալիքը» զարգացրեց «մենք ընդդեմ նրանց» գաղափարը՝ շեշտադրելով կանանց ազատությունը սեփական անձին վերաբերող ընտրությունների հարցում:

Բ. Քոլինզը նշում է, որ սոցիալական աշխատողների համար կարևոր է տեղեկացված լինել այս հեռանկարների մասին, կանանց հետ աշխատանքը կառուցելիս: Ֆեմինիստական ուղղությունների ուսումնասիրությունը թույլ կտա պրակտիկ սոցիալական աշխատողներին տարբերակել հասարակության ներսում առկա **ուժի և իշխանության բաշխումը**: [7, էջ 28-31] Չնայած այն փաստին, որ առկա են տարբեր ֆեմինիստական մոտեցումներ տարբեր արժեքային կողմնորոշումներով, դրանք բոլորը թիրախավորում են հայրիշխանության հայեցակարգը: Այսպես, Լորբերը սահմանում է **հայրիշխանությունը**՝ որպես կազմակերպությունների, ինստիտուտների կառույց կենսագործունեության համակարգ, որը թույլ է տալիս տղամարդկանց վերահսկել կանանց կյանքը: [4, էջ 58]

Հատկանշական է, որ մինչ ֆեմինիստական սոցիալական աշխատանքի ձևավորումը, սոցիալական աշխատանքում կիրառվող տեսություններն առավել տղամարդակենտրոն են եղել, այդ թվում կայն տեսությունները, որոնք հիմնվել են գենդերային հետազոտությունների վրա: Այս տեսանկյունից, ֆեմինիստական մոտեցումը նոր փուլ ձևավորեց նաև սոցիալական աշխատանքի տեսության մեջ՝ առաջադրելով ավելի կնակենտրոն տեսական հիմքեր, որոնք հիմք կհանդիսանային շահերի պաշտպանությունն առավել ծառայեցնելու կանանց և կին սոցիալական աշխատողների դերի բարձրացմանը հասարակությունում:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը հիմնվում է *իշխանության վերախնամատավորման, գործընթացի հավասար կառավարման և «անձնականը քաղաքական է»* մոտեցումների վրա: [2, էջ 12] Այսօր, թերևս, շատ խոցելի խմբերի հետ աշխատելիս, **ազատագրումը (Էմանսիպացիան)** դառնում է սոցիալական աշխատանքի կարևոր մոտեցում:

Ֆեմինիստական մոտեցման կիրառումը սոցիալական աշխատանքում թույլ է տալիս դիտարկել կանանց կարգավիճակը տարբեր հասարակություններում: Դա կարևոր է նաև այն տեսանկյունից, որ սոցիալական աշխատանքով հիմնականում զբաղվում են կանայք: Ֆեմինիստական գաղափարախոսությունը կենտրոնացնում է սոցիալական աշխատանքի ջանքերը կանանց հիմնախնդիրների ընկալման վրա հասարակության մեջ: *Այդ գաղափարախոսության հիմքում ընկած է ինչպես ռադիկալ փոփոխությունների հասնելն, այնպես էլ հավասարությունը և փոխաջակցությունը:* Ֆեմինիստական մոտեցումը սոցիալական աշխատանքում կենտրոնանում է *իշխանության անհավասար բաշխման վրա*, որը հանգեցնում է կանանց դերի ստորադասման, կանանց կարողությունների, փորձի և դերի ժխտման կամ սահմանափակման:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը դիտարկվել է Ռ. Սենդսի և Կ. Նուկիոյի կողմից (1992)՝ ընդգծելով սոցիալական և գենդերային հիմնախնդիրների թիրախավորման կարևորությունը: Սոցիալական աշխատողի համար կարևոր է ձևավորել ոչ կարծրատիպային մտածելակերպ, որը չի դասակարգի մարդկանց ըստ գենդերային բնութագրիչների:

Այսպես, Ջ. Միլսը նշում է, որ ֆեմինիզմի կարևոր գաղափարներից է *ազատագրել կանանց*, որպեսզի իրենք կարողանան *որոշումներ կայացնել սեփական կյանքի վերաբերյալ*, որն էլ կնպաստի սոցիալական արդարության հաստատմանը, կանանց իրավունքների լիարժեք իրացմանը, և, ի վերջո, կնպաստի նաև ընտանեկան բռնությունից կանանց ազատագրմանը:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտությունը նպատակ է հետապնդում **շահառուների ռեսուրսների ակտիվացում**, որպեսզի անձն ինքնուրույն կարողանա կառուցել իր կյանքը, **հավասարության գաղափարի վրա հիմնվող արժեքների ներդրում աշխատավայրում աշխատակիցների միջև**, ինչպես նաև նպաստում գենդերային անհավասարությունից բխող գործընթացների և համակարգերի փոփոխությանը: Սոցիալական աշխատանքի ֆեմինիստական մոտեցումը հիմնվում է այն ենթադրության վրա, որ *շահառուի խնդիրները պայմանավորված չեն կնոջ անձնային առանձնահատկություններով*, և հանդիսանում են սոցիալական կառուցվածքի հետևանք, որոնք հայրիշխանական և ճնշող (oppressive) են կանանց նկատմամբ: Այս մոտեցումը հիմնվում է այն գաղափարի վրա, որ հայրիշխանական մշակույթում տղամարդիկ ունեն առավելություններ, որոնք խոչընդոտում են գենդերային հավասարությունը: Այդ իսկ պատճառով, այս մոտեցման նպատակն է ստեղծել հասարակություն, որը հավասար կլինի, թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: [5, էջ 120]

Պրակտիկ սոցիալական աշխատողները, ովքեր կիրառում են ֆեմինիստական մոտեցումն իրենց աշխատանքում, նպատակ ունեն ստեղծելու հասարակությունում հավասարություն՝ միավորելով անհատականը քաղաքականի հետ: Միջամտության տեսանկյունից, Լ. Դոմինելին սահմանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքը՝ որպես սոցիալական աշխատանքի մի ձև, որը վերցնում է կնոջ անձնային փորձը՝ որպես վերլուծության ելակետ և,

կենտրոնանալով հասարակությունում կանանց դիրքի ևանձնային կարիքների վրա, արձագանքում վերջինիս հիմնախնդիրներին, ստեղծում հավասարը հավասարին մոտեցմամբ հարաբերություններ ևարձագանքում կառուցվածքային անհավասարություններին: Կանանց առանձնահատուկ կարիքներին արձագանքը հովիստիկ եղանակով և նրանց կյանքի բարդություններին, ներառյալ՝ ճնշումներին ևանագատություններին արձագանքը, հանդիսանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության կարևոր բաղադրիչ: Այն կենտրոնանում է սոցիալական հարաբերությունների կախյալության փորձի վերլուծության վրա՝ թիրախավորելով նաև նրանց, ում հետ կինը գտնվում է մշտական հարաբերությունների մեջ, ինչպես օրինակ՝ տղամարդիկ, այլ կանայք, երեխաներ: [4, էջ 48]

Իր ավելի ուշ աշխատություններում Լ. Ռոմինելին սահմանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքը որպես պրակտիկա, որը հիմնվում է կնոջ բազմապիսի փորձի վերլուծության վրա: Այդ վերլուծության առանցքային գաղափարն է կնոջ դիրքը հասարակությունում ևանհատական դժվարությունները, որոնք առաջանում են շահառուի և սոցիալական աշխատողի միջև, ով փորձում է կառուցել հավասար հարաբերություններ:

Ֆեմինիստական մոտեցումը ներմուծել է սոցիալական աշխատանքի պրակտիկա սոցիալական աշխատող-շահառու երկխոսությունների և հավասարության հարաբերությունների մոդելը, ինչպես նաև անհատական հիմնախնդիրները քաղաքական դարձնելու միտումը: Այս մոտեցումը նաև հիմք է հանդիսացել սոցիալական աշխատանքում հակախտրական մոտեցման ձևավորման համար:

### **Ֆեմինիստական հոգեբանական խորհրդատվություն**

Ֆեմինիստական հոգեբանությունը, այնուհետև ֆեմինիստական թերապիան, ֆեմինիստական սոցիալական աշխատանքի նման ունեն իրենց զարգացման առանձնահատկություններն, զարգացման փուլերը, որոնք շատ բաներով ընդհանրական են, բայց և միևնույն ժամանակ տարբեր են ֆեմինիստական սոցիալական աշխատանքից:

Ֆեմինիստական հոգեբանությունը զարգացում է ապրել առավելապես 1960-ական թվականներին՝ հիմնվելով ֆեմինիստական փիլիսոփայության և ֆեմինիստական շարժման գաղափարների վրա: Ֆեմինիստական փիլիսոփայության, հետագայում նաև ֆեմինիստական շարժման հիմնական փաստարկը՝ «անձնականը քաղաքական է», հանդիսանում է ֆեմինիստական հոգեբանության կարևորագույն սկզբունքը, որը հետագայում դարձավ նաև ֆեմինիստական միջամտության կարևորագույն սկզբունքներից մեկը: Ֆեմինիստական հոգեբանությունը հնարավորություն ընձեռեց նոր մոտեցում ցուցաբերել կանանց հոգեբանական, հուզական խնդիրների նկատմամբ, հնարավորություն տրվեց կանանց անձնական կյանքում առկա խնդիրների արմատը դիտարկել՝ հասարակությունում կանանց/տղամարդկանց դերերի, հայրիշխանական համակարգում կնոջ դերի արժեզրկման, ընտանեկան և միջանձնային հարաբերություններում ոչ հավասար հարաբերությունների և



այլ հասարակական խնդիրների համատեքստում: Ըստ Ջոն Սոմմերս-Ֆլանագանի ֆեմինիստական հոգեբանությունը երեք հիմնական զարգացման փուլեր է անցել: **Առաջին փուլի** զարգացման հիմնական շեշտը դրված է այն գաղափարի վրա, որ հոգեբանությունը առհասարակ տղամարդկային գիտություն է, ստեղծված տղամարդկանց կողմից, իսկ կանանց հիմնախնդիրները արժեզրկված են կամ դիտարկվում են խտրական տեսանկյունից: Զարգացման այս փուլի համար կարևոր դեր է խաղացել նեո-հոգեվերլուծության դպրոցի ներկայացուցիչ Կարեն Խորնին, ով 1922 թվականին իր հոդվածներից մեկում նշում է, որ հոգեբանությունը ծագել է տղամարդկանց մտածողության հենքի վրա, և եթե մենք փորձենք դուրս գալ այդ մտածողության սահմաններից, կանանց հոգեբանության գրեթե բոլոր խնդիրները կունենան այլ դրսևորում: Այս ժամանակահատվածում, մասնավորապես, հոգեվերլուծական դպրոցի առաջ քաշած գաղափարները՝ «առնանդամի նախանձի», «հիստերիայի», որպես առավելապես կանանց բնորոշ համախտանիշի հասկացություն, հակասում են ֆեմինիստական գաղափարախոսությանը: Ֆեմինիստական հոգեբանության զարգացումը կապված է նաև Կլարա Թոմսոնի հետ, ով «Միջանձնային հոգեվերլուծություն» գրքի հեղինակն է, ինչպես նաև «Կնոջ հոգեբանություն» գրքի հեղինակ՝ Հելեն Դեթչի անվան հետ. այս աշխատություններն անդրադարձ են կատարում հենց կանանց հոգեբանական առանձնահատկություններին և խնդիրներին, ինչն էլ իր հերթին նախադրյալ դարձավ այլ աշխատությունների ստեղծման համար, օրինակ, Ջին Բեյքեր Միլլերի, Ֆիլիս Չեսլերի և Ջուլիետ Միտչերի: [11,12] Զարգացման **երկրորդ փուլում** շեշտը դրվեց ֆեմինիստական գաղափարախոսության տարածման շուրջ տարբեր հոգեբանական դպրոցների և ուղղությունների վրա. հատկապես կարևորվեց սեքսիստական մեկնաբանությունների և մեկնությունների բացառումը, գլխավորապես ուշադրություն դարձվեց կանանց միջև փոխհամագործակցական միջավայրի ստեղծմանը: Բացի դա, այս փուլի առավել նշանակալի ձեռքբերումներից է համարվում ֆեմինիստական հոգեթերապիայի հիմնական սկզբունքների մշակումը: Զարգացման **երրորդ փուլում** մշակվեցին ֆեմինիստական թերապիայի տեսական հիմքերը և գաղափարները, ընդգծվեցին ֆեմինիստական թերապիայի սահմանները, առավելապես սկսվեց շեշտադրվել հոգեբանության, հոգեթերապիայի կարևորությունը էթնիկ, ռասայական, մշակութային խնդիրների լուծման հարցում, որոնց հետ կանայք բախվում են կյանքի տարբեր փուլերում: Ֆեմինիստական մոտեցմանը հարող հոգեբան-խորհրդատուները սկսեցին հատկապես վերլուծել կանանց հոգեբանական կամ հոգեբուժական խնդիրները, թերապևտիկ միջամտության թիրախները՝ կանանց հիմնախնդիրների տեսանկյունից, հոգեթերապևտի դերը հարաբերություններում, հավասարության գաղափարը հոգեթերապիայում: Ժամանակակից ֆեմինիստական մոտեցմամբ թերապիայի հիմնական աշխատանքն ուղղված է ԼԳԲՏ համայնքի, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանված անձանց, բռնության ենթարկված կանանց հիմնախնդիրների լուծմանը, աշխատանքային անհավասարությանը, տնտեսական ռեսուրսների սահմանափակությանը և այլն: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն ընձեռեց նաև բարձրաձայնել այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են՝ երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը, ընտանեկան բռնությունը, սեռական բռնությունն ու

ինցեստր, առավել մանրամասն վերլուծության ենթարկվեցին կանանց մոտ հանդիպող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են սննդի ընդունման խնդիրները, ընկճախտը, անպտղությունը, ինքնասպանությունը և այլ հիմնահարցեր: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն է ընձեռեց դիտարկել և վերլուծել հոգեբուժական ախտորոշումներն ու համախտանիշները՝ գենդերային զգայունության տեսանկյունից, ինչն էլ հնարավորություն տվեց հոգեթերապիայում նոր մեթոդների և տեխնիկաների զարգացմանը: Բացի դա, հոգեթերապիայում ավելի ուշադրություն սկսեցին դարձնել «գենդեր» եզրույթին, ի հակադրություն նրան, որ մինչ այդ հոգեթերապիան դիտվել է գենդերային հիմնահարցերի վերլուծության մասով չեզոք գործընթաց: Ֆեմինիստական մոտեցումը հնարավորություն տվեց ուշադրություն դարձնել գենդերային հիմնախնդիրներին ոչ միայն տանը կամ առանձին հարաբերություններում, այլ նաև հենց հոգեթերապևտիկ հարաբերություններում: Առավելապես, շեշտադրում սկսվեց արվել այն գաղափարին, որ կնոջ փորձը ոչ այնքան իր անձնական փորձն է, այլ կապված է տարբեր կանանց փորձի հետ և կապում է նույն այդ կանանց փորձն ավելի քաղաքական իրականությանը, ինչը մեծապես փոխել է թերապևտիկ աշխատանքի ընթացքը: Ֆեմինիստական հոգեթերապիան համարվում է էկլեկտիկ հոգեթերապևտիկ մոտեցում, այսինքն՝ ընդունվում և կիրառվում է ցանկացած գործիք, տեխնիկա, որը չի հակասում ֆեմինիստական գաղափարախոսությանը: Ֆեմինիստական թերապիան իր զարգացման ընթացքում հնարավորություն տվեց դիտարկելու «կանանց հայցերը» և առանձնացնելու խնդիրների շարք, որոնք մինչ այդ չէին ուսումնասիրվել հոգեթերապևտների և խորհրդատուների կողմից: Մասնավորապես, դիտարկվեցին դեպրեսիա ունեցող կանանց հիմնախնդիրները, որոնց վերլուծությունը թույլ տվեց պատճառահետևանքային կապեր դուրս բերել հասարակությունում առկա կանանց սոցիալ-տնտեսական խնդիրների, գենդերային դերերի և դեպրեսիայի տարածվածության միջև: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն տվեց նաև այլ տեսանկյունից դիտել բռնության հիմնախնդիրը: Մասնավորապես, թերապիայում կարևորվեց բռնության կամ վատ վերաբերմունքի համար պատասխանատվություն չվերցնելը՝ շեշտադրելով այն գաղափարը, որ բռնության համար բռնարարն է պատասխանատու և ոչ թե «գոհը»: Բացի դա, թերապիայում առանձնահատուկ ուշադրության արժանացան այն հարաբերություններն ու փոխհարաբերությունները, որոնք հնարավոր են դարձնում բռնության և խտրականության մշակույթի տարածումը: Ֆեմինիստական թերապիայի բնորոշ առանձնահատկություններից է գենդերային սոցիալականացման կարևորումը թերապիայում, հատկապես այն տեսանկյունից, որ տղաներին տրվում է գերակայություն աղջիկների նկատմամբ, ինչն իր հերթին բերում է ներանձնային խնդիրների զարգացմանը. օրինակ, դեռահասության տարիքում երկրորդային սեռական հատկանիշների զարգացման հետ կապված բարդույթներ, մարմնի կառուցվածքի, մարմնի սխեմայի ընդունման և ընկալման հետ խնդիրներ և այլն: Հարկավոր է ընդգծել նաև, որ ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում հնարավորություն տվեց խոսել միջին տարիքի կնոջ խնդիրների մասին, հատկապես դաշտանադադարի, ընտանեկան բռնության, բռնաբարության և այլ խնդիրների մասին: Ֆեմինիստական թերապիայի մյուս առանձնահատկությունը կանանց կյանքի

պատմությունների հավաքագրումն ու վերամիավորումն է մեկ ընդհանուր թեմայի շուրջ: Այդպիսի կյանքի պատմությունների հավաքագրմանն առավելապես նպաստում է խմբային խորհրդատվությունը/հոգեթերապիան, երբ կանայք, ովքեր վերապրել են միևնույն փորձը, օրինակ, վաղ մանկական տարիքում սեռական բռնության են ենթարկվել, խմբային թերապիայի ընթացքում խոսում են իրենց վերապրած բռնության փորձի մասին: Հարկավոր է ընդգծել, որ ֆեմինիստական մոտեցման այժմեական հիմնական ձեռքբերումներից է կնոջ համար այնպիսի թերապևտիկ միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի նրան ոչ միայն իր կյանքի պատմությունը վերլուծել, այլ նաև առանձնացնել թեմաներ, որոնք անհանգստացնում են իրեն՝ որպես կին: Ամենակարևոր հարցերից մեկը, որ բարձրացրել է ֆեմինիստական թերապիան՝ ծառայությունների ներառականությունն է, այսինքն՝ տրամադրվող ծառայությունները պետք է հասանելի լինեն տարբեր մշակույթ կրող կանանց համար, օտարալեզու կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, նույնասեռական կանանց և այլ խմբերի ներկայացուցիչների համար: Այսօր ֆեմինիստական թերապիան բաց է գույգերի, ընտանիքների, երեխաների և ցանկացած գենդերի անձի համար: Ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում չի բացառում տղամարդկանց ներառումը թերապիա՝ թե՛ որպես այցելու, թե՛ որպես խորհրդատու, միևնույն ժամանակ շեշտադրելով, որ ցանկացած պարագայում տղամարդը, կիսելով հավասար հարաբերությունների գաղափարը, կարող է չնկատել այն ուժը, որն ունի իր դիմաց նստած կնոջ նկատմամբ, հետևաբար աշխատանք պիտի տարվի ինտիմության, հուզականության արտահայտման, այցելու-հոգեբան հարաբերությունների կառուցման ուղղությամբ, որն ինքնին չի ենթադրում հիերարխիկ ուժ: Ֆեմինիստական հոգեթերապիայի առանձնահատկություններից մեկը նաև թերապիայի փուլայնությունն է, որը հնարավորություն է տալիս ավելի համակարգային մոտեցում ցուցաբերել աշխատանքում: Առանձնացնում են թերապիայի հետևյալ երեք հիմնական փուլեր. **առաջին փուլում** խորհրդատուն այցելուին օգնում է հասկանալ, որ իր անձնային խնդիրներն ունեն սոցիալական «արմատներ», իսկ անձնական կյանքն ունի քաղաքական հիմք: **Երկրորդ փուլում** դիտվում և վերլուծվում է «ուժ» հասկացությունը, ձևավորվում են իրավահավասար հարաբերություններ թերապևտի և այցելուի միջև: **Երրորդ փուլում** թերապևտը սկսում է կարևորել այցելուի անձնային աճը, սկսում է համագործակցել այցելուի հետ կյանքի նոր ոճի կազմակերպման կիրառության հարցում: Կյանքի նոր ոճը վերաբերվում է գենդերային տեսանկյունից իրավահավասար հարաբերությունների կառուցմանն ու իրագործմանը, անձնային նույնականացման առանձնահատկություններին և սոցիալական վերափոխումների անձնային մակարդակին: [9,10,12]

Ֆեմինիստական հոգեթերապիայի հիմնական սկզբունքների առանձնացումը սերտորեն կապված է ֆեմինիստական փիլիսոփայության հետ և կարևորվում է թերապևտիկ հարաբերություններում: Այդ **սկզբունքներն** են՝ *անձնայինը քաղաքական է, խորհրդատվական հարաբերությունները հավասարության սկզբունքով են կառուցված, ցավը ու հուզական խնդիրները իրավիճակի հաղթահարման դրական ցուցանիշներ են, գենդերային կարծրատիպերը և գենդերային սոցիալականացման*

*առանձնահատկությունները նշանակություն են ունեցել և շարունակում են ունանալ այցելուի կյանքում, վարքում, խորհրդատվություն իրականացնելուց առաջ բաց լինել վերլուծելու սեփական խարանները գենդերային հիմնախնդիրների շուրջ:*

Այսպիսով, ֆեմինիստական թերապիան անձակենտրոն թերապիայի տեսակ է, որն ունի իր առանձնահատկությունները, հիմնական փուլերն ու սկզբունքները, էթիկական նորմերն ու տեխնիկաները, որոնց մասին ավելի մանրամասն տեղեկություն հնարավոր է ձեռք բերել «Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ» ուղեցույցում:

## **Անոտագիա**

Հոդվածի մշակման համար ելակետ է ծառայել «Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ» ուղեցույցը, որի ստեղծման համար հիմք է հանդիսացել սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության ոլորտների իրավիճակային վերլուծությունը, ըստ որի, ֆեմինիստական մոտեցմամբ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները սակավ են, կարծրատիպային, կամ արտացոլում են այն տեսակետը, որ ֆեմինիստական մոտեցումը միակողմանի է և չի «աշխատում» գործնական մակարդակում: Հոդվածում անդրադարձ է կատարվում կանանց հետ աշխատանքում կիրառվող ֆեմինիստական միջամտության առանձնահատկություններին, միջամտության հնարավորություններին և հիմնական սկզբունքներին սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ: Հոդվածը բաղկացած է երկու մասերից՝ սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության. բաժանումը կատարված է պայմանականորեն, միևնույ ժամանակ, ընդգծելու համար, սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության առանձնահատկությունները ֆեմինիստական մոտեցման դիտանկյունից:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Barretti, M. (2001). Social Work, Women and Feminism: A Review of Social Work Journals, 1988-1997. *Affilia*
2. Berlin, S., & Kravetz, D. (1981, November). Women as Victims: A feminist social work perspective. *Social Work*, 26(6).
3. Dominelli, L. (1997b) 'Social Work and Social Development: A Partnership in Social Change' in *Journal of Social Development in Africa*, Vol. 12, No. 1.
4. Dominelli L. *Feminist Social work. Theory and Practice*, 2002, Palgrava.
5. Freeman, M. (1990, July 1). Beyond Women's Issues: Feminism and social Work. *Affilia*, 5(2).
6. Hooks, B. (2000). *Feminist Theory from Margin to Center*. Brooklyn: South End Press.
7. Nes, J., & Iadicola, P. (1989, January). Toward a Definition of Feminist Social Work: A Comparison of Liberal, Radical, and Socialist Models. *Social Work*.
8. Saulnier, C. (2000). *Incorporating Feminist Theory into Social Work Practice: Group Work Examples*. *Social Work with Groups*.
9. Corey G., 2001: *The art of integrative counseling*; Pacific Grove, CA
10. Sharf S.R., 2004: *Theories of psychotherapy and counseling: concepts and cases*, 3<sup>rd</sup> ed. Pacific Grove: CA, Brooks/Cole
11. Sommers-Flanagan J. and Sommers-Flanagan R., 2004: *Counseling and psychotherapy theories in context and practice, skills, strategies and techniques*, New Jersey
12. Selvira Draganovic, 2011: *Approaches to Feminist Therapy: A Case Study Illustration*, Epiphany

## THE CHANGING IMAGE OF YEZIDI WOMEN

The article is dedicated to the changing image of Yezidi women, which is sometimes full of contradictions.<sup>1</sup> The survey is based on some historical sources, field work and private conversations we had with some Yezidi women living in Armenia.<sup>2</sup> To comprehend the changing image of Yezidi women it would be useful to pay attention how they are introduced in historical sources and how it has changed through time. For the beginning we will introduce some notes of early travelers and researchers who mentioned about Yezidi women.

Frederick Forbes, who visited Yezidi inhabited Sinjar in Northern Iraq in the beginning of the 19<sup>th</sup> century, wrote about Yezidi women: “The women do not like Mohammedans, conceal their faces, but go about their household concerns, and mix with the men as in European countries. This, however, is commonly done throughout Mesopotamia and Asia Minor, except in large cities.”<sup>3</sup>

Isya Joseph, who was one of the first scientists to study the “holy books” in Yezidism, in one of his works wrote about Yezidi women: “They converse with men freely. A woman does not conceal her face unless she is stared at, when she draws a corner of her mantle over her face”.<sup>4</sup> Then he mentioned: “They work like men; they till the ground, take care of cattle, fight the enemy and are courageous and very independent. This enables the young women to choose their sweethearts and run away with them.”<sup>5</sup>

Britain scientist Austen Henry Layard (19<sup>th</sup> century) wrote about hospitality of a Yezidi woman who treated male guest when her husband was not at home: “Sheikh Nasr had already left Baadri, and was preparing for the religious ceremonies at the tomb of Sheikh Adi. I visited his wife, and was gratified by the unaffected hospitality of my reception, and by the cleanliness of the house and its scanty furniture.”<sup>6</sup> This is a quite rare phenomenon for women in the Middle East, especially among Muslim people, to accept or treat male guest when the husband is not at home. In his same book Layard described Yezidi women who performed ablution not far from the main Yezidi sanctuary in Lalish: “On the outskirts of the houses I found the women performing their ablutions in

---

<sup>1</sup> The religious centre, central pilgrimage site and cradle of Yezidism is the Canyon of Lalish (Gelîyê Lalişê), which is situated in Northern Iraq. Throughout history some parts of Yezidi community were scattered in different places of Middle East. A group of Yezidis came to Western Armenia and to the territory of contemporary Republic of Armenia and lived along with their Armenian neighbours during several centuries.

<sup>2</sup> According to the will of informants their names are not mentioned in the article.

<sup>3</sup> Forbes F., *A Visit to the Sinjar Hills in 1838, with Some Account of the Sect of Yezidîs, and of Various Places in the Mesopotamian Desert, between the Rivers Tigris and Khâbûr*, The Journal of the Royal Geographical Society of London, Vol. 9 1839, p. 427.

<sup>4</sup> Joseph I., *Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz*, Boston, 1919, p. 190.

<sup>5</sup> Joseph I., 1919, p. 190.

<sup>6</sup> Layard A., *Nineveh and its Remains*, Paris, Baudry's European Library, 1850, p. 94.

the principal stream. They were preparing for the festival of the morrow; for no one can enter the valley of Sheikh Adi on this occasion without having first purified his body and his clothes. They took no notice of me; and, although divested of all their garments, walked about unconcernedly.”<sup>7</sup> Then Layard mentioned: “Unrestrained by the presence of strangers, the women forgot their usual timidity and roved unveiled over the mountains. As I sat beneath the trees, laughing girls gathered round me, examined my dress or asked me of things to them strange and new.”<sup>8</sup>

There are also interesting citations about Yezidi women in Armenian sources. Armenian clergyman Sion Ter-Manvelyan mentioned in his book dedicated to Yezidis: “It shouldn’t be denied that women, especially unmarried girls, enjoy more privilege and respect among Kurmanj people rather than among other [nations] and they [women] are more than free.”<sup>9</sup>

In his article, published in 1904 in “Luma” Armenian Literature Journal, Armenian author Gyurjyan mentioned: “The nice attitude of Yezidi men towards Yezidi women is on much higher level than that of Muslim people. Among Yezidis and also among other Kurds, women and girls don’t conceal themselves from men (exception are the new brides), they [women] are not slaves of men.”<sup>10</sup> Gyurjyan mentioned about covering the head by Yezidi girls and women: “Yezidi girls (like Armenian women in villages) cover their heads with fez (tarboosh) while they are not married, after marriage they cover their heads with slim tulle/voile.”<sup>11</sup> Gyurjyan insisted that Yezidi women were brave enough to act against the will of family members: “Yezidi [girl] can marry her beloved brave man (their ideal is brave men), otherwise she can ignore her parents’ objections and different rumours and escape from her parents’ house with her beloved.”<sup>12</sup>

Ter-Manvelyan depicted a quite free image of Yezidi women. He mentioned: “The housewife has a habit to do laundry every week with other women or with female members of the family; they like to do laundry away from the villages in outdoor areas on the banks of rivers, or near streams and springs, where topless [Yezidi women] wash clothes and also wash themselves without avoiding sudden presence of casual passers-by.”<sup>13</sup> Then he mentioned: “Yezidi woman doesn’t know and is not used to being shy of other people as she is not shy of breastfeeding in public, no matter what kind of society she is in.”<sup>14</sup>

In one of novels by Armenian writer Raffi, there is a dialogue of a Yezidi girl and an Armenian young man who was a guest in the house of the Yezidis:

“-I had prepared your bed myself, - she said, - did you have nice sleep? Did you have good dreams?

-I had nice dreams, in my dreams I was speaking to a girl who was as beautiful as you are.

---

<sup>7</sup> Layard A., 1850, p. 94.

<sup>8</sup> Layard A., 1850, p. 99-100.

<sup>9</sup> Տէր-Մանուէլյան Ա., *Եզիդի-կուրմանձ*, Ախալցխա, 1910, էջ 17:

<sup>10</sup> Գիւրջեան Ա., *Եզիդի քրդեր*, Լումայ, 1904, հունվար-փետրվար, № 1, էջ 89:

<sup>11</sup> Գիւրջեան Ա., 1904, էջ 90:

<sup>12</sup> Գիւրջեան Ա., 1904, էջ 89:

<sup>13</sup> Տէր-Մանուէլյան Ա., 1910, էջ 21:

<sup>14</sup> Տէր-Մանուէլյան Ա., 1910, էջ 22:

I told these words as a joke, but they excited the feelings of the beautiful girl, and she outspoke a secret through her tears, which amazed me greatly.

-I am not beautiful, - she said, - I am a useless piece of wiping cloth thrown under feet...

I did not know what to answer her because I did not know what she meant.”<sup>15</sup>

In the same novel Raffi describes how Yezidi women and girls make jokes with the same guest: “It was noon. This time the shepherds took their sheep to the sheepfolds near tents, women and girls went there to milk [the cattle]. They had already finished their work, and placing milk jugs on their heads, they were walking back from the sheepfolds. It rarely happened those girls and young women help themselves throwing jokes on me while passing [nearby].”<sup>16</sup>

It is very interesting that we meet the image of such kind free Yezidi women in Armenian sources. One of the reasons can be that Yezidi people felt themselves much more free in Armenian environment rather than among Muslim peoples. That factor had its impact on the behaviour and subsequently on the image of Yezidi girls and women in Armenian sources.

We can surely insist that compared to Muslim women, Yezidi women had and enjoyed much more freedom. It is worthy to mention that “circumcision of women” (female genital mutilation) was never popular among Yezidi women.<sup>17</sup> We inquired some Yezidi women aged 60-80 living in Armenia about that. They even had no idea what “circumcision of women” is and why it is done. It proves that the phenomenon of female genital mutilation was not popular in the community and was not familiar to female part of the community.

Yezidi community is an ethno-religious group with unique religious system. Thus, it would be interesting to pay attention to female figures of Yezidi religious lore.

Yezidi religious tradition, like Abrahamic religions, accepts that Eve was made off Adam’s rib. In one of the translations of holy books of Yezidism, called “The Black Book”, it is mentioned: “God commanded and Jabrail came and made Eve from Adam’s left rib.”<sup>18</sup> According to another translation of the same book: “Then God commanded Gabriel to create Eve from under the left shoulder of Adam.”<sup>19</sup>

When discussing female saints or female figures associated with motherhood, it is worthy to mention that according to a myth, which is popular among some Yezidi groups: Mary the Virgin,<sup>20</sup> mother of Jesus,<sup>21</sup> begat Jesus in a manner unlike the rest of women. She begat him from her right side (her hand) between her clothes and her body.<sup>22</sup> According to another myth, popular among Yezidis of Armenia, Maria got pregnant due to the light of God (lit: *nûra Xwedê*) and gave birth to Jesus miraculously.

---

<sup>15</sup> Բաֆֆի, *Գայծեր*, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1985, էջ 598:

<sup>16</sup> Բաֆֆի, 1985, էջ 601:

<sup>17</sup> Գիւրջեան Ա., 1904, էջ 90; Ավիալ Ա., *Անդրկովկասյան քրդերի կենցաղը*, Երևան, 1954, էջ 66:

<sup>18</sup> Ասատրյան Գ., Փոլսոյան Ա., *Շգրիների դավանանքը*, Պատմաբանասիրական հանդես, № 4, Երևան, 1989, էջ 146:

<sup>19</sup> Joseph I., 1919, p. 39.

<sup>20</sup> In Yezidi folk tradition she is called *Meryem*.

<sup>21</sup> In Yezidi religious tradition Jesus is called *İsa bin Meryem* (lit: Jesus son of Maria) and is accepted as a prophet: unlike Christianity, Yezidism does not accept him as son of God.

<sup>22</sup> Joseph I., 1919, p. 61.



There is a female figure in Yezidi beliefs who is called *Xatûna Ferxa* (Khatuna Farkha). She is believed to be the patroness of motherhood and the protector of pregnant women. Yezidis believe that Khatuna Farkha also helps pregnant women to give birth to a child.<sup>23</sup>

Another female holy figure called *Pirafat* (Pirafat) is considered to be the foremother of Yezidis, the protector of Yezidi community and Yezidi families.<sup>24</sup> According to a legend, Yezidi people emerged due to seed which was preserved by Pirafat.<sup>25</sup>

Meanwhile, there is another interesting legend. According to it, Yezidi people emerged from the son of Adam whose name was *Şehîd bin Cêr* (Shahid bin Jer, lit: "Shahid son of jar")<sup>26</sup> or Shaydi bin Jer.<sup>27</sup> In "The Black Book" it is mentioned: "Adam and Eve quarreled over the question whether the human race should be descended from him or her, for each wished to be the sole begetter of the race. This quarrel originated in their observation of the fact that among animals both the male and the female were factors in the production of their respective species. After a long discussion Adam and Eve agreed on this each should cast own seed into a jar, close it, and seal it with own seal, and wait for nine months. When they opened the jars at the completion of this period, they found in Adam's jar two children, male and female. Now from these two our sect, the Yezidis, are descended. In Eve's jar they found naught but rotten worms emitting a foul odor."<sup>28</sup> In the Joseph's work it is also mentioned: "There is also another myth according to which after Adam miraculously gave birth to a son, distressed by this incident, Eve asked God that she might find favor in her husband's eyes by giving birth to a child. Thereupon, it continues, she begot a very pretty daughter. Attracted by her beauty, Adam married her to his son. Now, the Yezidis, we are told, are the blessed seed of these two children."<sup>29</sup>

It seems that there is somehow contradiction. On the one hand in Yezidi religious lore the role of woman is highly appreciated. Due to Maria woman is a being who miraculously gives birth to a child. Due to Khatuna Farkha woman is introduced as a protector and patroness. Due to Pirafat the role of woman is appreciated as a foremother. However, on the other hand, the role of woman is subordinated to that of a man in the face of Eve, as she is introduced just as a being created from Adams' rib or shoulder. Due to some myths it is emphasized in Yezidi lore that Yezidi people have nothing common in with Eve and are actually the descendants of Adam's son. Thus, in some myths woman (Eve) is even deprived of giving birth to a child.

---

<sup>23</sup> Ավդալ Ա., 1954, էջ 63-64:

<sup>24</sup> Ավդալ Ա., 1954, էջ 91:

<sup>25</sup> Asatrian G., Arakelova V., *The Yezidi Pantheon*, Iran and the Caucasus, Vol. 8.2, Leiden, 2004, pp. 245-246.

<sup>26</sup> See Spät E., *Shahid bin Jarr, Forefather of the Yezidis and the Gnostic Seed of Seth*, Iran and the Caucasus, Vol. 6.1-2, Leiden, 2002, pp. 27-56.

<sup>27</sup> Ավդալ Ա., *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, էջ 17-18):

<sup>28</sup> Joseph I., 1919, pp. 39, 90.

<sup>29</sup> Joseph I., 1919, p. 91.

Yezidi women have their unique role in Yezidi religious system. Yezidis call female members of clergy casts<sup>30</sup> and refer to them as *stî* (transformation of a loan-word from Arabic: sayyida, “mistress”). This kind of referencing expresses the great respect towards those women.

Earlier Yezidi women used to take part in a mystery-play, which is called *Sima* or *Sema* (Sama) performed only in Lalish. Layard described some rites of the Yezidi mystery-play and mentioned about the participation of Yezidi women: “As I was gazing on this extraordinary scene, the hum of human voices was suddenly hushed, and a strain, solemn and melancholy, arose from the valley. It resembled some majestic chant which years before I had listened to in the cathedral of a distant land. Music so pathetic and so sweet I had never before heard in the East. The voices of men and *women* were blended in harmony with the soft notes of many flutes. At measured intervals the song was broken by the loud clash of cymbals and tambourines; and those who were without the precincts of the tomb then joined in the melody.”<sup>31</sup> Then he mentioned: “The same slow and solemn strain, occasionally varied in the melody, lasted for nearly an hour; a part of it was called ‘Makam Azerat Esau’ or the song of the Lord Jesus. It was sung by the Sheikhs, the Cawals<sup>32</sup>, and the *women*, and occasionally by those without.”<sup>33</sup> In another source is mentioned that after the ceremony of Sama the young men and *women* dance in the outer court until early in the morning.<sup>34</sup> Now Yezidi mystery-play is generally performed by male priests.<sup>35</sup>

Driver, who in the beginning of the 20<sup>th</sup> century studied pilgrimage sites of Yezidism, wrote about equal participation of Yezidi men and women in the religious rites and visiting the shrines of Yezidi saints. He mentioned: “...At these assemblies both sexes feast together, eating, drinking and dancing.”<sup>36</sup>

Thus, in earlier sources we see the image of a free Yezidi woman having her significant role in religious practice, on the other hand in later sources we see some strange perceptions and prejudices towards Yezidi women. Yezidi scientist and writer Emîne Evdal (Amine Avdal), who lived and worked in the Soviet Armenia in the 20<sup>th</sup> century, mentioned in one of his works: “...women were considered to be unclean because of menstruating and childbirth, thus, they were not allowed to sacrifice animals when visiting houses of sheikhs considered to be holy places.”<sup>37</sup>

Sometimes Yezidi women had great influence in Yezidi community. In this regard in Yezidi history *Mayan Xatûn* (Mayan Khatun), who lived at the end of the 19<sup>th</sup> century and at the beginning of the 20<sup>th</sup> century, was quite famous. She was the member of Mir<sup>38</sup> family. In an Arabic source it is mentioned: “She married her cousin Mir Ali Beg at the age of eighteen and after his death she was

---

<sup>30</sup> There are three casts in Yezidi society \_ şêx (sheykh), pîr (pir), mirîd (mrid). Sheykhs and pirs are clergymen, mirids are laymen. Marriage is forbidden between the members of different casts.

<sup>31</sup> Layard A., 1850, p. 98.

<sup>32</sup> *Cawals* or *kawals* are servants and chanters of Yezidi religious hymns. Kawals live in Lalish.

<sup>33</sup> Layard A., 1850, p. 98.

<sup>34</sup> Joseph I., 1919, p. 165.

<sup>35</sup> Ամրյան Թ., *Ճգնաճեւր եզդիականության մէջ*, Արևելագիտության հարցեր, հ. 8, Երևան, 2013, էջ 323-332:

<sup>36</sup> Driver G. R., *The Religion of the Kurds*, Bulletin of the School of Oriental Studies, University of London, Vol. 2, No. 2 (1922), p. 205.

<sup>37</sup> Ավդալ Ա., 1954, էջ 34:

<sup>38</sup> *Mir* is the religious leader of Yezidi people all over the world.

regent for their son Mir Said Beg and later for his son Tahsin Beg, who became Mir at the age of thirteen. Her genius and ability were first revealed during Ali Beg's lifetime, when she shared the duties of government after comforting him in their days of trial and sufferings and joining him in the three years of exile in Sivas imposed on him by the Ottoman government. .... She is wise, intelligent and far-sighted and is feared and respected by her people. Her power over them is such that none dares oppose her; everyone is awed by her presence and nervous when she is away. She is arrogant, proud and vain, but when one meets her the grandeur and nobility of her character shine through. ... At this time she is the effective ruler who gives and takes away, rewards and withholds, allows and forbids as she deems best. It is hard to imagine how things will be when she is dead, considering that she is approaching the end of her life and everything about her is old except her mind.”<sup>39</sup>

In Yezidi religion the role of female servants and chaplains is properly appreciated. There are female servants i.e. *faqayās* (Arab. faqr, “poverty”), who serve in Yezidi sanctuaries in Lalish. They are unmarried or widowed women. The responsibilities of faqrayas are to clean the sanctuary, lit oil lamps, prepare food for monks and visitors. They put on long white dress<sup>40</sup>. The leader of *faqrayas*, whose role can be compared to that of Catholic *abbess*, is called *kabana or kevanî* (Persian kadbānū, “housewife”, “mistress”)<sup>41</sup>: The idea of unmarried or widowed women, who serve for religion, exists only in the religious centre of Yezidism. In the Yezidi communities out of Lalish such kind of concept does not exist; it is even strange to the world-outlook of the rest of Yezidis living in diaspora. In this environment Yezidi women are known and even in some sources are introduced not as a sole individual, but as the member of a family, the member of a clan, somebody's daughter, somebody's daughter-in-law or somebody's wife. In one case (before marriage) woman is introduced as a member of her paternal clan/family, in another case as member of her husband's family/clan. Amine Avdal wrote: “When somebody wanted to praise the daughter-in-law or her ancestors, they said to her: ‘You are daughter of good parents’ (lit: You are not daughter of bad parents). While speaking about their daughter-in-law a member of family said ‘Our daughter-in-law does not have bad ancestors’”:<sup>42</sup> Yezidi lore is full of such kind of examples: “*Gulî Cewar agha dipirse, wekî ew qîza delal, qîza kê ye? Bûka kê ye?*”<sup>43</sup> (Guli Jawar agha asks: “Whose daughter [or] whose daughter-in-law is this wonderful girl?”).

It is obvious that after marriage woman was identified through her husband's clan or family. But there is also an interesting expression in the language of Yezidis of Armenia, which can express many nuances of male ownership towards women. In order to say “she is married to him” they use the expression “*ewa destê wîda ye*” (lit: “she is in his hands”). This expression is used not only in spoken language of contemporary Yezidis, but also in lore. For example: “*Qîza wî Hucê xanim destê*

<sup>39</sup> Al Damlooji Sadiq, *The Yezidis* (Arabic), Mosul, 1949, p. 36, apud: Guest J., *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987, p. 185.

<sup>40</sup> Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, p. 136; Guest J., 1987, p. 35; Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, p. 95.

<sup>41</sup> See Driver G. R., 1922, p. 207; Kreyenbroek Ph., 1995, p. 136.

<sup>42</sup> Ավդալ Ա., 1954, էջ 91:

<sup>43</sup> Аһмәде Гөгә, Дәнгә кал-бавә мә, Ереван, 1997, руп. 55.

kurapê beg - Qeso begêda bû.”<sup>44</sup> (His daughter mistress Huje was in the hands of Qaso beg – the cousin of beg). This expression shows that in the subconsciousness of Yezidi people woman belongs to her husband, she is “in his hands”. Thus, in this context we sometimes meet the image of a woman who is not free and is dependant on her husband’s will. Despite some freedom women enjoyed in family, women were not totally perceived as independent individuals. Before marriage they were identified via father’s family; after marriage they were identified via husband’s family. The same thing is more or less going on in Yezidi community of Armenia even today.

Not married, lonely, or widowed women were not respected properly and sometimes were ignored in Yezidi society. We meet such kind of examples in Yezidi lore. A story tells about a widowed woman who came to her brother-in-law and asked him to sell her sheep too. Her brother-in-law gave her some money and spoke to her with contempt. The woman, who was offended because of such attitude, said: “Tell my brother-in-law *Reşê Nevo*<sup>45</sup> that the world will not remain like this: soon my son *Ûsiv* will grow up, he will have wind in his one hand and rain in another hand (meaning “he will be very powerful”), [then] all of you will wish to be in my place”<sup>46</sup>. It seems that the widowed woman felt herself unprotected and saw her little son as her protector in the future.

It is known that through a long period of history there was a taboo on literacy among Yezidis: only some sheikhs belonging to *Adanî* (Adani) sheikh clan had right to read and write.<sup>47</sup> In the Soviet Union the state paid special attention to literacy. In all Yezidi inhabited villages of Soviet Armenia *liquidation stations*<sup>48</sup> were founded to eliminate illiteracy among population. Though not all Yezidi women attended liquidation stations, generally men, or only some women, basically wives or family members of Communist activists or the members of Communist party used to attend such centres.<sup>49</sup> Hence it had great impact on the rest of women of the community throughout time.

For those times there was a very interesting phenomenon. Yezidi military and social activist Shamo Temurov,<sup>50</sup> on 11 March, 1926, in village Big Jamushvan (nowadays village Alagyaz, Aragatsotn Province) delivered a speech emphasizing the importance for Yezidi women to get education.<sup>51</sup> The libraries and cultural clubs, generally organized by Yezidi women, were founded in Yezidi inhabited villages of Armenia.<sup>52</sup> Due to them cultural events, meetings, seminars were organized dedicated to women and girls. The cultural clubs not only brought great benefit to the cultural progress, but also had impact on the activity and the empowerment of Yezidi women.<sup>53</sup> Ensemble of song and dance was organised and Yezidi women were members of that ensemble.<sup>54</sup>

---

<sup>44</sup> Аһмәде Горе, 1997, руп. 99.

<sup>45</sup> Reşê Nevo (Rashe Navo) – Rasha son of Navo.

<sup>46</sup> Аһмәде Горе, 1997, руп. 82.

<sup>47</sup> Kreyenbroek Ph., 1995, p. 131:

<sup>48</sup> Liquidation stations (լիկվայսիւն) were centres for teaching adult people and for eradication of illiteracy.

<sup>49</sup> Ավիշի Ա., 1954, էջ 147:

<sup>50</sup> Şemoyê Hemo Têmûrov was born in 1898 in Aslanlu village in Surmalu. He took part in Sardarapat battle in 1918 (Аһмәде Горе, 1997, руп. 67-68).

<sup>51</sup> Аһмәде Горе, 1997, руп. 67.

<sup>52</sup> Ավիշի Ա., 1954, էջ 149:

<sup>53</sup> Карлене Чачани, *Пъзмамтийа цъмә 'та әрмәнийа у к'орда*, Ереван, 1977, руп. 163-164.

<sup>54</sup> Ավիշի Ա., 1954, էջ 150:

Yezidi women were elected as Soviet representatives in Yezidi villages; they became more active in social life.<sup>55</sup> In the Soviet Union opportunities were enhanced to women to get education and to become more active. Due to this, many Yezidi women got education; many Yezidi female professionals made success in different fields breaking a lot of stereotypes.

Under Soviet conditions special attention was paid to the issue of maternal and child protection. The cases of infant mortalities were decreased.<sup>56</sup> During the Soviet era it became popular among Yezidis to celebrate the March 8<sup>th</sup> (Heyştê Adarê).<sup>57</sup> Amine Avdal mentioned that the respect towards women was increased, and abusive expressions which earlier had been used for women were changed. For example earlier, for mother of many children people used the expression “*xoya çêjika*” (lit: the owner of cubs/pups), it was changed and mothers of many children were called “*jina qoçax*” (resourceful woman), “*jina egît*” (hero woman), “*jina zor*” (powerful woman, strong woman) etc.<sup>58</sup>

Yezidi female writer *Sîma Semend* (Sima Semend) in her poetry compared the life of Yezidi women in the USSR with the life women had before.<sup>59</sup> In Yezidi poetry Yezidi women were generally introduced either as hero mothers having many children or as women who worked and built socialism. For example, Yezidi writer Karlênê Çaçani (Karlene Chachani) has a poem dedicated to a woman who has many children. The poem is titled “*Dayka mêrxas*” (lit: “Heroine mother”).<sup>60</sup> Another poem of Karlene Chachani is called “*Qîza mêrxas*” (lit: “Heroine girl”); this poem is dedicated to a girl working in the cotton field.<sup>61</sup> We would like to draw attention of the reader to the terms used for heroine women. It is *mêrxas*, a word, which means “hero”, but the word earlier had been traditionally used for men, even the literal translation of the two parts of this word would prove it (*mêr* – lit: “man”, *xas* – lit: “selected one”, “good one”). During the field work we noticed that Yezidis often use the expression “*jina mêrani*”, which has the meaning “brave woman”. This word is also related to male features. The word “*mêrani*”, which means “brave” in the language of Yezidis, actually consists of words *mêr* (man) and suffix *-ani*.

Summarizing what is mentioned above, we can insist that though in the USSR Yezidi women generally preserved the main requirements of the traditional Yezidi society in community and in their families, due to the opportunities granted to them by the state and society, many of them got education, worked and became more active. Though all women did not receive a full education, they basically became literate and more active. They possessed the image of a women “working and building socialism”.

During the field works and private talks with aged Yezidi women who lived in Soviet Union, the informants emphasized that during the Second World War, when most of Yezidi men were in the

---

<sup>55</sup> Карлене Чачани, 1977, руп. 162-164.

<sup>56</sup> Ավրիշ Ա., 1954, էջ 154:

<sup>57</sup> Ավրիշ Ա., 1954, էջ 156:

<sup>58</sup> Ավրիշ Ա., 1954, էջ 171:

<sup>59</sup> Карлене Чачани, 1977, руп. 164.

<sup>60</sup> Карлене Чачани, *Ընդ առաջնիքի*, Ереван, 1962, руп. 22.

<sup>61</sup> Карлене Чачани, 1962, руп. 6.

front line, Yezidi women had to do work they had no need or opportunity to do earlier. During those years many Yezidi women got senior management positions in Soviet collective farms in the villages.

It's obvious that in peaceful environment Yezidi women relatively enjoyed freedom not only in family, but also in community. However, during the wars and disasterous genocides Yezidi women needed to be protected. In many Yezidi families in Armenia there are live memories about Yezidi girls and women killed, raped, or kidnapped by Muslims during 1915 Armenian Genocide.<sup>62</sup> Similar things happened during 2014 Sinjar Yezidi Genocide by the Islamic State. There are such kind of stories also in historical sources. Oswald Parry (19<sup>th</sup> century), who found and studied the texts of Yezidi holy books, wrote about the atrocities of Muslims against Yezidi people and their holy shrines; he mentioned: "The pretty women and girls he (Osman Pasha) took captive, marrying them by force to his soldiers. Some he took and cast into prison, every day threatening and torturing them to become Moslems. And one, Mirza Beg, the civil chief of the Yazidis, shame be to him, forsook his faith, and from fear, and to gain money and a title, became a Moslem. Of the noble firmness of Ali Beg we will tell later."<sup>63</sup> Then Parry mentioned: "But worst of all was what happened to those who refused to change their faith. The men were cruelly tortured, and killed, the women taken away, outraged, or killed. One Sheikh was cut into many pieces and thrown over a rock; another ground like corn between two mill-stones. The women were at the mercy of the soldiers. Some fled, and to escape dishonour cast themselves from a high rock and were slain. ... Then Osman Beg heard that a number of young girls were hidden near the olive groves in some long grass; savagely he ordered fire to be set all round, and with screams too fearful to hear, they were all burned to death. A young girl, soon to be a mother, was pursued to the Syrian church, where the priest gave her refuge. There the soldiers found her, and having committed unspeakable things, killed her near the sanctuary. The Kurds and other robbers of the mountains, encouraged by these things, came down, and added much cruelty and outrage to what was already done."<sup>64</sup>

In this context, it is worth to mention that Yezidi women often learned to handle weapon since childhood and were able to defend themselves. Thus, along with the image of Yezidi woman suffering in genocide, there is also the image of a powerful and fighting Yezidi woman who is able to protect herself. Gyurjyan mentioned: "Yezidi women often participated in the battles with men and by their heroism didn't get behind brave men. There are dozens of Yezidi heroine women in Yezidi melancholic folk songs."<sup>65</sup> Amine Avdal wrote the following about pre-Soviet period: "Yezidi women had great role in inter-tribal fights and along with their husbands and brothers used to fight against the enemies."<sup>66</sup> Ter-Manvelyan mentioned in his work: "Both men and women are used to handle weapon succesfully since childhood."<sup>67</sup> We see the image of brave, fighting Yezidi women in some

---

<sup>62</sup> Ամրյան Թ., *ԲՄ Էզդի նախատատերը. նրանք տեսել էին Հայոց ցեղասպանությունը*, Հայ զինվոր, 2015, Ապրիլ 23-29, էջ 14-15; <http://www.hayzinvor.am/31463.html> (attached 25.03.2017):

<sup>63</sup> Parry O., *Six Months in a Syrian Monastery*, London, 1895, p. 257.

<sup>64</sup> Parry O., 1895, p. 259.

<sup>65</sup> Գիւրջեան Ա., 1904, էջ 89:

<sup>66</sup> Ավդալ Ա., 1954, էջ 33:

<sup>67</sup> Տէր-Մանուկյան Ա., 1910, էջ 26:

traditional sagas and songs. The influential image of a strong-willed, independent, proud, fighting and powerful Yezidi woman is dominant in “*Besê*”, “*Cibli*”, “*Memê û Zîné*”, “*Memê û Eysê*”, “*Ker and Kulukê Silêmanê Silîvî*” and other Yezidi epic poems.<sup>68</sup>

There are also live memories among Yezidis of Armenia about Yezidi women who fought against the enemy and revenged for their killed relatives during 1915 Armenian Genocide. We found a story in the textbook for Yezidi children. The story is about a Yezidi woman called *Têlîya Beko* (Teli daughter of Bako) who revenged the enemy who had killed husband and father-in-law.<sup>69</sup>

One could say at the same time there were two types of female figures; the first type submissive and exploited and the second type brave, powerful, fighting and even revenging.

After the collapse of the Soviet Union, when the whole country was in a difficult economic situation, in a transition period and in chaos of values, Yezidi girls in most families did not get much education, and upon finishing or dropping out of school, they just got married. Education was pushed to the second plan, and public role of women became subordinate to family role. Unlike the Soviet period, in 1990s the rights and activity of Yezidi girls degraded, traditional stereotypes were strengthened for girls and women in the community. During 1990-2000 it was a rare phenomenon to see Yezidi girls learning in Institutes or Universities in Armenia. Two main issues emerged for Yezidi women: the issue of education and the issue of early marriages. On the other hand some male members and “representatives” of the Yezidi community began to hamper the empowerment of Yezidi girls and women in Armenia. They started to strengthen the stereotypes and prejudice against Yezidi women and make obstacles for their empowerment.

In 2012 a draft law (bill) was discussed on making changes in Family Code of the Republic of Armenia. According to that bill new age for marriage was to be changed (earlier it was 17) and to become 18. After the discussion of this bill Aziz Tamoyan, the president of “Yezidi National Union ULE” announced that the new changes (related to the age of marriage) would promote the migration of Yezidis from Armenia. Aziz Tamoyan mentioned: “when a girl becomes 18 years old, we tell that she ‘became ‘pirasa’, that is she is old...”<sup>70</sup> To describe unmarried Yezidi girls who are over 16 he used a word (*pîrese*) which is considered to be vulgarism in the language of Yezidis. In Armenian media that word was just translated as “old”. Actually, the meaning of the two parts of the word sound like pîr – old; se – dog. With such a statement Tamoyan not only expressed popular attitude of the majority of the male part of Yezidi community towards Yezidi women and girls, but reinforced this prejudice towards Yezidi girls and women. That attitude greatly hinders the empowerment of Yezidi girls and women. It may have negative influence and somehow shape the image of Yezidi woman who does nothing but marrying prior to the age of 16 years old.

---

<sup>68</sup> Ջնդի Հ., Կար ու Քուրուկէ Սլեմանէ Սլիվի, Երևան, 1941, էջ 139; Ավդալ Ա., 1954, էջ 32-33:

<sup>69</sup> Эзизе Әмә’р, Ө’ дөбйата Эздики (кьтева дәрса), Р’әван, 2005, pp. 33-34.

<sup>70</sup> <https://news.am/arm/news/115033.html> (attached 15.03.2017); <http://www.tert.am/am/news/2012/07/27/yezidi-marriage-age/555227> (attached 18.04.2017).

One of Yezidi NGOs called “Sinjar Yezidi National Union” announced that Aziz Tamoyan does not have the right to make unsensible statements on behalf of the Yezidi nation.<sup>71</sup> Boris Tamoyan the head of “Sinjar Yezidi National Union” exhorted Aziz Tamoyan not to put Yezidi people in funny situation with such kind of statements.<sup>72</sup> Yezidi youth started to express their disagreement and concerns on social media platform. For example one Yezidi girl wrote her notes in a blog. It was titled: “I am 20 years old but I don’t consider myself to be *pirasa*”. She mentioned: “The Yezidis have problem related to the educational level. The adoption of this rule, to some extent, will promote the advancement of education. I am not sure that everyone will get higher education, but I think that at least they will complete secondary schools. As citizens of the Republic of Armenia we should accept any law which is adopted. The law is for everybody, there shouldn’t be exceptions...”<sup>73</sup>

However, Aziz Tamoyan’s statement was followed by the statement of a middle-aged Yezidi priest in Armenia, sheykh Bro Hasanyan, who said during press conference in Yerevan: “We Yezidis, as a national minority, have the right to live according to our national traditions. The law established the age of marriage for girls 18, but among the Yezidis, if the girl has an appropriate candidate [for marriage] in her 16, the community allows them to marry by an **internal consensus**.”<sup>74</sup> He did not interpret what he meant when he said “*internal consensus*”.

Some Yezidi aged and middle-aged women, who had conversation with us during our field work, stated that their husbands generally share the idea expressed by Aziz Tamoyan. The women themselves were ashamed of the idea. Within the community women criticized Aziz Tamoyan’s behaviour; some of them were ashamed since Aziz Tamoyan expressed these ideas beyond the community, thus, the Yezidi women could become a target of jokes and be mocked by the neighbors and outsiders.

The two main issues - the issue of education and early marriage of Yezidi women were raised in Armenian media from time to time: «18 տարեկան աղջիկն արդեն պառավ է». եզդի համայնքը կառավարության որոշումը դժբախտություն է համարում (“18 year-old girl is already old”. The Yezidi community considers the decision of the government to be misfortune),<sup>75</sup> «18 տարեկան աղջիկը արդեն պառավ է». եզդի համայնքը դեմ է ամուսնության համար նվազագույն տարիք սահմանող «ոչ մարդկային» օրենքին (“18-year-old girl is already old for Yezidis:” the Yezidi community is against ‘anti-humanistic’ law defining the minimum marriage age)<sup>76</sup> «Կինը լեզու սովորի ու դրսում աշխատի՞»». եզդի կանանց իրավունքները լռում են հանուն ավանդույթների (“Should a woman learn a language and work out [of home]?” Yezidi women’s rights are kept in silence in the sake of traditions),<sup>77</sup> «Հայրս սասց՝ այլևս դպրոց չեմ գնա, որովհետև որոշել էին ամուսնացնել ինձ» (My father told me I won’t go to school anymore because they had decided to

<sup>71</sup> <http://lurer.com/?p=33364&l=am> (attached 15.03.2017).

<sup>72</sup> <http://www.tert.am/am/news/2012/07/27/ezdi-tamoyan/555108> (attached 25.03.2017).

<sup>73</sup> <http://kristinahasoyan.blog.ru/158852995.html> (attached 12.01.2017); <http://blognews.am/arm/news/16275/es-20-tarekan-em-bayc-indz-chem-hamarum-pirasa.html> (attached 12.01.2017).

<sup>74</sup> <http://www.panarmenian.net/arm/news/119027/> (attached 06.12.2016).

<sup>75</sup> [http://www.7or.am/am/news/view/38517?fb\\_comment\\_id=10151274991296055\\_25004499](http://www.7or.am/am/news/view/38517?fb_comment_id=10151274991296055_25004499) (attached 20.02.2017).

<sup>76</sup> <http://medialab.am/news/id/823> (attached 19.02.2017).

<sup>77</sup> <http://medialab.am/news/id/774> (attached 19.02.2017).



make me marry)<sup>78</sup>, Եզդի կնոջ կրթության հարցն առկախ է (“The issue of education of Yezidi women is pending”).<sup>79</sup>

Obviously, in a peaceful environment, the Yezidi women had relative freedom inside the community and within the family. Due to some historical events the demand emerged for more reserved women in the sake of their protection which subsequently led to further inequalities. This situation is involuntarily moving on.

It should be noted that the image of Nadia Murad can also make influence on Yezidi women. Nadia Murad is the survivor of 2014 Sinjar Yezidi Genocide, who escaped Islamic State slavery. In 2016 she won Sakharov Prize.<sup>80</sup> She became an activist after her release from slavery of the Islamic State. She has the image of a woman who is not protected within the clan/family, but is protected under international law, woman who takes revenge after genocide, not by killing people, but just by telling her story to the world. Today new generation of Yezidi young educated girls and women in Armenia started to develop. Due to their persistence and support of their families they were able to overcome many obstacles in the Yezidi community and try to strengthen their unique place and role. They also try to change the image of Yezidi women and some of them can even become role models for the others. Though a new generation of female intellectuals is being formed, many Yezidi families make their daughters marry at an early age. To support the process of empowerment it may be useful to raise and discuss the image Yezidi of women they had throughout history and to familiarize Yezidi women with their rights.

#### Résumé

**Keywords:** women, Yezidi, image, genocide, education, marriage

In the article the discourse used by scholars and Western travelers to describe Yezidi women was addressed. Additionally, quite free image of Yezidi women in Armenian sources and literature and the image of women in Yezidi folklore and religion were also discussed. In Soviet Armenia a new image of Yezidi women developed, “working and building socialism”. After the fall of Soviet Union the activity of Yezidi women decreased and their position degraded. Though new generation of Yezidi educated girls and women try to change that and shape a new image of Yezidi women, many Yezidi girls are still deprived of the opportunity to get education – most leave school and marry at an early age.

---

<sup>78</sup> <http://dengeezdia.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%BD-%D5%A1%D5%BD%D5%A1%D6%81%D5%9D-%D5%A1%D5%B5%D5%AC%D6%87%D5%BD-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81-%D5%B9%D5%A5%D5%B4-%D5%A3%D5%B6%D5%A1-%D5%B8%D6%80%D5%B8%D5%BE%D5%B0/> (attached 19.02.2017).

<sup>79</sup> <http://www.aravot.am/2015/12/24/642228/> (attached 22.02.2017).

<sup>80</sup> <http://www.europarl.europa.eu/news/en/news-room/20161024STO48414/nadia-murad-and-lamiya-aji-bashar-winners-of-2016-sakharov-prize> (attached 11.04.2017).

## Bibliography

- Ամրյան Թ., Ճգնաձեւը եզդիականության մեջ, Արևելագիտության հարցեր, հ. 8, Երևան, 2013, էջ 323-332:
- Ամրյան Թ., *Իմ եզդի նախատատերը. նրանք տեսել էին Հայոց ցեղասպանությունը*, Հայ զինվոր, 2015, Ապրիլ 23-29, էջ 14-15; <http://www.hayzinvor.am/31463.html> (attached 25.03.2017):
- Ասատրյան Գ., Փոլադյան Ա., *Եզդիների դավանանքը*, Պատմաբանասիրական հանդես, № 4, Երևան, 1989, էջ 131-150:
- Ավդալ Ա., *Անդրկովկասյան քրդերի կենցաղը*, Երևան, 1954:
- Ավդալ Ա., *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006:
- Գիւրջեան Ա., *Եզդի քրդեր*, Լուսալ, 1904, հունվար-փետրվար, № 1, էջ 75-93:
- Ջնդի Հ., *Գառ ու Քուրուկե Սլեմանե Սլիվի*, Երևան, 1941:
- Տէր-Մանուէլյան Ս., *Եզդի-կուրմանժ*, Ախալցխա, 1910:
- Դաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1985:
- Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010.
- Asatrian G., Arakelova V., *The Yezidi Pantheon*, Iran and the Caucasus, Vol. 8.2, Leiden, 2004, pp. 231-279.
- Driver G. R., The Religion of the Kurds, Bulletin of the School of Oriental Studies, University of London, Vol. 2, No. 2 (1922), pp. 197-213.
- Forbes F., *A Visit to the Sinjâr Hills in 1838, with Some Account of the Sect of Yezîdîs, and of Various Places in the Mesopotamian Desert, between the Rivers Tigris and Khâbûr*, The Journal of the Royal Geographical Society of London, Vol. 9 1839.
- Guest J., *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987.
- Joseph I., Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz, Boston, 1919.
- Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995.
- Layard A., Nineveh and its Remains, Paris, Baudry's European Library, 1850.
- Parry O., *Six Months in a Syrian Monastery*, London, 1895.
- Spät E., *Shahid bin Jarr, Forefather of the Yezidis and the Gnostic Seed of Seth*, Iran and the Caucasus, Vol. 6.1-2, Leiden, 2002, pp. 27-56.
- Аһмәде Горе, Дәнге кал-баве мә, Ереван, 1997.
- Карлене Чачани, *Пьзмамтийа щьмә 'та әрмәнийа у к'орда*, Ереван, 1977.
- Карлене Чачани, Дьл у вәт'ән, Ереван, 1962.
- Әзизе Әмә'р, *Ә'д'бйата Әздики (кьтева дәрса)*, Р'әван, 2005.

## Web sites

- <https://news.am/arm/news/115033.html> (attached 15.03.2017);
- <http://www.tert.am/am/news/2012/07/27/yezidi-marriage-age/555227> (attached 18.04.2017)
- <http://lurer.com/?p=33364&l=am> (attached 15.03.2017)

<http://www.tert.am/am/news/2012/07/27/ezdi-tamoyan/555108> (attached 25.03.2017).

<http://kristinahasoyan.blog.ru/158852995.html> (attached 12.01.2017).

<http://blognews.am/arm/news/16275/es-20-tarekan-em-bayc-indz-chem-hamarum-pirasa.html> (attached 12.01.2017).

<http://www.panarmenian.net/arm/news/119027/> (attached 06.12.2016).

[http://www.7or.am/am/news/view/38517?fb\\_comment\\_id=10151274991296055\\_25004499](http://www.7or.am/am/news/view/38517?fb_comment_id=10151274991296055_25004499) (attached 20.02.2017).

<http://medialab.am/news/id/823> (attached 19.02.2017).

<http://medialab.am/news/id/774> (attached 19.02.2017).

<http://dengeezdia.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%BD-%D5%A1%D5%BD%D5%A1%D6%81%D5%9D-%D5%A1%D5%B5%D5%AC%D6%87%D5%BD-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81-%D5%B9%D5%A5%D5%B4-%D5%A3%D5%B6%D5%A1-%D5%B8%D6%80%D5%B8%D5%BE%D5%B0/> (attached 19.02.2017).

<http://www.aravot.am/2015/12/24/642228/> (attached 22.02.2017).

<http://www.europarl.europa.eu/news/en/news-room/20161024STO48414/nadia-murad-and-lamiya-aji-bashar-winners-of-2016-sakharov-prize> (attached 11.04.2017).

ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոն,  
ՀՀ Պաշտպանության նախարարություն,

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ  
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

Վերջին ժամանակներում աշխատանքին և դրան բնորոշ հոգեբանական յուրահատկություններին վերաբերող հարցերը հասարակության կողմից ակտիվ քննարկման առարկա են դարձել: Ներկայում աշխարհում նկատվում է կանանց ակտիվ ներգրավվածություն տնտեսական, քաղաքական, սոցիալական ոլորտներում, կանայք աշխատանքային գործունեության ծավալելիս ձգտում են կարիերային աճի, զարգացման, ինքնադրսևորման: Վերջին տասնամյակներում զբաղվածության ոլորտում կնոջ ակտիվության բաժրացումը օրենքով և սոցիալական պրակտիկաներով չէր ամրապնդվում: Հասարակական գործընթացները նպաստել են զբաղվածության ոլորտում սեռերի ներգրավվածության տարբերությունների ձևավորմանը, սակայն այժմ կնոջ պահանջարկը մեծ է աշխատաշուկայում, ժամանակակից կյանքը պահանջում է կնոջ աշխատուժի ակտիվ ներգրավվածություն:

**Բանալի բառեր**

Գենդերային դերեր, ստերեոտիպներ, պատկերացումներ, աշխատանքային վարք, աշխատանքային վարքի ստրատեգիաներ:

**Ключевые слова**

Гендерные роли, стереотипы, представления, трудовое поведение, стратегии трудового поведения.

**Keywords**

Gender roles, gender stereotypes, gender beliefs, working behavior, strategies of working behavior.

Ներկա ժամանակներում սկսվել են հետազոտություններ անցկացվել, որոնք ուղղված են բացահայտել կանանց և տղամարդկանց աշխատանքային վարքը: Այժմ աշխատանքային վարքի գենդերային ասպեկտները հետազոտվում են հոգեբանության, սոցիոլոգիայի,

աշխատանքային տնտեսագիտության դիսցիպլիններում: Մեր պրակտիկայում քիչ են ուսումնասիրությունները աշխատանքային վարքի գենդերային ասպեկտների վերաբերյալ: Ուստի, մենք **նպատակ** ունենք բացահայտել աշխատանքային վարքի ստրատեգիաների գենդերային առանձնահատկությունները: Մեր առջև **խնդիր** ենք դրել ուսումնասիրել գենդերային դերերը և պատկերացումները, աշխատանքային վարքի սահմանումները, դուրս բերել աշխատանքային վարքի տեսակներ, աշխատանքային վարքի ստրատեգիաների ընտրության գենդերային նմանությունները և տարբերությունները:

### **Գենդերային դերեր, ստերեոտիպեր և պատկերացումներ: Գենդերային կոմպենտենտություն**

**Գենդերային դերը** անձի գենդերային սոցիալիզացիայի մեխանիզմներից է: Գենդերային դեր ասելով հասկանում ենք վարքի որոշակի ձև՝ համապատասխան սոցիալական նորմերին, սպասելիքներին, վերագրումներին, որոնք ընդունվում և յուրացվում են սեռերի կողմից: Գենդերային դերերը կապված են գենդերային ստերեոտիպերի հետ, որոնք կանացի և առնական վարքի և բնավորության գծերի ստանդարտացված պատկերացումներ են, իսկ դրանք իրենց հերթին կարող են լինել ընդհանրացված և սխալ<sup>81</sup>: Սոցիալական հոգեբաններից շատերը գտնում են, որ ավանդական գենդերային դերերը սահմանափակում են անձի զարգացումը և հանգեցնում սոցիալական անհավասարության: Կարծում են, որ տղամարդկանց և կանանց ավանդական դերերը փոխլրացնում են միմյանց և կապված են նրանց կենսաբանական տարբերություններից: Շատերի կարծիքով, կանայք հավասար չեն տղամարդկանց կարգավիճակով, աշխատանքի վարձատրությամբ, հասարակական դիրքով, իշխանությամբ: Նման կերպ՝ կանանց դերերը սահմանափակվում են, կանայք ավելի հաճախ են ենթարկվում սեռական բռնության: Այն, որ հասարակության մեջ կանանց գնահատում են միայն իրենց երիտասարդության, բարետեսության, հմայքի համար, կանացից շատերի մոտ առաջացնում է թերարժեքության զգացում, ցածր ինքնագնահատական:

Հասարակության գիտակցության մեջ կինը համեմատած տղամարդու ցածրահասակ է, փոքրամարմին, նեղ ուսերով, լայն կոնքերով, թույլ մկանային համակարգով: Տարածված է նաև այն կարծիքը, որ կինը ավելի դիմացկուն է անբարենպաստ կլիմայական պայմաններում: Տղամարդիկ ագրեսիվ են, դոմինանտող, ինքնավստահ, ինքնուրույն, անկախ, քաջ, կոպիտ, ակտիվ, տրամաբանական մտածողությամբ, իսկ կնոջը բնորոշ է կախվածությունը, վախկոտությունը, երազկոտությունը, կասկածամտությունը, սնահավատությունը, էմպաթիան, տազնապալիությունը, հուզականությունը:

**Ի. Բրովերմանը** ուսումնասիրելով կանացի և առնական բնութագրումները կլինիկական ոլորտում աշխատող հոգեթերապևտների և սոցիալական աշխատողների մոտ,

<sup>81</sup> **Берн III.** Гендерная психология. Законы мужского и женского поведения. СПб. ПраймЕВРОЗНАК, 2008

ելել է այն համոզման, որ նրանք ունեն ընդհանուր դիրքորոշվածություն, որ տղամարդիկ ավելի կոմպենստենտ են, քան կանայք, վերջիններիս բնորոշ է լսելու ունակությունը, ազդեցիկությունը, արտաքին ներագոմանք ենթարկվելը, նվազ օբյեկտիվությունը, աննշան դեպքերից գրգռվողականությունը<sup>82</sup> :

Գենդերային ստերեոտիպերի վերջին հետազոտությունների արդյունքում (**Printice, Carronce, 2002**) դուրս են բերվել առանձնահատկություններ, որոնք տիպիկ կամ տիպիկ չեն կնոջը և տղամարդուն: Ցանկալի կանացի հատկանիշներն են՝ բարություն, հուսալիություն, երեխաներով հետաքրքրվածություն, զգայունություն, ընկերասիրություն, կոկիկություն, արատաքին տեսքի հանդեպ ուշադրություն, հուզականություն, հմայք, երեխայական լինելը, միամտություն, անվաստահություն, ամաչկոտություն: Ոչ ցանկալի կանացի հատկանիշներն են՝ խելացիություն, չարակամություն, էսասիրություն, հումորասեր, սկզբունքայնություն, համառություն, ապագայի հանդեպ ուղղված հայացքով, ինքնավստահ, հպարտ: Հետաքրքիրն այն է, որ կազմելով սեփական անհատական պատկերը, 25 % կանայք օգտագործել են այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են տղամարդուն տիպիկ առանձնահատկություններին, նույն %ով տղամարդիկ բնութագրել են իրենց կանացի հատկանիշներով:

**Վ. Գորչակովան (2000)** իր հետազոտությունների արդյունքում դուրս բերեց, որ մասսայի ստերեոտիպային գիտակցության մեջ կինը ընկալվում է որպես գեղագիտական ֆունկցիաների կրող, ինչի մասին վկայում են կանանց 60 %ը, տղամարդկանց՝ 68 %ը: Տղամարդը հասարակության գիտակցության մեջ պետք է լինի առնական, ուժեղ, հուսալի: Այդպես են կարծում տղամարդկանց 61 %ը, կանանց 69 %ը:

Գենդերային ստերեոտիպերը ընկած են նաև այն դերերի մեջ, որոնք խաղում են կանայք և տղամարդիկ գործունեության տարբեր ոլորտներում:

**Առաջինը ընտանիքում դրսևորվող դերերն են:** Կինը նշանակալից է տնային տնտեսուհու և մոր դերում, իսկ տղամարդը ընտանիքին նյութապես ապահովելու, մասնագիտական հաջողություններին հասնելու դերում:

**Երկրորդը մասնագիտական գործունեության մեջ դրսևորվող դերերն են:** Կանանց վերագրվում են կատարողական և ծառայողական գործունեությունները՝ կրթություն, առողջապահություն, առևտուր, սոցիալկենցաղային, իսկ տղամարդկանց՝ գործիքային ոլորտի, տեխնիկայի, ստեղծագործական և կազմակերպչական, կառավարման, ֆիզիկական աշխատանքի:

**Երրորդ՝ քաղաքական գործունեություն,** որտեղ մեծամասնության կարծիքով, կինը անելիք չունի:

---

<sup>82</sup> **Ильин Е.П.** Пол и гендер. СПб.: Питер, 2010. էջ 70

**Ձ. Մանին և Պ. Թակերը** գտնում են, որ գենդերային ստերեոտիպերը դրական նշանակություն ունեն: Դրանք ապահովում են միջաձևային և միջխբային փոխհասկացումն ու համագործակցումը: Գենդերային ստերեոտիպերը մի կողմից պետք է ռիզիկո լինեն, մյուս կողմից՝ ճկուն, այսինքն, մի կողմից ապահովեն կայուն պատկերացումներ, մյուս կողմից՝ չդադարեցնեն հասարակության զարգացումը: Բնությունը հոգ է տարել այն մասին, որ կանայք իրենց էներգիայի մաքսիմումը տան ընտանիքին, որպեսզի տղամարդիկ զբաղվեն հասարակական գործունեությամբ, որը ոչ միայն ֆիզիկական ուժ է պահանջում, այլ նաև քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտական գործունեությամբ զբաղվելու որակներ<sup>83</sup>: Նմանատիպ շեշտադրումները սեռային տարբերությունների վրա, կանացիի և առնականի ավանդական հակադրումը իրականացվում է հին ժամանակներից սկսված, որը սակայն իր թերություններն ունի: Պետք է հաշվի առնել, որ տղամարդկանց և կանանց միջև տարբերությունները չափազանցված և ժխտողական բնույթ ունեն:

**Ֆ. Ջեյսը** ենթադրում է, որ գենդերային ստերեոտիպերի ամրապնդումը նպաստում է տղամարդկանց դոմինանտությանը, կանանց՝ խտրականությանը: Բացի այդ կան նոր տեսակետներ, որ ավանդական սեռային դերերը սահմանափակում են ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց: Դրանք հոգեկան լարվածության առաջացման աղբյուր են: Այն կանայք և տղամարդիկ, ովքեր չեն հետևում, չեն ընդունում ստերեոտիպերը, ենթարկվում են հասարակական քննադատությանը: Պետք է սակայն ընդունել, որ դրանք շատ հաճախ աղճատում են իրականության պատկերը<sup>84</sup> :

Ստերեոտիպերի առաջին բացասական ազդեցությունը չափազանցվածությունն է, քանի որ կնոջ և տղամարդու միջև տարբերությունները ավելի շատ են ընդգծվում, քան դրանք իրականում կան: Ապացուցված է, որ կանայք և տղամարդիկ գենդերային տարբերություններին էական նշանակություն են տալիս այն ժամանակ, երբ իրենց սեռը դրական գնահատականի է արժանանում, իսկ բացասական գնահատականի ժամանակ փորձում են այդ տարբերությունները մինիմալի **հասցնել (Eagly, Mladnic, 1989)** : Երկրորդ բացասական ազդեցությունը այն է, որ միննույն իրավիճակը մեկնաբանվում և գնահատվում է սեռային պատկանելիությունից ելնելով: Երրորդ բացասական ազդեցությունը կայանում է նրանում, որ գենդերային ստերեոտիպերը խոչընդոտում են այն որակների զարգացմանը, որոնք չեն համապատասխանում իր սեռադերային պատկերացումներին:

**Կ. Դեոն (Deaux, 1976)** նշում է, որ աշխատանքում բարձր արդյունքի հասնելը, եթե իրականացվում է տղամարդու կողմից, վերագրվում է նրա ընդունակություններին, իսկ կնոջ դեպքում՝ նրանց ջանքերին, պատահական հաջողություններին: Որոշ տվյալների համաձայն, կանայք նախատրամադրված են իրենց դեմ, օրինակ՝ գիտական ոլորտում նախապատվությունը տալով տղամարդկանց (**Goldberg P. 1968**): Գոյություն ունեն նաև

<sup>83</sup> **Ильин Е.П.** Пол и гендер. СПб.: Питер, 2010. էջ 78

<sup>84</sup> **Ильин Е.П.** Пол и гендер. СПб.: Питер, 2010. էջ 79.

այնպիսի հետազոտական տվյալներ, ըստ որի, կանայք խտրականության ենթարկվում են մասկուլին բնույթի աշխատանք կատարելիս, իսկ տղամարդիկ՝ ֆեմինին (**Davidson, Barke, 2000**) :

**Գենդերային կոմպենտենտությունը** անձի բնութագրիչներից է, որը թույլ է տալիս լինել արդյունավետ գենդերային հարաբերությունների ոլորտում: Այն այնպիսի առանձնահատկություն է, որը թույլ չի տալիս անձին գենդերային անհավասարության ժամանակ լինել օբյեկտ և սուբյեկտ: Այլ կերպ ասած, գենդերային անհավասարությունը կանանց և տղամարդկանց ընդունակությունն է նկատելու գենդերային անհավասարությունները:

Գենդերային կոմպենտենտ կարելի է համարել այն անձին, ում բնորոշ են էգալիտար գենդերային պատկերացումները, ում մոտ արտահայտված չեն գենդերային ստերեոտիպերը, նախապաշարմունքները, ում բնորոշ է իր և հակառակ սեռի հետ համագործակցությունը և փոխհարաբերությունները<sup>85</sup> :

**Գենդերային պատկերացումները** սոցիալական ենթատեքստով պայմանավորված հասկացություններ, հայացքներ, բացատրություններ են, հասարակությունում տղամարդկանց և կանանց դերերի բաշխման և կարգավիճակի հաստատման համար: Գենդերային պատկերացումները գիտելիքներ են այն մասին, թե ինչպիսի դերեր պետք է իրականացնեն կանայք և տղամարդիկ կոնկրետ սոցիալական պայմաններում, ինչպիսին է նրանց նշանակությունը, ինչպիսի վարքային մոդելներ նրանք պետք է կիրառեն միջավայրում: Այսպիսի գիտելիքներ ձեռք են բերվում մարդկանց հետ շփման և փոխազդեցության գործընթացում:

Գենդերային պատկերացումները տվյալ հասարակությունում գործող գենդերային գաղափարախոսության արդյունք են: Գենդերային գաղափարախոսությունը կանանց և տղամարդկանց սոցիալական կարգավիճակի և դերային բովանդակությունների մասին հայացքների և պատկերացումների համաձայնեցված համակարգ է, որին պետք է հետևել որպես հասարակության անդամներ<sup>86</sup>:

Գենդերային գաղափարախոսությունը սեռերի միջև հաստատված հարաբերությունների մոդելների պահպանումն է, այն նաև սոցիալական կազմակերպվածության մեխանիզմ է: Պատկերացումները դիտարկում են գենդերային գաղափարախոսության տիպերին համապատասխան: Դրանք են՝ *ավանդական և էգալիտար* պատկերացումներ, որոնք ունեն տարբեր բովանդակություններ:

<sup>85</sup> **Под ред. И.С.Клецкина**/Гендерная психология. Практикум.2е изд.. Спб: Питер, 2009. 496с.

<sup>86</sup> **Под ред. И.С.Клецкина**/Гендерная психология. Практикум.2е изд.. Спб: Питер, 2009. էջ 318.



**Էզալիտար պատկերացումների համաձայն**, կանայք և տղամարդիկ՝ որպես տվյալ սոցիալական խմբի ներկայացուցիչներ, նման են միմյանց: Հետևաբար, հիմքեր չկան տարբերակելու նաև կանանց և տղամարդկանց դերերը, քանի որ դրանք նման են և փոխարինելի: Հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային տարբերակումները և բևեռացումները կեսաբանորեն չեն հիմնավորվում, այլ սոցիալական կառուցվածքավորման արդյունք են:

**Ավանդական պատկերացումների համապատասխան**, տղամարդկանց և կանանց անձնային բնորոշումների և սոցիալական դերերի միջև տարբերություններ կան, դրանք միմյանց հակասում են: Կենսաբանական սեռային տարբերությունները տեղափոխվում են սոցիալական ոլորտ: Դրանից ելնելով առանձնացնում են հատուկ տղամարդկանց և հատուկ կանանց դերեր, որոնք եթե կատարվում են տղամարդու կողմից, չեն կարող կատարվել կանանց կողմից, և ընդհակառակը:

**Էզալիտար գենդերային պատկերացումների** համաձայն տղամարդկանց և կանանց կարգավիճակները, դիրքերը չպետք է հիեարխիկ սկզբունքով դասավորվեն, այլ պետք է հաստատվեն հավասար իրավունքների, հնարավորությունների դաշտում:

**Ավանդական պատկերացումների համաձայն** տղամարդիկ պետք է լիդերի կարգավիճակ գրավեն, դոմինանտող լինեն տարբեր սոցիալական կազմակերպություններում, հասարակական կառույցներում: Տղամարդիկ պետք է բարձր պաշտոններ գրավեն, քանի որ նրանք, համեմատած կանանց, կատարյալ են անձնային պլանում<sup>87</sup>:

Համաձայն էզալիտար գենդերային պատկերացումների, յուրաքանչյուր սեռի կենսաբանական յուրահատկությունները չեն կարող գենդերային անհավասարության պատճառներ լինեն: Գենդերային մոտեցման ժամանակ կարևոր են սոցիոմշակութային գնահատականները և մեկնաբանությունները, ինչպես նաև գլխավոր համակարգի փոփոխությունները:

Ավանդական պատկերացումների համաձայն, կանանց և տղամարդկանց միջև կենսաբանական տարբերությունները հիմնարար են, ուստի տղամարդու գերիշխանությունը բանական և օրինաչափ երևույթ է:

### **Աշխատանքային վարքի սահմանումները, կառուցվածքը, տեսակները, մոդելները**

Գրականության մեջ կարող ենք հանդիպել աշխատանքային վարքի բազում սահմանումներ: Աշխատանքային վարքը հաճախ դիտարկում են որպես հասարակական վարքի տեսակ: Նմանատիպ սահմանումներ կհանդիպենք մի շարք սոցիոլոգիական

---

<sup>87</sup> Նույն տեղում

գրքերում: Այն ավելի շատ ուսումնասիրված է սոցիոլոգիական հետազոտություններում, ավելի շատ վերլուծված է սոցիոլոգների, տնտեսագետների կողմից:

25 տարեկանում հասարակությունը անձից սպասում է ամուսնանալ, աշխատանքային գործունեություն ծավալել: Փաստորեն այս տարիքում անձի ակտուալ գործունեություններն են համարվում ընտանիք կազմելը և աշխատելը: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները մինչև 25-30 տարեկան շրջանը մասնագիտական կողմնորոշման փուլ է, մասնագիտության ընտրությունը դեռ շարունակվում է, հետագայում կայուն բնույթ է ձեռք բերում: Մի շարք հեղինակներ գտնում են, որ 30 տարեկանում մարդիկ իրենց ողջ ջանքերը ներդնում են աշխատանքում՝ կոմպենսացնելով ընտանիքում կորցված երջանկությունը: Մարդիկ ձգտում են ավելիին հասնել մասնագիտության մեջ, ավելի արդյունավետ աշխատել: Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ առաջին լուրջ աշխատելու, մասնագիտություն ձեռք բերելու պահանջմունքերը ի հայտ են գալիս պատանեկության տարիքում:<sup>88</sup> Ընդ որում, մեր մշակույթում տղամարդկանց մոտ այդ պահանջմունքները ավելի վաղ են դրսևորվում, քան կանանց, քանի որ հասարակության մեջ գոյություն ունեն պատկերացումներ այն մասին, որ տղամարդն է ընտանիքում որոշում ֆինանսական հարցերը: Իսկ կանանց մոտ ավելի վաղ դրսևորվում են ամուսնանալու, ընտանիք կազմելու պահանջմունքերը: Սակայն թույլ տվեք նշել, որ վերջին ժամանակներում կանանց պատկերացումները աշխատանքի մասին փոխվել են, նրանք սկել են պայքարել իրենց աշխատանքային իրավունքների համար:

Սոցիալական վարքը սոցիալական միջավայրի արտադրական կոմպոնենտն է: Այն մարդու սուբյեկտիվորեն դետերմինացված ակտիվության արդյունքն է՝ արտացոլված անձի գործողություններում, անձնային առանձնահատկություններում: Մի կողմից այն մարդու միջավայրին հարմարվելու համակարգ է, մի այլ կողմից արժեքների և պատկերացումների վրա հիմնվելով՝ հասարակությունը փոխելու միջոց: Սոցիալական վարքի տարատեսակներից է աշխատաքնային գործունեությունը և աշխատանքային վարքը:

Աշխատանքային գործունեությունը ժամանակի և տարածության մեջ ֆիքսված գործողությունների և գործառույթների շարք, որն իրականացվում է կազմակերպության աշխատակիցների կողմից:

Աշխատանքային վարքը անհատական և խմբային մակարդակում իրականացվող գործողություններն են, որոնք ցույց են տալիս մարդկային գործոնի իրականացման ուղղվածությունը ու ինտենսիվությունը: Այն գիտակցված գործողությունների և արարքների ամբողջություն է՝ կապված կազմակերպության հետաքրքրությունների, պրոֆեսիոնալ հնարավորությունների, իրականացվող գործունեության հետ: Աշխատաքնային վարքը

<sup>88</sup> Худоян С.С. Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. Ер.,: Зангак-97, 2010, էջ 83-84

ինքնակարգավորման, ինքնակառավարման գործընթաց է, որն կախված է անձնային նույնականությունից:

**Վ. Ի. Վեխովինը** գտնում է, որ աշխատանքային վարքը մարդու գիտակցված գործողությունների և արաքների կոմպլեքս է՝ նրա մասնագիտական հնարավորությունների և սոցիալ-տնտեսական արտադրական գործընթացներին համապատասխան:

**Վ. Ա. Յադովը** գտնում է, որ աշխատանքային վարքը աշխատանքային գործունեության որոշակի հաջորդականություն ենթադրող, արտաքին գործողություն է:

**Ի. Ա. Կուկովան** գտնում է, որ աշխատանքային վարքը նյութական և հոգևոր բարեկեցության ստեղծման, կարիքներ հոգալուն ուղղված գիտակցված գործողություն ու արարք է:

**Ըստ Ս. Մ. Ֆիշմանի**, աշխատանքային վարքը կազմակերպության աշխատակիցների ռեակցիան է ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, արտադրողական, տեխնոլոգիական, կառավարման իրավիճակային և կայուն աշխատանքային գործոնների ազդեցությանը:

**Ըստ Ն.Բ. Շատալովայի**, աշխատանքային վարքը աշխատակիցների աշխատանքային պոտենցիալների պրակտիկ դրսևորում է առարկայական ոլորտում:

Ներկա ժամանակներում աշխատանքային ակտիվությունը սահմանվում է ձգտում դեպի նորարությունները, արտադրական որակի նկատմամբ բարձր պահանջները, կազմակերպչական իրավասությունը: Գոյություն ունի ևս մեկ պատկերացում, համաձայն որի, աշխատանքային վարքը դիտարկվում է որպես աշխատանքային գործունեության ընթացքում ինտելեկտուալ և ֆիզիկական աշխատուժի իրականացում:

Աշխատանքային ակտիվությունը աշխատանքային սուբյեկտների պահանջմունքների բավարարմանը ուղղված, աշխատանքային միջավայրի վրա ազդեցության նպատակառոտղված, գիտակցված ձև է: **Կորոյովի** տեսանկյունից աշխատանքային ակտիվության գործոններն են.

1. սոցիալ-աշխատանքային հարաբերություններ,
2. աշխատանքային վարք,
3. աշխատանքի նկատմամբ վերաբերմունք,
4. օբյեկտիվ աշխատանքային պայմաններ,
5. աշխատանքից բավարարվածության զգացում,
6. աշխատակցի աշխատանքային կյանքի որակ:

Ինչպես նկատեցինք, այստեղ աշխատանքային վարքը սահմանվում է որպես աշխատանքային ակտիվության գործոն<sup>89</sup> :

**Աղամչուկը, Սորոկինը, Ռոմաշովը** տալիս են աշխատանքային վարքի կառուցվածքի տարրերը:

**Աշխատանքային վարքի կառուցվածք.**

1. ցիկլիկ կրկնվող գործողություններ, որոնք նույնատիպ արդյունքի են բերում, վերարտադրում են ստանդարտ իրավիճակներ և վիճակներ,
2. մարզինալ գործողություններ և արարքներ, որոնք ձևավորվում են մի կարգավիճակից մյուսին անցնելու ժամանակ,
3. վարքային սխեմաներ, կարծրատիպեր, կրկնվող վարքային ձևեր,
4. կայուն համոզմունքների վերածված, իմաստային սխեմաների վրա հիմնված գործողություններ,
5. տարբեր իրավիճակների ազդեցության տակ իրականացվող գործողություններ,
6. հուզական վիճակի ազդեցության տակ իրականացրած ինքնաբուխ գործողություններ,
7. մասսայական կամ խմբային վարքի կրկնվող գործողություններ,
8. այլ համոզմունքներ և դիրքորոշումներ ունեցող սուբյեկտների վրա ազդեցության տրասֆորմացիաները որպես գործողություններ:

**Ըստ նրանց, առարկայական վարքը կարելի է տարբերակել հետևյալ չափանիշներով.**

1. առարկայական, նպատակային ուղղվածությամբ
2. նպատակին հասնելու տարածաժամանակային հեռանկարով
3. կոնտեքստի մեջ դիտարելով (կոմունիկացիոն համակարգ, միջավայրի կայուն գործոններ)
4. խորքային և ռացիոնալիզացված
5. ստրատեգիկ

**Աշխատանքային վարքի տեսակներն են՝**

1. կոլեկտիվ-ինդիվիդուալ,
2. փոխազդեցություն պահանջող-չպահանջող,
3. կատարողական-կառավարման,
4. նախաձեռնողական-պատճառավորված,
5. նորմատիվ-ոչ նորմատիվ<sup>90</sup> :

<sup>89</sup> **Попов А.В.**. Трудовая активность как основа трудового поведения населения/Молодой ученый.-2012-С.

Էջ 151-158 /[www.moluch.ru.archive/45/5456/](http://www.moluch.ru.archive/45/5456/)

Աշխատանքային վարքը գործողությունների ամբողջություն է, որն օգնում է աշխատողին ներգրավվել աշխատանքային պրոցեսում: Մենջերներն ու հոգեբանները ուսումնասիրել են աշխատակիցների վարքը նոր աշխատանքային պայմանների ժամանակ և դուրս են բերել աշխատանքային վարքը պայմանավորող գործոններ: Դրանք են.

1. Սոցիալ-մշակութային գործոն, համաձայն որի հասարակության մեջ կամ սոցիալական խմբում գոյություն ունեն աշխատողի մասին որոշակի դիրքորոշումներ, նրանց համար սահմանվում են նորմեր, արժեքներ:
2. Աշխատանքային մոտիվացնող գործոններ, որոնց մեջ ներգրավվում են վարձատրությունը, կազմակերպությունը, աշխատանքային պայմանները,

Անձի սոցիալական նույնականության գործոն, որի տակ հասկանում ենք Ես-ի համապատասխան սոցիալական կատեգորիային պատկանելիություն:

**K. Davis, J.W. Newstrom** և այլոք կարևորում են դրական և բացասական օրինակների անհրաժեշտությունը աշխատանքային վարքի ձևավորման մեջ:

**Վ. Գերշիովայի և Բ. Թուֆկումսկովոյի** աշխատանքներում նկարագրված է աշխատանքային վարքի դրական և բացասական օրինակներ, որոնք բնորոշ են ժամանակակից Ռուսաստանին:

**Բացասական աշխատանքային վարքի մոդել** ունեցող աշխատողը ունի ցածր մոտիվացիա, անպատասխանատու է, պասիվ է, նեգատիվ վերաբերմունք ունի ուրիշների ակտիվության հանդեպ, ձգտում է մինիմալի հասցնել աշխատանքային ջանքերը:

**Աշխատանքային վարքի դրական մոդելը** կազմելիս փորձել են հիմնվել աշխատողի հետևյալ գծերի վրա.

1. սոցիալական փոփոխությունների նկատմամբ զգայունակություն և դրանք կանխատեսելու ունակություն,
2. միջավայրի սպասելիքներին համապատասխան գործելու ունակություն,
3. հաջողության հասնելու արտահայտված դիսպոզիցիա,
4. սոցիալական բարձր ռեֆլեքսիա,
5. վարքի կարգավորման բարձր մակարդակ,
6. բարձր սոցիալական կարգավիճակի ձգտում,
7. ինքնակատարելագործման ձգտում,

---

<sup>90</sup> **Адамчук В.В, О.В Ромашов, М.Е Сорокин.** Трудовое поведение: понятие и структура.//Экономика и социология труда: Учебник для вузов.-М.;Юнтин, 1999-407с./economuch.com/page/ekonomika/ist/ist-16-idz-ax265-mf-68.htm/

8. անձնային և մասնագիտական աճ,
9. աղեկվատ ինքնագնահատական,
10. սոցիալական ինտելեկտի զարգացվածություն,
11. բարդ իրավիճակների մարտահրավերներն ընունելու կարողություն,
12. ապագային ուղղվածություն,
13. վստահություն գալիք օրվա հանդեպ<sup>91</sup> :

*Այսպիսով, աշխատանքային վարքը դիտարկում են որպես հասարարական, սոցիալական վարքի, աշխատանքային ակտիվության տարատեսակ: Այն միշտ գիտակցված գործընթաց է և ուղղված է անձի ներքին պոտենցիալի, ֆիզիկական ուժի, կարողությունների, հետաքրքրությունների դրսևորելուն, նպատակների իրականացմանը, անձնական, ընտանեկան կարիքները հոգալուն, հասարակության զարգացմանը, կենսամակարդակի բարձրացմանը, բարեկեցության ապահովմանը և այլն: Այն պետք է համապատասխանի ժամանակակից կյանքի պահանջներին, իր մեջ ամփոփի կազմակերպության փիլիսոփայությունը: Կախված աշխատանքի բնույթից կարող են լինել անհատական, խմբային, դեկավարողի, ենթակայի, նախաձեռնողի, կատարողի և այլ տիպի աշխատանքային վարքի տեսակներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները:*

*Աշխատանքային վարքի կառուցվածքում տարբերակում ենք ցիկլիկ, ստանդարտ, մարզինալ, կրկնվող, իրավիճակային, կայուն, ինքնաբուխ, մասսայական գործողություններ:*

*Առանձնացվում են դրական և բացասական աշխատանքային վարքի մոդելներ, որոնք ձևավորվում են հասարակության մեջ և ազդում անձի վրա:*

**Ելնելով մի շարք վերլուծություններից, աշխատանքային վարքի ստրատեգիան համարում ենք կյանքի ոճի բաղկացուցիչ մաս և սահմանում որպես նպատակաուղղված աշխատանքային գործունեություն:**

Հիմնվելով գրականության վրա, առանձնացրել ենք հետևյալ աշխատանքային վարքի ստրատեգիաները.

1. *Զուգահեռ ևս մեկ այլ տեղ աշխատելու*
2. *Աշխատանքի փոփոխության*
3. *Արտագաղթ՝ աշխատանք գտնելու նպատակով*
4. *Կարիերային աճ*
5. *Մեկական գործով՝ բիզնեսով զբաղվել:*

<sup>91</sup> **Сатикова.С.В.** Социальная идентичность личности и трудовое поведение /rremark.ru/organizacionnaya-psichologiya/

## Կանանց և տղամարդկանց աշխատանքային վարքի ստրատեգիաների առանձնահատկությունները

**Տարտակովսկայան** նշում է, որ տնտեսական փոփոխությունները ավելացրել են հասարակության մեջ գործազուրկ կանանց և տղամարդկանց թիվը: Մոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում ի հայտ եկան այնպիսի միջեր, որոնք մատնանշում են կանանց՝ որպես բնակչության հիմնական գործազուրկների: Մակայն գիտականորեն հիմնավորված տվյալները ցույց են տվել, որ թե տղամարդկանց, թե կանանց գործազրկության ինդեքսները հավասար են, երբեմն նույնիսկ տղամարդիկ գործազուրկների մեծ տոկոս են կազմում: Հարց է ծագում ինչու՞ են ամրագրված և չամրագրված տվյալները այսքան տարբեր: Մի բան ակնհայտ է, որ տղամարդիկ և կանայք տարբեր ստրատեգիաներով են առաջնորդվում աշխատանքը կորցնելու ժամանակ: Ուստի անհրաժեշտություն ծագեց հասկանալ գործազուրկ կանանց և տղամարդկանց աշխատանքային ստրատեգիաները:

Նա ուսումնասիրեց 30 կանանց և 30 տղամարդկանց: Հետազոտությունն իրականացրեց խորքային հարցազրույցի օգնությամբ, որը նպատակ ուներ բացահայտել մարդկանց աշխատանքային կենսագրությունը: Հիմնվել է Կոննելի **գենդերային կարգերի** (gender order) մոդելի վրա, որը նկարագրում է կանացիության և առնականության ընդհանուր արքետիպերը: Ռուսաստանում կանանց համար նման բազային մոդել էր համարվում

«**աշխատող մայր**» գենդերային կարգը: Այդ կարգը ցույց էր տալիս կնոջ զբաղվածությունը աշխատաշուկայում, ինչպես նաև պարտականություններն ու պատասխանատվությունը ընտանեկան կյանքում: Ներկա ժամանակներում պետությունը դեռ չի կարողանում կարգավորել գենդերային քաղաքականության հարցերը: Այստեղ սկսում են մեծ նշանակություն ստանալ գենդերային պրակտիկաները, այսինքն փոքր սոցիալական խմբերում՝ բիզնեսում, կենցաղում սեռերի հարաբերությունների դրսևորումները<sup>92</sup>:

**Ըստ Ի. Ն. Տարտակովսկայայի**, ստրատեգիան անձի գիտակցված, մոտիվացված վարքն է՝ ուղղված իրականացնելու նպատակները, արժեքները, հետաքրքրությունները: Աշխատանքային ստրատեգիան դիտարկում է որպես կյանքի ստրատեգիայի մաս: Աշխատանքային վարքի ստրատեգիաների տիպեր դուրս բերելու համար սահմանում է հետևյալ չափանիշները.

1. մասնագիտական մոբիլության ինտենսիվություն,
2. դրդապատճառների մոբիլության առկայություն/բացակայություն,
3. որակավորում և վերապատրաստում պաշտոնի բարձրացման համար,

<sup>92</sup> **Тартаковская И. Н.** Гендерные аспекты стратегии безработных. 2002. 73-82

[/http://ecsocman.hse.ru/data/953/134/1217/008.TARTAKOVSKAYA.pdf](http://ecsocman.hse.ru/data/953/134/1217/008.TARTAKOVSKAYA.pdf)

4. մասնագիտացումը փոխելու պատրաստակամություն,
5. սոցիալական կապերի ծավալ և առկայություն,
6. ընտանեկան մոդելի ազդեցությունը աշխատանքային կարիերայի վրա՝ ուղղվածություն դեպի էգալիտար կամ ավանդական ընտանեկան մոդել,
7. նյութական աջակցության ակտերնատիվ աղբյուրներ,
8. աշխատանքային հնարավորությունների, մասնագիտական և կյանքի արժեքների գնահատում:

Այս չափանիշների վրա հիմնվելով դուրս է բերել հետևյալ աշխատանքային ստրատեգիայի տիպեր՝ կայուններ, ինքնակամ կոմերսանտներ, պրոֆեսիոնալներ, կերակրողներ, հեղոնիստներ, շրջանավարտներ, ունիվերսալներ, «չարչիներ»:

Հետո՝ առանձնացնում է գործոններ, որոնք ամբողջական ձևով արտացոլում են աշխատանքային ստրատեգիաները աշխատաշուկայում: Այդ գործոններն են՝ ինստիտուցիոնալ, դեմոգրաֆիկ, կենսագրական կամ արժեքային: Կանայք ավելի հաճախ են ենթարկվում խտրականության առաջին գործոնի դեպքում աշխատանքային գործակալություններ, տարբեր աշխատանքային կազմակերպություններ դիմելիս: Դեմոգրաֆիկ տվյալների համաձայն 50-ից բարձր տարիքային խմբին պատկանող անձինք ավելի շատ են ենթարկվում խտրականության՝ մասնագիտության առկայությունը միանշանակ չէ, քանի որ մի կողմից այն կարող է հնարավորություն ստեղծել աշխատանք գտնելու համար, մյուս կողմից սահմանափակել մարդուն այլ ոլորտներում աշխատելիս: Երրորդ գործոնի մեջ ներգրավվել են ընտանիքի աջակցությունն ու սոցիալական կապերի առկայությունը: Ընդ որում՝ ընտանիքը կարող է և լրացուցիչ օգնություն ցուցաբերել և խոչընդոտել աշխատանքի մոտիվացիային: Եթե ընտանիքը լրացուցիչ նյութական աջակցության կարիք ունի, անձը այդքան էլ ակտիվ չի լինի աշխատանքի փնտրման գործում, սակայն պահանջկոտ կլինի աշխատանքի բովանդակության, պայմանների նկատմամբ: Իսկ երբ ընտանիքը լուրջ կարիքների մեջ է, ապա անձը այդքան մեծ պահանջներ չի դնի աշխատանքի բովանդակության, մասնագիտությամբ աշխատելու համար, հաշվի չի առնի աշխատանքային ռեժիմը, պայմանները: Այստեղ են տղամարդու և կնոջ աշխատանքային վարքի հիմնական տարբերությունները արտահայտվում<sup>93</sup>:

Կինը, ավանդական պատկերացումների համաձայն, ենթարկվում է տղամարդու կամքին, հնարավոր է, որ ամուսնությունից հետո տղամարդը նրան չթողնի աշխատել կամ ընտանեկան հոգսերից ելնելով իր համար ընտրի այնպիսի աշխատանք, որը կարող է բավարարել միայն կարիքները: Իսկ տղամարդիկ հաճախ նախընտրում են գործազուրկ մնալ այնքան ժամանակ մինչև կգտնեն բարձր վարձատրվող գումար, կարիքեային աճի հնարավորություն տվող աշխատանք:

<sup>93</sup> Նույն տեղում



Մյուս գործոնի համաձայն, կանայք ունեն աշխատանքային, մասնագիտական բարձր մոտիվացիա, փորձում են համատեղել աշխատողի և մոր իրենց դերերը, իսկ տղամարդիկ պահանջկոտ են աշխատավարձի, աշխատանքի բովանդակության հարցում, հաճախ կարող են զիջել իրենց հայրական պարտականությունները և նվիրել իրենց շատ աշխատելուն, ֆինանսապես կայանալուն:

**Մեր կողմից իրականացված հետազոտական տվյալների համաձայն** կանայք նախապատվությունը տալիս են կարիերային աճի, իսկ տղամարդիկ՝ սեփական բիզնեսով զբաղվելու և արտագաղթելու աշխատանքային վարքի ռազմավարություններին: Կանանց համար մեծ կարևորություն ունի ինքնադրսևորման հեռանկարը, նույնիսկ մյուս աշխատանքային վարքի ռազմավարություններով առաջնորդվելիս՝ զուգահեռ մի քանի տեղ աշխատելով, աշխատանք փոփոխելիս, ձգտում են գտնել ինքնիրացման ճանապարհներ: Տղամարդկանց կարծիքով արտերկրում հեշտությամբ աշխատանք կգտնեն, ամեն դեպքում՝ ավելի լավ է արտերկրում աշխատել, քան առանց աշխատանք մնալ, աշխատանք ունենալու դեպքում՝ ցածր վարձատրվել: Տղամարդկանց մոտ անվստահություն կա պետական աշխատանքի նկատմամբ, ուստի, գերադասում են սեփական բիզնես սկսել, անկախանալ, ինքնուրույն աշխատել, նույնիսկ այն դեպքում, երբ մեր իրականության մեջ բիզնեսով զբաղվելու պայմանները բավարար չեն:<sup>94</sup>

**Միգրացիոն հոսքերի ֆեմինիզացիան**, բնորոշ է ժամանակակից աշխատուժի միջազգային միգրացիային: Դա մեծամասամբ պայմանավարված է գլոբալիզացիայի հետևանքով համաշխարհային տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: Զբաղվածության ոլորտում սպասարկման ծառայությունը պահանջարկ ունի այս ոլորտում չորակավորված աշխատողների: Նախկինում արտագաղթելը համարվում էր տղամարդկանց գործունեության մաս: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ արտագաղթած կանանց թիվը հավասարվել է տղամարդկանց թվաքանակին: Զարգացած երկրներում արտագաղթած կանայք աշխատում են հիմնականում ոչ ֆորմալ զբաղվածության վայրերում, հիմնականում՝ ժամանացային ոլորտում բարերում, ստրիպտիզ սկումբներում, տնային պայմաններում՝ դայակներ, սպասուհի, սեքս-ծառայություններում: Եթե կինը բացառում է սեքս-ծառայությամբ զբաղվելը, ապա արտասահմանում այլ գործով զբաղվելու հավանականությունը կտրուկ նվազում է: Երիտասարդ չամուսնացած աղջիկները ավելի շատ են արտագաղթում, չնայած որ նրանք իրենց վարքի հիմքում շեշտադրում են

<sup>94</sup> Ավելի մանրամասն, տե՛ս. **Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան**, Երիտասարդների աշխատանքային վարքի ռազմավարությունների ընտրության առանձնահատկությունները, էջ 163-176 /Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու),-Եր: Աստղիկ հրատ, 2016,-280 էջ

մասնագիտական գործունեությամբ զբաղվելու մոտիվը, այնուամենայնիվ, արտագաղթի իրական մոտիվը ամուսնանալու նպատակն է<sup>95</sup>:

Գենդերային անհավասարությունը աշխատանքային փոխատուցման մեջ սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների կարևոր խնդիրներից է: Տարբեր երկրներում կատարված ուսումնասիրություններ փաստում են, որ աշխատաշուկայում կանանց նկատմամբ խտրականություն կա, որ կանայք ենթարկվում են «բյուրեղյա առաստաղ» երևույթին: Կանայք ավելի շատ ժամանակ ծախսում են ընտանիքի վրա և այդ ընթացքում կորցնում են աշխատաշուկայում մնալու կարևոր որակները և հմտությունները, կանայք նախընտրում են հաճախ այնպիսի աշխատավայրերում աշխատել, որտեղ հմտություններ զարգացնելու մեծ պահանջներ դրված չեն, կամ ժամանակավոր են աշխատելու, ի տարբերություն տղամարդկանց, ովքեր միտված են մասնագիտական աճի: Մեկ այլ կողմից, գործատուին ձեռնտու չէ նաև աշխատողներ պահել, հետևաբար նախընտրում է տղամարդ-աշխատողներ ունենալ: Բացի այդ հայտնի է, որ կանայք ավելի պահանջկոտ են աշխատաքնային պայմանների, սոցիալական փաթեթների հանդեպ, ճկուն չեն աշխատաքային ժամերի հանդեպ ի տարբերություն տղամարդկանց:

Կարևոր է նշել նաև, որ կանայք ենթարկվում են խտրականության ոչ միայն փոխատուցման ժամանակ, այլ նաև աշխատանքի ընդունվելիս: Գրականության մեջ բացի «բյուրեղյա առաստաղ» հասկացությունից կա նաև «բյուրեղյա պատեր» հասկացությունը, երբ կանայք չեն կարող սահմանաված մակարդակից ավել մասնագիտորեն աճ գրանցել: Գոյություն ունի նաև «արտամղման էֆֆեկտ» երևույթը, երբ կանայք դուրս են մղվում տղամարդկանց բնորոշ աշխատավայրերից, որի հետևանքով «կանացի» աշխատավայրեր են ձևավորվում՝ ցածր աշխատաքային փոխատուցմամբ: Բացի այդ, հասարակության մեջ գոյություն ունի նաև նախքան աշխատաշուկա մտնելու խտրականություն, երբ կանայք և տղամարդիկ կրթություն ստանալու անհավասար հնարավորություններ ունեն կամ մասնագիտության սահմանափակ ընտրություն ունեն <sup>96</sup>:

**Դ. Նյումարկի և Ռ. Բանկի** հետազոտությունները ցույց են տվել, որ 50 տոկոս տղամարդկանց դեպքում բարձր վարձատրվող աշխատանքի են անցնում, 10 տոկոս դեպքերում՝ ցածր վարձատրվող: Կանանց մոտ համապատասխանաբար՝ 9-40, այսինքն, տղամարդկանց ավելի պրեստիժ և ավելի բարձր վարձատրվող աշխատանքներ են առաջարկում:

<sup>95</sup> Сатикова.С.В. Социальная идентичность личности и трудовое поведение /remark.ru/organizacionnaya-psichologiya

<sup>96</sup> Ошепков А.Ю. Гендерные различия в оплате труда в России. Экономический журнал ВЭШ N4/ 594-619

[https://www.hse.ru/data/2010/12/31/1208184729/10\\_04\\_03.pdf](https://www.hse.ru/data/2010/12/31/1208184729/10_04_03.pdf)

Հասուն տարիքի կանայք ավելի օպտիմիստական հայացք ունեն սեռերի հավասարության վերաբերյալ, քան երիտասարդ աղջիկները, որոնք դեռ աշխատաշուկա չնտած գործատուների կողմից խտրական վերաբերմունքի են արժանանում և ենթարկվում մասնագիտական սեգրեգացիայի: Նախ այն, որ գործատուն կնոջից ավելի քիչ սպասելիքներ ունի, քանի որ մտածում է կինը նաև պարտականություններ ունի ընտանիքում, այնուհետև ոչ բյուջետային սեկտորում կինը ավելի շատ է կախվածության մեջ տղամարդ-գործատուից, քան տնտեսության պետական սեկտորում, որտեղ կանանց իրավունքները համեմատաբար ավելի պաշտպանված են, և, վերաջպես, երբ կինը գիտի, որ ինքը այդքան էլ նախընտրելի աշխատող չէ, ապա նրանք դիրքորոշվում են, որ տղամարդկանց հետ մրցակցության հնարավորություն չկա, ուստի ընտրում են այնպիսի աշխատանք, որտեղ ավելի քիչ ջանքեր կծախսեն:

Տվյալ մոտեցումը հաստատում են նաև ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են **Լ.Ա. Շատրովոյի** կողմից, նշվում է, որ կանայք ի սկզբանե իրենց տեսնում են ընտանեկան ոլորտում զբաղվածություն ծավալելիս, այլ ոչ թե աշխատանքային, հետևաբար դա ազդում է գործատուների կանանց նկատմամբ նախատրամադրվածության վրա:

2012թ. Հայաստանի Հանրային խորհուրդը ձեռնամուխ է եղել Աշխատանքային օրենսգրքի փոփոխմանը: Այլ առաջարկությունների թվում նախատեսված է փոփոխել կանանց ֆիզարձակուրդում գտնվելու երաշխիքային ժամկետները: Առաջարկվում է նաև քայլեր ձեռնարկել մեծացնելու կանանց ներգրավվածությունը տնտեսական ոլորտում, ինչը նախաձեռնության հեղինակների համոզմամբ անմիջականորեն առնչվում է նրանց գործունեությունը քաղաքական դաշտում մեծացնելու հնարավորությունների հետ:

Աշխատանքի միջազգային կազմակերպության հրապարակած թվերը վկայակոչելով, անցած տարվա ընթացքում անկայուն աշխատողների թիվը կազմել է 1.52 մլրդ մարդ, ինչը 23 մլն-ով ավելի է 2009 թվականին գրանցված ցուցանիշից: Ողջ աշխարհում անկայուն աշխատողների գերակշիռ մասը՝ 50.5 տոկոսը կանայք են:

Զբաղվածության պետական ծառայության գործակալությունում որպես աշխատանք փնտրողներ գրանցված են 78.6 հազար մարդ, նրանց ավելի քան 70 տոկոսը կամ 46.3 հազարը կանայք են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործազուրկի կարգավիճակ ստացած կանայք ավելի մեծ թիվ են կազմում քաղաքներում:

Հաշվի առնելով այս ու մի շարք այլ տվյալներ, Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների մի առանձին հատված նվիրված է կանանց:

Հայաստանում տնտեսության բոլոր բնագավառներում կանանց ու տղամարդկանց գործունեության հավասար իրավունքն ամրագրված է օրենքով: Սակայն իրականում կանանց ֆինանսատնտեսական գործունեությունը սահմանափակվում է մանրածախ առևտրով ու

մանր ու միջին ձեռնարկությունների գործունեությամբ՝ մասնավորապես սպասարկման ոլորտում:

Ցածր եկամուտը, մշակութային, քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական գործընթացներում կանանց ոչ բավարար մասնակցության հետևանքով կանայք հայտնվում են անելանելի վիճակում և համաձայնվում գրեթե յուրաքանչյուր աշխատանքի՝ ցանկացած վարձարտության ու ցանկացած պայմաններով, սա էլ իր հերթին բերում է աշխատաշուկայի՝ ըստ սեռի խտրականության<sup>97</sup> :

Ժամանակակից միտումները ներառում են աշխատաշուկայում կանանց ավելի ակտիվ ներգրավվումը:

### **Ամփոփում**

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքում բացահայտեցինք աշխատանքային վարքի ստրատեգիաների ընտրության գենդերային տարբերությունները կանանց և տղամարդկանց մոտ: Նման տարբերությունները օգնում են հասկանալ կանանց և տղամարդկանց աշխատանքային վարքի կարգավորման մեխանիզմները, ընդլայնել գիտելիքները, գենդերային վերլուծությունները, աշխատունակության տեսությունները, մշակել ծրագրեր, որոնք կօգնեն հաղթահարել միջանձնային և ներանձնային կոնֆլիկտները աշխատանքային գործունեության ժամանակ և այլն:

### **Аннотация**

Наши исследования показали, что женщины и мужчины выбирают разные стратегии трудового поведения. Такие различия помогают понять механизмы регулирования трудового поведения у женщин и мужчин. Благодаря таким исследованиям, мы можем расширять наши знания, гендерные анализы, теории трудоспособности, сможем обрабатывать программы, которые помогут преодолеть межличностные и внутриличностные конфликты трудовой деятельности.

### **Annotation**

Our investigation results showed that women and men choose different working behavior strategies based on gender. Gender differences help us to understand men's and women's regulate mechanisms of working behavior. Due to all of this we can extend our knowledges, gender analyzes,

---

<sup>97</sup> Հ. Կարապետյան, Կանայք աշխատանքի շուկայում. Օրենսդրական փոփոխություններ /<http://womennet.am/category/повестка/экономика-и-бизнес/page11/>

theories of ability to work. Finally, we should create new programmes that can help us to overcome interpersonal and intrapersonal conflicts during by working.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան, Երիտասարդների աշխատանքային վարքի ռազմավարությունների ընտրության առանձնահատկությունները, էջ 163-176 /Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու),-Եր: Ասողիկ հրատ, 2016,-280էջ
2. Գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում, հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում (*գիտաժողովի նյութեր*)- Եր. ԵՊՀ հրատ., 2015թ., 210 էջ
3. Ընտանիք և կարիերա /[womannet.am/category/повестка/экономика-и-бизнес/page16/](http://womannet.am/category/повестка/экономика-и-бизнес/page16/)
4. Խաչատրյան Ն.Գ. Գենդերի սոցիալական հոգեբանություն.Ուսումնական ձեռնարկ. Եր. էդիթ պրինտ.2007171.
5. Հայաստանի աշխատանքային շուկայի գենդերային ասպեկտը. հետազոտություն/<http://www.womenofarmenia.org/images/Labor%20market%20Armenian.pdf/>
6. Հ. Կարապետյան. Կանայք աշխատանքի շուկայում. օրենսդրական փոփոխություններ /<http://womannet.am/category/повестка/экономика-и-бизнес/page11/>
7. Агеев В. С. Психологические и социальные функции полоролевых стереотипов.// Вопросы психологии. 1987. С. 152158.
8. Адамчук В.В, О.В Ромашов, М.Е Сорокин. Трудовое поведение: понятие и структура.//Экономика и социология труда: Учебник для вузов.-М.;Юнтин, 1999-407с./[economuch.com/page/ekonomika/ist/ist-16-idz-ax265-mf-68.htm/](http://economuch.com/page/ekonomika/ist/ist-16-idz-ax265-mf-68.htm/)
9. Андреева Г. М. Социальная психология. Учебник для Вузов. М. АспектПресс, 1998376с.
10. Бендас Т.Б. Гендерная психология. /<http://www.koob.ru/>
11. Берн Ш. Гендерная психология. Законы мужского и женского поведения. СПб.Прайм-ЕВРОЗНАК, 2008318с

12. **Гендерная психология.** Практикум. 2е изд./ Под ред. И.С.Клецина. Спб: Питер, 2009. 496с.
13. **Ильин Е.П.** Пол и гендер. СПб.: Питер, 2010.688с.
14. **Кон И.С.** Мужчина в меняющемся мире.-М, 2009/[psyfactor.org/lib/male-female.htm](http://psyfactor.org/lib/male-female.htm)
15. **Крайг Р.** Психология развития.СПб. Изд. Питер 2000992с.
16. **Майерс Д.** Социальная психология. /<http://www.koob.ru/>
17. **Мальцева И.О., С. Ю. Рощин.** Гендерная сегрегация и трудовая мобильность на российской рынке труда. Изд. дом ГУ ВЭШ. М. 2007-282с.
18. **Мосакова. Е.А.**Стратегии поведения женщин на рынке труда: подходы к исследованию дискриминации при найме в России и странах запада
19. **Наследов А.Д.** Математические методы психологического исследования. Анализ и интерпретация данных. Учебное пособие. Спб. Речь.:2004 392 с.
20. **Н. Чодороу.** Воспроизводство материнства. Психоанализ и социология гендера /[www.koob.ru/chodorow/motherhood/](http://www.koob.ru/chodorow/motherhood/)
21. **Ошепков А.Ю.** Гендерные различия в оплате труда в России. Экономический журнал ВЭШ
22. **Попов А.В..** Трудовая активность как основа трудового поведения населения/Молодой ученый.-2012-С. 151-158 /[www.moluch.ru.archive/45/5456/](http://www.moluch.ru.archive/45/5456/)
23. **Рудакова О.В.** Трудовая эмиграция в России.Гендерный аспект
24. **Сатикова.С.В.** Социальная идентичность личности и трудовое поведение /[remark.ru/organizacionnaya-psichologiya/](http://remark.ru/organizacionnaya-psichologiya/)
25. **Сорокин. П.А.** Концепции действия, взаимодействия, социального пространства и социокультурной динамики в интегральной социологии //П. Сорокина, С.В. Лапина.Социология. Часть 2.Минск. 2004-196с.
26. **Стараовойтенко Е.Б.** Культурная психология личности: монография.М.:2007.310с.
27. **Тартаковская И.Н.** Гендерные аспекты стратегии безработных.2002.73-82/<http://ecsocman.hse.ru/data/953/134/1217/008.TARTAKOVSKAYA.pdf>
28. **Фрейджейр Р., Фэйдимен Д.** Личность. Теории, упражнения, эксперименты./<http://www.koob.ru/>.
29. **Худоян С.С.** Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. Ер.,: Зангак97, 2010, 232с.
30. **Isek Aizen.** Theory of planned behavior./<http://people.umass.edu/aizen/tpb.html>
31. **Sex-selective abortion. Gendercid in Caucasus**  
/<http://www.economist.com/news/europe/21586617-son-preference-once-suppressed-reviving-alarmingly-gendercide-caucasus?frsc=dg%7Ca>

### Մոր դերային սպասելիքները տարբեր սեռի երեխաներից

**Բանալի բառեր** – սեռ, գենդեր, գենդերային կարծրատիպ, սեռային նույնականություն, դաստիարակման ոճ, ուղերձ, կյանքի սցենար, դերային սպասելիք

**Ключевые слова** – Пол, гендер, гендерный стереотип, половая идентификация, стиль воспитания, послание, жизненные сценарии, ролевые ожидания

**Key words** – Sex, Gender, gender stereotype, saexual identity, parenting style, mssages, life scenarios, role expectations

Հաճախ գենդեր և սեռ հասկացությունները հանդես են գալիս որպես փոխարինող արտահայտություններ: Սակայն իրականում դրանք ունեն տարբեր իմաստներ, քանի որ մարդու սեռը և գենդերը կարող են չհամընկնել: «Սեռ» հասկացությունը բնորոշում է կենսաբանական տարբերությունները, այսպես կոչված՝ «սեռական տարբերությունները»: Սակայն այստեղ էլ սեռական տարբերությունները դիտարկվում են սոցիումի տեսանկյունից:<sup>98</sup>

Սեռը կենսաֆիզիոլոգիական բնորոշիչն է, որի վրա հիմնվելով՝ մարդիկ տարբերակվում են որպես կին կամ տղամարդ: Գենդերը սոցիալական սեռն է, այսինքն՝ հասարակության մեջ սոցիալական կառուցվածքից կախված սոցիալական դերը, որը բնորոշում է մարդկանց դիրքը այդ կառուցվածքում և ինստիտուտներում: Մարդու կենսաբանական բնութագրիչը, այսինքն՝ սեռը, միշտ չէ, որ որոշում է իր պահվածքը: Սակայն գենդերը ամբողջապես բնութագրում է մարդու սոցիալական դերը: Մարդու սեռը ձեռքբերովի չէ, այն իրենից ներկայացնում է բնածին առանձնահատկություն: Մարդու գենդերը կարող է կյանքի ընթացքում փոփոխվել, իսկ սեռը բնական ճանապարհով՝ ոչ: Գենդերը կապված է սոցիումից, մի բան, որը կարող է մի մշակություն դիտարկվել որպես կանացիություն, ապա մյուսում՝ առնականություն: Սեռ հասկացության մեջ գոյություն ունեցող անբաբտելիությունը և հարատևությունը համաքայլ պետք է լինի հասարակության մեջ գենդերի դինամիկ զարգացման հետ: Առհասարակ, դարերի ընթացքում սեռ հասկացությունը առանց դժվարությունների ընկալվում և ընդունվում է մարդկանց կողմից,

<sup>98</sup> Ильин Е.П.. Пол и гендер. С-Пб.: Питер, 2010. Ст 156

քանզի ինքնին սեռը ի ծնե, միանշանակորեն ընկալվող, մարդկանց տարբերակման ամենատարածված միջոցներց մեկն է:<sup>99</sup>

Գենդերային կարծրատիպերը սեռերի վարքի կանոնների, գործառույթների և գործունեության վերաբերյալ հասարակության գիտակցության մեջ ձևավորված պատկերացումներն են: Գենդերային կարծրատիպերը ավելի վաղ են յուրացվում, քան ձևավորվում է կարծիքը, ու դառնում են չգիտակցված գաղափարախոսություն: Այսինքն՝ մինչև մեր սեփական կարծիքի ձևավորվելը, մենք մեր ընտանիքի անդամներից, մեծերից, հեռուստատեսությամբ և այլնից լսում ենք գենդերային կարծրատիպեր պարունակող մտքեր, որոնք մեր մեջ հիմնավորում են այդ կարծրատիպերը: Կարող ենք ասել, որ դրանք ժամանակի ընթացքում դառնում են նախապաշարմունքներ, քանի որ այս կարծրատիպերը ամրագրվում են անհատական գիտակցության մեջ, և անհատը իր գիտակցությունը վերաձևում է ըստ դրանց: Գենդերային կարծրատիպերը հաճախ գործում են որպես սոցիալական նորմեր, և նորմերի ճնշման պատճառով կատարում ենք գենդերային դերեր: Նորմատիվային ճնշման ազդեցությունը կայանում է նրանում, որ մենք փորձում ենք համապատասխանել գենդերային դերերին, որպեսզի ստանանք սոցիալական խրախուսում և խուսափենք սոցիալական պատժամիջոցներից: Գենդերային կարծրատիպերը ընդունված են հասարակության բոլոր անդամների կողմից: Երբ մեր կարծիքը հայտնենք գենդերային տարբերությունների մասին, մենք գիտակցության մակարդակում հնարավոր է չհամաձայնվենք այդ մտքի հետ, սակայն առօրյա կյանքում վարվում ենք գենդերային կարծրատիպերին համապատասխան և ընդունում ենք տղամարդու և կնոջ դերերի տարբերությունը:

Գենդերային կարծրատիպերն ունեն հետևյալ առանձնահատկությունները:

- Դրանք շատ կայուն են, շատ վաղ են յուրացվում և մեծ դժվարությամբ են փոփոխվում,
- Շատ զորեղ են և հեշտությամբ են յուրացվում այն խմբերի կողմից, որոնց համար էլ ստեղծված են,
- Սոցիալական են և կապված են հասարակության իրական շերտավորման հետ,
- Կան ընդհանրական սեռադերային կարծրատիպեր, որոնք բնորոշ են հասարակության ցանկացած աշխարհագրական և սոցիալական կտրվածքին:

Ընտանիքը այն վայրն է, որտեղ տեղի է ունենում մարդու առաջնային սոցիալիզացիան: Կրոնական ավանդույթները, էթնիկ կարծրատիպերը, գենդերային կարծրատիպերը, արժեքները և այլնը երեխան յուրացնում է ընտանիքի միջոցով: Ըստ տարիքի գենդերային կարծրատիպերը ընկալվում և ընդունվում են տարբեր կերպ: Երեխաների մոտ

<sup>99</sup> Блохина Наталья Александровна понятие гендера: становление, основные концепции и представления  
<http://www.gender-cent.ryazan.ru/blohina.htm>



կարծրատիպերը ընդունվում են փաստացի, այսինք՝ նրանք իրենց կարծրատիպային մտածողության մասին բացատրություններ տալ չեն կարող, և այն ժառանգում են մեծահասակներից, իսկ արդեն մեծահասակների մոտ կարծրատիպերը դառնում են կենսակերպ, նրանք սահմանափակվում են այդ «կարծրատիպային մտածելակերպի» մեջ և վարքի այլընտրանքներն ուղղակի բացառում են: Նրանք կարող են հստակ բացատրել իրենց դիրքորոշումները, իսկ եթե դա այնուամենայնիվ չի ստացվում իրենց մոտ, միննույնն է, նրանք չեն հրաժարվի իրենց մտածելակերպից:

Դեռահասների մոտ կենսագործունեության հիմնական ոլորտում ձևավորվում են կնոջ և տղամարդու մասին պատկերացումներ, ինչպես նաև այն հանդիսանում է հակառակ սեռի ներկայացուցիչների հետ փոխհարաբերությունների դաշտ: Կնոջ և տղամարսու կերպարների մասին պատկերացումները յուրաքանչյուր տարիքում տարբեր ասպեկտներով է արտահայտվում: Դեռահասների մոտ տղամարդկայնության և կանացիության մասին պատկերացումները շատ հստակ նկատվում են, որ ձևավորվել են մեծերի կարծիքների հիման վրա:

Դեռահասության և պատանեկության տարիքում տղամարդկայնության մասին համապատասխան նորմատիվային պատկերացումները ավելի խիստ են և կարծրատիպային: Ցանկանալով հաստատվել արական սեռի մեջ՝ տղան ամեն կերպ ընդգծում է իր տարբերությունը կնոջից՝ ցանկանալով հաղթահարել այն ամենը, ինչ կոչվում է կանացի: Մենք դիտարկում ենք սկզբում սեռական հասունացումը, ապա օրգանական և որոշ ժամանակ անց՝ սոցիալականը:<sup>100</sup>

Ծնողները համարվում են երեխաների գենդերային սոցիալիզացիայի հիմնական ազենտները: Մի շարք հետազոտողներ հաստատում են, որ երեխաների սոցիալիզացիայի առաջին էտապը իրականացվում է ընտանիքում, որի վրա էական ազդեցություն են ունենում ծնողների մանկավարժական հմտությունները: Այդ մանկավարժական հմտությունների տակ հասկանում ենք ծնողների գիտակցության մեջ գիտելիքի, գործունեության, վարքի, գնահատականի ամրապնդման նպատակաուղղվածություն, որոնք օգնում են արդյունավետորեն լուծել ընտանիքում մանկավարժական խնդիրները՝ մտերիմների հետ վստահության վրա հիմնված հարաբերություններ պահպանելով, բարեհաջող ռեալիզացնելով սոցիալական դերերը որդու և դստեր, կնոջ և ամուսնու, հոր և մոր: Ծնողները գիտակցաբար պատրաստում են իրենց երեխաներին, այս սոցիալական դերերը կատարելուն: Գնահատելով ընտանիքը որպես երեխայի գենդերային սոցիալիզացիայի ֆակտոր՝ կարելի է նշել հետևյալ չափանիշները ծնողական մանկավարժության համար.

<sup>100</sup> Национальный Университет Узбекистана, отделение психологии. Т., 2003. 145

- Ուզում են ծնողները, թե ոչ, միշտ ազդում են երեխաների հոգեբանական և սեռական հասունության վրա:
- Ընտանիքը, հարաբերությունների համակարգով, ծնող-ծնող, երեխա-ծնող, ազդեցություն է գործում երեխաների վրա:
- Ընտանիքի հաջողությունը մեծամասամբ կախված է երեխայի՝ մասկուլինության և ֆեմինականության վերաբերյալ ընկալման փոխհամաձայնեցվածությունից:
- Ընտանիքը ֆիլտր է, որը նպաստում է երեխայի մուտքը գենդերային մշակույթ:<sup>101</sup>

Ժամանակակից աշխարհում փոփոխության են ենթարկվել ոչ միայն ընտանիքի կառուցվածքն ու կազմը, այլև նրա ֆունկցիաները: Նույնիսկ նույն մշակույթն ունեցող երկրում տարբեր ընտանիքներ տարբեր կերպ են դաստիարակում իրենց զավակներին: Ընտանեկան պայմանները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը, ծնողների զբաղվածությունը, նյութական վիճակը, կրթական մակարդակը գործոններ են, որոնք անվերապահորեն ազդում են երեխայի դաստիարակության գործընթացին: Բացի այս, երեխաների դաստիարակության վրա ազդում են նաև ծնողների կողմից մշակված կյանքի սցենարները և ուղերձները, որոնք տրվում են երեխային, և կախված երեխայի սեռից՝ այդ ուղերձները տարբեր են լինում, այսինքն՝ տարբեր սեռի երեխաներից ծնողները ունենում են վարքային և դերային տարբեր ակնկալիքներ, որոնք հետագայում ազդեցություն են ունենում նրանց զբաղվածության, ստատուսի և այլնի վրա:

Սցենարը, անընդհատ զարգացող, կյանքի նախագիծ է, որը ձևավորվում է մանուկ հասակից: Այդ հոգեբանական ազդակը մարդուն առաջ է մղում ընդառաջ իր ճակատագրին, և հաճախ նրան տալով ազատ ընտրության հնարավորություն: Երեխաները, փոքր հասակից սկսած, պատկերացնում են ապագայում ինչ ստատուս կունենան, ինչպիսին կլինի նրանց ապագա կողակիցը և այլն: Նման կերպ, իրենց երեխաների կյանքի վերաբերյալ սցենար կազմում են ծնողները: Ծնողների՝ անմիջական ուղերձներից բացի, երեխայի կյանքի սցենարի վրա ազդում են հեքիաթները, խաղերը, երեխայի անունն ու ազգանունը և այլն:<sup>102</sup>

Կյանքի սցենարն այն է, թե երեխան ինչ է պլանավորում ապագայում, իսկ ճակատագիրը՝ ինչ է լինում իրականում: 1950-ական թվականի Էրիկ Բեռնը հիմնադրեց հոգեբանության մեջ տրանսակցիոն անալիզը: Բեռնը կարևորում էր մարդու անգիտակցակար և մանուկ հասակը: Նրա կարծիքով մարդու հոգեկան կյանքը հիմնված է լարվածություն-լիցքաթափում-հավասարակշռություն սկզբունք վրա: Մարդը

<sup>101</sup> Захарова И. В. Роль родителей в гендерной социализации ребенка [Текст] / И. В. Захарова // Молодой ученый. — 2011. — №5. Т.2. — С. 140-142

<sup>102</sup> Реан А.А., Психология подростка С.Петербург Москва 2003 с.87

անգիտակցորեն ձգտում է ներդաշնակության, հիմնականում սա վերաբերվում է ֆիզիկական վիճակներին, որոնք փոխանցվում են հոգեկան ոլորտ:<sup>103</sup>

Բեռնը տրանսակցիայի տեսության մեջ ներառեց ևս մեկը՝ կյանքի սցենարի վերլուծությունը: Կյանքի սցենարները մեզ են տրվում ծնողների կողմից՝ դեռևս մանուկ հասակից: Երեխայի մոտ ասված յուրաքանչյուր բառ, արտահայտություն, փոխհարաբերություն, վերաբերմունք տպավորվում է նրա մեջ: Դրա համար երեխան ամեն կերպ փորձում է հասնել այն մոդելին, որը ծնողը շատ հաճախ դնում է իր «երազած» երեխայի առջև: Դեպքեր էլ լինում են, երբ ծնողը փորձում է իր կյանքի սցենարը փոխանցել երեխային, այսինքն՝ ինչ չի ստացվել իր մոտ, անպայման նա փորձում է իրագործել երեխայի միջոցով: Մանկության տարիներին բոլոր մարդիկ գրում են իրենց սեփական կյանքի սցենարը: Հիմնական սյուժեն մարդիկ ստեղծում են դեռևս շատ փոքր հասակում՝ նախքան խոսել սովորելը: Ավելի ուշ սցենարին ավելացվում են միայն որոշակի դետալներ: 7 տարեկանում սցենարն արդեն հիմնականում գրված է լինում, իսկ դեռահասության տարիքում այն կարելի է վերանայել: Մարդիկ չեն գիտակցում, որ իրենց համար գրում են կյանքի սցենար, բայց այնուամենայնիվ, նույնությամբ հետևում են դրան՝ առանց գիտակցելու այդ փաստը: Մարդիկ իրենց կյանքը դասավորում են այնպես, որ հասցնեն այն ավարտին, որը սահմանել էին մանուկ հասակում: Ինչպես յուրաքանչյուր պատմություն, կյանքի սցենարը նույնպես ունի սկիզբ, ընթացք և ավարտ: Այստեղ նույնպես կան հերոսներ և հերոսուհիներ, չարագործներ և երկրորդական կերպարներ: Կյանքի սցենարը կարող է լինել կոմիկական կամ դրամատիկ, հետաքրքիր և ձանձրալի, ոգեշնչող և ամոթալի:<sup>104</sup>

Կյանքի սցենարները կազմվում են այն բոլոր ուղերձների հիման վրա, որոնք երեխաները ստանում են իրենց ծնողներից, իսկ այդ ուղերձները կրում են գենդերային կարծրատիպեր: Այդ ամենը նպաստում է, որ երեխաների մոտ դեռևս փոքր հասակից ձևավորվի սեռային նույնականացման հիմնախնդիրը, որովհետև սեռն առաջին հասկացությունն է, որով երեխան իրեն ցուցադրում է որպես անհատ: Սեռային նունականացումը մարդու մեջ որոշակի արժեքային կողմնորոշում է ներառում՝ կապված նրա սեռի, որպես սոցիալական դերի, որպես սեքսուալ վարքի հետ, ինչպես նաև ներառում է հոգեբանական և սոցիալական մակարդակում նույնականացում ֆիզիոլոգիական սեռի հետ: Սեռային նույնականացումը ինքնագիտակցման ամբողջականություն է, վարքային մոտիվ, այնպիսի պահվածք, որը բնորոշ է տվյալ սեռի ներկայացուցիչներին, որն էլ ենթադրում է սեռային դեր: Սեռային նունականացումը թույլ է տալիս մարդուն, կոնկրետ գործունեության մեջ իրեն զգալու որպես կին կամ տղամարդ:<sup>105</sup>

<sup>103</sup> Берн Э. “Транзакционный анализ и психотерапия” СПб, 1992 стр. 16

<sup>104</sup> Берн Эрик. Люди, которые играют в игры. — М., 1988. стр. 40-45

<sup>105</sup> Кле М. Психология подростка. Психосексуальное развитие. (Пер. с фр.). - М., 1991

Նունականացման հիմնախնդիրը անմիջական կապ ունի մշակույթից, էթնոսից, տվյալ երկրում սնձի զարգացման համար նախատեսված պայմաններից: Բացասական դրսևորումները նույնպես կարող են կապ ունենալ էթնոսի հետ, հատկապես նույնականացման խնդիր կարող են ունենալ այն անհատները, ովքեր ունեն ֆիզիոլոգիական, մորֆոլոգիական, գենետիկ և հոգեբանական յուրահատկություններ, որոնք ստեղծում են ներքին անհամատեղելիություն:<sup>106</sup>

Այս թեմայի շուրջ կատարվել է հետազոտություն, և ըստ այդ հետազոտության.

### **Պրոբլեմային իրավիճակ –**

Հայ հասարակությունը ավանդական հասարակության տիպական գծերի կրողն է և հետևաբար իր ուրույն դիրքորոշումներն է ցուցաբերում գենդերային խնդիրների նկատմամբ: Ընտանիքում երեխաների դաստիարակությամբ հիմնական զբաղվողը մայրն է: Նախ այդպես եղել է դեռևս հին ժամանակներում՝ ըստ «ավանդական» մոդելի, և հետո ըստ ՀՀ օրենքի, երեխայի՝ մինչև 3 տարեկան հասակը, մայրը ստանում է պետականորեն իրեն հասանելիք մայրական արձակուրդը, որպեսզի զբաղվի երեխայի դաստիարակությամբ: Այսինքն՝ սա նշանակում է, որ կան արտաքին ֆակտորներ, որոնք ավելի են մեծացնում մոր՝ երեխայի դաստիարակությամբ զբաղվելու գործոնը:<sup>107</sup> Հայաստանում երեխաների դաստիարակությամբ հիմնականում զբաղվում են մայրերը, հետևաբար հետազոտության արդյունքում նպատակային է պարզել, թե ինչ դերային սպասելիքներ, ինչ ակնկալիքներ են ունենում մայրերը տարբեր սեռի երեխաներից: Երեխայի սոցիալականացումն իրականանում է հիմնականում երկու զուգահեռ ուղղություններով՝ նպատակաուղղված դաստիարակություն և սոցիալական ուսուցում: Առաջին դեպքում ծնողները միմյանցից տարբերվում են դաստարակության տարբեր ոճերով, դաստիարակության վերաբերյալ դիրքորոշումներով և այլն:

Սոցիալական ուսուցումն իրականանում է ոչ միայն ծնողների հետ փոխհարաբերությունների մեջ մտնելով, այլև՝ ընտանիքի մյուս անդամների հետ փոխհարաբերությունների կոնտեքստում, բացի այդ, երեխայի վրա ազդում են նաև ընտանիքում տիրող մթնոլորտը, ընտանիքի սոցիալական պայմանները, ծնողների զբաղմունքը, նրանց կրթական մակարդակը և այլն: Անձի սոցիալ-հոգեբանական զարգացման աղբյուրները կամ դրա վրա ազդող գործոնները շատ են, բայց մարդկանց փոխներգործունեության առաջին ձևը եղել և մնում է ընտանիքը:

<sup>106</sup> Кон И.С. Психология ранней юности. - М., 1982

<sup>107</sup> Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք/ ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին ըստ 173 հոդվածի

Դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից է կախված երեխայի՝ շրջապատող իրականության ընկալումը, նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ: Երեխան ծնվելով ընկալում է իր համար բոլորովին այլ՝ դժվարություններով լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջնային պլանը ընտանիքն է: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Յուրաքանչյուր ծնողի ցանկությունն է, որպեսզի իր զավակը դառնա լավ մարդ, լինի երջանիկ, հոգեպես և ֆիզիկապես առողջ, այլ խնդիր է՝ ինչպես է դա հաջողվում պրակտիկայում: Ինչ են ուզում ծնողները և ինչ են իսկապես անում բաղձալին իրագործելու համար: Ցավոք, պիտի նշել, որ դեռահասության շրջանում ծնողներից շատերը ուղղակի չգիտեն, թե ինչպես վարվել իրենց՝ ինքնուրույն դարձող և հավասարը հավասարի հարաբերությունների ձգտող զավակների հետ: Այստեղ է, որ կարևորվում է դաստիարակության այն ոճը, որն ընտրում է ծնողը՝ կախված իր բնավորության տիպից, գիտելիքներից ու այն պատկերացումներից, որ նա ունի անձի զարգացման օրինաչափությունների և երեխայի խնամքի վերաբերյալ: Դաստիարակության յուրաքանչյուր ոճ հոգեկան և վարքային դրսևորումների համախումբ է, որը ենթադրում է վարքի, համոզմունքների և դիրքորոշումների ամբողջություն, այն պետք է լինի ադեկվատ, ճկուն և կանխատեսված: Ադեկվատ լինել նշանակում է հմտություն ունենալ տեսնելու և հասկանալու երեխայի անհատականությունը, ճանաչելու նրա բնավորության գծերը, խառնվածքի տիպը, նրբանկատ լինել երեխայի հոգեկան աշխարհի նկատմամբ: Ճկուն լինել նշանակում է ընդունակ լինել փոփոխելու երեխայի վրա ազդող գործոնները, անգամ վարքի մոդելները, որոնք առաջարկվում են երեխային: Կանխատեսվածությունը ծնողի կարողությունն է տեսնել երեխայի զարգացման մոտավոր հեռանկարը, այսինքն՝ կարողանալ կանխատեսել երեխայի անձում հոգեկան և անհատական նոր որակների ի հայտ գալը:

**Հետազոտության նպատակ**- Պարզել մոր դերային սպասելիքներին տարբեր սեռի երեխաներից

**Հետազոտության առարկա** - մոր սպասելիքների առանձնահատկությունները կախված երեխայի սեռից:

**Հետազոտության օբյեկտ** - մոր սպասելիքները:

**Խնդիրներ** -

- Ուսումնասիրել, թե ինչպիսի ուղերձներ են տալիս մայրերը տարբեր սեռի երեխաներին:
- Ուսումնասիրել ինչպիսի ծնողավարական մոտեցումներ են առկա մայրերի մոտ՝ կախված երեխայի սեռից:

- Ուսումնասիրել, դաստիարակման ոճերի ինչ տարբերություններ կան այն մայրերի միջև ովքեր դաստիարակում են միայն աղջիկ երեխաներ, միայն տղա երեխաներ, ինչպես նաև ն' աղջիկ, ն' տղա երեխաներ:
- Ուսումնասիրել, ինչպիսի գենդերային պատկերացումներ ունեն մայրերը:
- Ուսումնասիրել, ինչպես են ձևավորված գենդերային կարծրատիպերն ազդում ծնողների՝ երեխայից ունեցած դերային սպասելիքների վրա:

**Վարկած –**

- մոր ծնողավարական ոճերն տարբերվում են երեխայի սեռից կախված,
- մոր դերային սպասելիքները տարբերվում են երեխայի սեռից կախված
- Երեխաներին վերագրում են ավանդական դերեր:

**Ընտրանք –**

Հետազոտության համար ընտրվել են 3 խումբ հարցվողներ: Առաջին խմբում ներառված են այն մայրերը, ովքեր ունեն 3-7տարեկան իգական սեռի երեխա: Երկրորդ խմբում այն մայրերն, ովքեր ունեն արական սեռի երեխա: Վերջին խմբում ներառված են այն մայրերը, ովքեր ունեն 3-7տարեկան երկու սեռի երեխաներ: Ընդհանուր առմամբ, ընտրանքը բաղկացած է 30 մորից, իսկ յուրաքանչյուր խմբում համապատասխանաբար ներառված են 10-ական մայրեր:

Ընտրված քանակը նպատակահարմար է, քանի որ ընդգրկված են բոլոր հնարավոր խմբերը, և այս պարագայում կա կարծիքի բազմաբանություն և տվյալների հավաստիություն: Հետազոտության որակական մեթոդի ընտրանքը ընտրվել է ըստ անհրաժեշտության, և որոշակի քանակից հետո նկատվել է տվյալների կրկնություն:

Ընտրանքի թիրախային խումբ ընտրվել են մայրերը, քանի որ նրանք են ամենաանմիջական կապը ունենում երեխաների դաստիարակության հարցում: Եվ ընտրվել են այն մայրերը, ովքեր ունեն 3-7 տարեկան գոնե մեկ երեխա, քանի որ սեռային նույնականացման գործընթացն սկսվում է 3տարեկանում և ավարտվում է 7տարեկանում և հենց այդ տարիքում է հիմնականում ավարտվում երեխայի կյանքի սցենարի ձևավորումը:

Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք են կազմում Ի. Կոնի տեսությունը, ըստ որի մարդու սեռը ստեղծված է նրա համար, որպեսզի ցույց տրվի երկու տեսակների տարբերությունները, ինչպես նաև Է. Բեռնի տեսությունը կյանքի ուղերձների մասին:

**Մեթոդի նկարագրություն –**

Տվյալ հետազոտության համար, որի նպատակն է պարզել մոր դերային սպասելիքները տարբեր սեռի երեխաներից, նպատակահարմար է իրականացնել խորին հարցազրույցի մեթոդը, քանի որ այդ մեթոդի շնորհիվ կստանանք ավելի արմատական և խորը տեղեկատվություն, ինչպես նաև անմիջական շփման ժամանակ, և հարցրված բաց հարցերի միջոցով կարելի է ստանալ ինչպես վերբալ, այնպես էլ ոչ վերբալ ինֆորմացիա, կարելի է ցանկացած ուղերձի մեջ հասկանալ ծնողի վերաբերմունքը, սպասելիքների առանձնահատկությունները տարբեր սեռի երեխաներից՝ ելնելով կոնտեքստից:

Խորին հարցազրույցի հարցաշարը պայմանակառեն բաժանել ենք երեք բլոկի, յուրաքանչյուրում ներառելով որոշակի ուղղվածության հարցեր՝

- ծնողավարական մոտեցումներ
- մոր գենդերային պատկերացումներ
- մոր դիրքորոշումներ և դերային սպասելիքներ

### **Հետազոտության արդյունքների վերլուծություն –**

Հետազոտությունը կատարվել է պատահականորեն ընտրված մայրերի հետ, ովքեր ունեն 3-7 տարեկան գոնե մեկ երեխա: Հետազոտության համար նպատակային է եղել կիրառել խորին հարցազրույցի մեթոդը: Քանի որ ընտրված էր որակական մեթոդ, հետևաբար հարցվողների հստակ թվաքանակի ընտրված չէր, և պայմանականորեն ընտրվել է 30 հարցվող, իսկ երբ նկատվեց տվյալների կրկնություն, հարցվողների թվաքանակը վերջնականորեն հաստատվեց: Կարծիքի բազմազանությունն ապահովելու համար հարցվողները բաժանվել էին երեք խմբի: Առաջին խմբում այն մայրերն էին, ովքեր ունեին 3-7տարեկան միայն իգական սեռի երեխա, երկրորդ խմբում՝ ովքեր ունեին 3-7տարեկան միայն արական սեռի երեխա, իսկ երրորդ խմբում՝ 3-7 տարեկան և՛ արական, և՛ իգական սեռի երեխա ունեցողները: Այս կերպ հնարավոր կլիներ խնդիրն ուսումնասիրել բոլոր ասպեկտներից:

Երեք տարեկանում տեղի է ունենում երեխայի կյանքի ամենադժվար փուլերից մեկը՝ երեք տարեկանի ճգնաժամը: Սա սոցիալական հարաբերությունների նախկին [համակարգի](#) վերափոխումն է, սեփական «Ես»-ի առանձնացման ճգնաժամը: Երեխան, առանձնանալով մեծահասակից, փորձում է հասատատել նրա հետ նոր՝ առավել խոր հարաբերություններ: Երեք տարեկանում երեխան առաջին անգամ ընդունակ է դառնում գործելու իր անմիջական ցանկությանը հակառակ: Երեխայի վարքը որոշվում է ոչ թե իր ցանկությամբ այլ ուրիշների՝ մեծահասակների հետ հարաբերություններով: Վարքի դրդապատճառը գտնվում է արդեն երեխային առաջադրված իրավիճակից դուրս: Երեք տարեկանում երեխան հնարավորություն է ստանում գործելու ոչ թե պատահականորեն ծագած ցանկության ազդեցությամբ, այլ գործել ուրիշ՝ ավելի բարդ և կայուն դրդապատճառների ազդեցությամբ, որը զարգացման կարևորագույն ձեռքբերում է, իսկ յոթ տարեկանում ավարտվում է երեխայի՝ անձ ձևավորվելու գործընթացը:

Առանձնացվել է ծնողավարության հետևյալ ոճերը ըստ Ստոլին Վարգայի Թեսթ-հարցարանի՝

- Ընդունում-մերժում
- Համագործակցում
- Միմբոզ (համակեցություն)
- Ավտորիտար
- «փոքրիկ անհաջողակ»

Ինչպես նաև, պայմանականորեն ընտրվել են ևս 9 սանդղակներ, ըստ Սոլովովա Մ.Վ.-ի և Սմիրնովա Ե.Օ-ի, որոնք նույնպես դուրս են բերում ծնողական վարքի և ծնողավարության դաստիարակման ոճերը: Ու համադրելով այս 2 հարցարանները, կարելի է ավելի հավաստի տվյալներ ստանալ: Ծնողավարության 9 ոճերն են՝

- Խիստ-ավտորիտար
- Բացատրական
- Ավտոնիմ
- Կոմպրոմիսային
- Համագործակցային
- Մղող
- Իրավիճակային
- Խղճացող
- Կախյալ

Խորին հարցազրույցի հարցարանը բաղկացած է 3 բլոկից: 1-ին բլոկի հարցերն ուղղված են հասկանալու, թե մայրերը դաստիարակման որ ոճն են կիրառում: 1-ին բլոկի հարցերը կազմելիս օգտվել ենք Ստոլին Վարգայի, Սոլովովա Մ.Վ.-ի և Սմիրնովա Ե.Օ-ի հարցարաններից և կազմել հարցարան, ըստ որի կարելի կլիներ դուրս բերել դաստիարակման ոճեր: 2-րդ բլոկի հարցերն ուղղված էին հասկանալու, թե առհասարակ մայրերն ինչպիսի գենդերային պատկերացումներ ունեն: Դա կնպաստի նրան, որպեսզի ավելի լավ հասկանանք, թե ինչպես են նրանք պատկերացնում ծնողավարության դերը, ինչպես են առհասարակ պատկերացնում գենդերային դերերը, պարտականությունները, որն է նրանց համար իդեալ, ընդունելի կենսաձև: 3-րդ և վերջնական բլոկի հարցերն արդեն կենտրոնացած են մոր՝ իր երեխաների հանդեպ վերաբերմունքի, ակնկալիքների ու սպասելիքների վրա, ու հարցվողը պատասխանում է սեփական փորձից ելնելով:

Հարցվող մայրերի ամենանախընտրած ծնողավարության ոճը ըստ Ստոլին Վարգայի հարցարանի համագործակցության ոճն էր, ըստ որի՝ ծնողները սաստարում են իրենց երեխաների որոշումները, ընդունում են նրանց, որպես առանձին անհատականություն, երեխան ծնողին դուր է գալիս այնպիսին, ինչպիսին նա կա: Ծնողը հաշվի է նստում երեխայի ցանկությունների, նախասիրությունների հետ, կարևորվում է երեխայի կարծիքը, օգնում է



նրան, երբ երեխան ունի իր կարիքը, երբեմն խղճում է երեխային, բայց միևնույն ժամանակ բարձր է գնահատում նրա մտավոր և ստեղծագործական կարողությունները ու հավատացած է, որ երեխան հաջողությունների կհասնի: Ծնողը երեխային տալիս է մաքսիմալ ազատություն, որպեսզի նա սովորի պատասխանատվություն կրել իր սեփական քայլերի համար: Նրանք չեն բացառում, որ երբեմն՝ կարիքից ելնելով, պետք է խստություն անել, դրանով իսկ կանխելով մի շարք անթույլատրելի վարք երեխայի կողմից: Մա բավականին ողջունելի ցուցանիշ է, քանի որ համագործակցումը լավագույն տարբերակն էր, որ առանձնացված էր այս հարցարանում: Մրա պարագայում ծնողը բացատրում է երեխային ինչ պետք է նա անի, և ինչ չի կարելի, ու երեխայի հետ շփվում է, որպես հավասարը հավասարի հետ, որովհետև երեխան բավականին հասուն է ընկալելու պատճառահետևանքային կապը, տարբերակում է նորմերը և առանձնացնում է իր համար արժեքներ: Ծնողը, իրավիճակից ելնելով, առաջարկում է իր օգնությունը կամ ուղղորդում է երեխային, դրա համար համագործակցող տիպը կարելի է գուգահեռաբար կցել ծնողական դաստիարակման ընդունման ոճի հետ: Այս ոճը հատկապես նախընտրում էին այն կանայք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, սոցիալական ստատուս, ովքեր ինքնաբավ են և բավարարված են իրենց ամուսնական կյանքից: Այս մայրերը վստահ են իրենց երեխայի կայուն ապագայի վրա: Նրանք երեխաներին ուղարկում են տարբեր տեսակի խմբակների, որպեսզի երեխան սովոր լինի հագեցած առօրյային, ու կարողանա տարանջատել ինչն է իր համար հետաքրքիր, ինչը՝ ոչ, որպեսզի հետագայում հստակ պատկերացնի ինչով է ցանկանում զբաղվել:

Հաջորդ դաստիարակման ոճը «փոքրիկ անհաջողակն» է, որն էլ կարելի է գուգակցել մեծման ոճի հետ: Այս պարագայում ծնողին թվում է, թե իր երեխան ոչնչի չի կարող հասնել, որովհետև ունի ցածր ունակություններ, երեխան ընկալվում է որպես վատ, անհաջողակ և այլն, ու սա ընդունման բացասական բևեռն է: Երեխային վերագրվում է սոցիալական անկայունություն, որ նա դեռ շատ փոքր է ինչ-որ կարծիք հայտնելու համար, նրա խոսքը չի կարևորվում: Երեխան սաստվում է, երբ փորձում է ինքնագործունեությամբ զբաղվել, որովհետև ծնողը վստահ է, որ նա դեռ շատ փոքր ու սգետ է առանց ծնողի աջակցության ինքնուրույն մի բան անելու համար: Ծնողն է երեխայի փոխարեն որոշումներ կայացնում, որպեսզի ամեն կերպ զերծ պահի ցանկացած տիպի անհաջողություններից: Այս ոճ նախընտրողները հարցվողների մեջից ամենաանինքնավստահ մայրերն էին, նրանք, ովքեր շատ մեծ պահանջներ ունեն իրենց երեխաներից, ովքեր անընդհատ համեմատության մեջ են դնում իրենց երեխային մյուս մանուկների հետ, ու ամեն համեմատություն տանելու ժամանակ, ավելի մեծ ակնկալիքներ են ունենում երեխայից՝ ավելի կոտրելով երեխայի ներուժը: Երբ երեխան չի կարողանում բավարարել ծնողի պահանջները, թվում է, թե անհաջողակ է: Այս ծնողները կախյալ են, ինքնավստահ չեն ու երբեմն դիմում են այլ մարդկանց օգնությանը, որիեսզի հասկանան ինչպես դաստիարակեն իրենց երեխային կամ սովյալ իրավիճակում ինչպիսի վարք ցուցաբերեն: Ծնողը հաճախ խղճում է իր երեխային ու հատկապես կոնֆլիկտային իրավիճակներում, բայց ինչ-որ կոնկրետ գործողությունների չի դիմում: Ծնողը հաճախ, իրավիճակից ելնելով է իր որոշումը կայացնում, որովհետև նրա

համար գոյություն չունեն ունիվերսալ ստրատեգիաներ, և ամեն անգամ այն կառուցվում է վերստին:

Հաջորդ դաստիրակման ոճը սիմբոզն էր, ու այս ոճը հանդիպում էր օրինաչափորեն այն մայրերի մոտ, ովքեր ուշ տարիքում էին երեխա ունեցել կամ եթե դաստիրակման ենթակա է իրենց առաջնեկը: Այս ոճով ավելի շատ դաստիրակվում են տղա երեխաները, ու դրա համար, ավելի մեծ տարիքում նրանք քիչ պատասխանատու են, նույնիսկ ամենաչնչին հարցով զբաղվում է կինը: Դրա պատճառն է հայ հասարակությունում հայրիշխանության առկայությունը: Դեռևս հին ավանդական հայակակն ընտանիքներում կինը հարուստ էր այն ժամանակ, երբ ուներ տղա զավակ ու հենց այդտեղից է եկել տղա երեխայի հանդեպ սիմբիոտիկ վերաբերմունքը, այն գերխնամքի առկայությունը, որը նկատելի դարձավ հետազոտության արդյունքները վերլուծելիս: Ծնողը այս պարագայում երեխայի պատասխանատվությունը կիսում է, օգնում է, որ նա բացասական ինչ-որ բան կարողանա վերաձևափոխել որպես դրականի: Երեխայի պահանջումները առաջնային են, ու ավելի կարևոր են ծնողի համար, քան իր սեփական պահանջումներն են: Ծնողն ամեն ինչ անում է երեխայի համար, նույնիսկ եթե դա կարող է իրեն վնասել: Հաճախ ծնողներն այսպես վարվում են, որովհետև իրենց մանկության ժամանակ իրենք չեն ունեցել այն, ինչ շատ ցանկացել են, ու անում են ամեն ինչ, որպեսզի իրենց երեխան ոչնչի պակասություն չունենա: Այս պարագայում, ծնողը թույլ չի տալիս, որպեսզի իր երեխան զբաղվի ինքնագործունեությամբ: Ծնողը ձգտում է բավարարելու երեխայի բոլոր պահանջումները, որովհետև երեխան թվում է ն նրան փոքր և անպաշտպան:

Դաստիրակման վերջին ոճը խիստ, ավտորիտար ոճն է: Այս պարագայում կոպիտ ձևով է ծնողը մղում երեխային դեպի սոցիալական հաջողություն: Երեխայի ցանկացած տիպի ինքնագործունեությունը արգելվում է, և նրա փոխարեն որոշում կայացնողը ծնողն է, որովհետև ինքն ավելի փորձառու է, և կարող է երեխայի փոխարեն ճիշտ որոշումներ կայացնել: Երեխայի վարքի վերահսկում է տեղի ունենում: Ծնողը պահանջում է իր հրահանգների անհապաղ իրագործում: Երեխան պետք է պահպանի դիսցիպլինա ու լինի հնազանդ: Ծնողը սեփական կարծիքը պարտադրում է երեխային և ամեն կերպ հսկում է երեխայի ձեռքբերումները, սովորությունները, զգացողությունները, մտքերը և այլն: Այս տիպը նկատելի եղավ այն ծնողների մոտ, ում ուսերին դրված է ընտանիքի հոգսերի լուծման հարցերը: Մի կողմից ունենում են իրենց հանդեպ անարդարության զգացում, մյուս կողմից էլ պարտավորված են զգում երեխայի առջև, բայց ունեն նաև մտավախություն, որ երեխան կարող է կրկնել իրենց սխալները, դրա համար վերահսկողությունը մեծ էր երեխայի հանդեպ: Ինչպես նաև նախընտրում են այս ոճը այն մայրերը, ովքեր կամ գտնվում էն սոցիալական ոչ այնքան լավ պայմաններում կամ ունեն ցածր կրթության մակարդակ կամ էլ ժամանակին ականատես են եղել դաստիրակման հետևյալ ոճին: Ավտորիտար ոճը գերակշռող էր աղջիկ երեխաներին դաստիրակելու ժամանակ: Դրա պատճառը մեր հասարակության մշակութային առանձնահատկությունից է ելնում, որ աղջիկ երեխաները ավելի

սահմանափակ հնարավորություններ ունեն, որովհետև այդպես առաքինի է, նրանք ապագա մայրեր են և հետագայում նրանց հիմնական գործունեությունը պետք է ընտանիքի ներսում ծավալվի:

Կարելի է ենթադրել, որ ծնողները ունեն տարբեր դաստիարակման ոճեր, ու կարևոր չէ, թե ինչ պայմաններից ելնելով են նրանք նպատակահարմար գտել այդ ոճերը, բայց անկախ ամեն ինչից, յուրաքանչյուր մայր իր երեխային դաստիարակելիս, փորձում է անել ամեն ինչ, որպեսզի իր երեխան հետագայում հասնի մեծամեծ հաջողությունների: Հաճախ նրանք ինչ-որ բան անում են ենթագիտակցորեն՝ այդպես ճիշտ համարելով ու չհասկանալով, թե ինչի կարող է հանգեցնել մայրական նման վարքը, բայց ինչ վարք էլ ցուցաբերեն, անում էն դա հանուն երեխայի բարեկեցիկ ապագայի, և բարօրության:

Հաջորդ բլոկի հարցերը կապված էին առհասարակ մոր աշխարհայացքի, ընկալումների, պատկերացումների հետ: Երեք խմբի հարցվողներն էլ միևնույն բնութագրիչները առանձնացրեցին այն հարցին, թե որն է կնոջ հիմնական դերը ընտանիքում:

Մոր հիմնական ֆունկցիան բնակչության վերարտադրությունն է, մարդկանց սերունդների մշտական հերթափոխությունն ապահովելն է, ինչպես նաև երեխաներին դաստիարակելը, նրանց խնամքով զբաղվելը: Իսկ տղամարդու առաքելությունն էլ համարվում է այդ ընտանիքի բարօրության մասին մտածելը: Կնոջ զբաղվածության մասին կար մի դինամիկ զարգացում ըստ հարցվողների կրթական մակարդակի. այսինքն՝ ցածր կրթական մակարդակ ունեցողները անվերապահորեն ընդունում էին տղամարդու գերակայությունը, իսկ այն հարցվողները, ովքեր ունեին կրթական բարձր մակարդակ կարծում էին, որ կինը պետք է կարերա ստեղծի, ինքնուրույնանա, ընտանիքում դերերը պետք է հավասարաչափ բաշխված լինեն, ամուսինների միջև պետք է լինի դեմոկրատական հարաբերություններ: Սակայն հարցվողներից ոչ ոք չէր պատկերացնում, որ տնային տնտեսությամբ զբաղվելը տղամարդկային գործ է:

Աղջիկներին բնորոշում են մայրերը որպես առաքինի, համեստ, օրինակելի, խելացի, պարտաճանաչ, մաքրասեր, իսկ տղաներին՝ աշխույժ, տնտեսող, ճարպիկ, պատասխանատու և այլն: Արտաքին տեսքին, մաքրությանը վերաբերվող հատկանիշները երկու սեռի երեխաների համար ընդանուր են, սակայն աղջիկների պարագայում դա պարտադիր նախապայման է, իսկ տղաների դեպքում՝ ցանկալի: Մայրերն ամեն կերպ իրենց ուղերձներով ստիպում են երեխաներին, որպեսզի համապատասխան դերերը ստանան. «Դու աղջիկ ես, դու պե՛տք է մաքրասեր լինես», «Դու տղա ես, դու չպետք է լաց լինես» և այլն: Նույնիսկ զուգահեռներ անցկացնելիս, մայրերը երեխաներին համեմատում են տան անդամների, բարեկանների հետ՝ համապատասխանեցնելով սեռը, այսինքն՝ տղա երեխաներին ասում են, որպեսզի օրինակ վերցնեն հայրիկից, պապիկից, քեռիից և այլն, իսկ աղջիկ երեխաներին՝ մայրիկից, տատիկից, հորաքրոջից և այլն:

Աղջիկ և տղա երեխաների բնութագրիչների տարբերությունները ըստ մայրերի երեք խմբերի հետևյալն են՝

- Այն մայրերը, ովքեր դաստիարակում էին միայն աղջիկ երեխա, նրանք ավելի հետևողական են, որ իրենց աղջիկ երեխան զերծ լինի ամեն տեսակի «տղայական» բաներից, և հնարավորինս իրեն դրսևորի, որպես իսկական աղջիկ՝ մեղմ խոսի, մաքրասեր լինի, օրինակելի լինի, բարձր առաջադիմություն ունենա, օգնի մայրիկին տան գործերում:
- Այն մայրերը, ովքեր դաստիարակում են միայն տղա երեխա, նրանք էլ նույն կերպով պահանջկոտ են տղայի հանդեպ: Փորձում են անել այնպես, որ նմանվի հորը՝ կրկնորինակելով վարքի մասկուլին մոդելը: Մայրը այս պարագայում միշտ չի խրախուսում, որ տղա երեխան օգնի իրեն տան գործերում, մայրն է ճաշ պատրաստում, տղայի հագուստը հարդարում, նրա ետևից մաքրում և այլն: Պատահում է, երբ մայրը ստիպում է, որ տղա երեխան ինքնը անձամբ հետևի իր սենյակի մաքրությանը, ինքը բավարարի իր սեփական ցանկությունները, բայց դա արվում է նրա համար, որ տղան լինի ինքնուրույն, այլ ոչ թե հետագայում դա դառնա իր պարտականությունը:
- Մայրերը, ովքեր ունենին երկու սեռի երեխա, հավասար ակնկալիքներ ունին նրանցից: Մայրերն ավելի հանգիստ էին տանում այն փաստը, որ կարող է աղջիկ երեխան ինչ-որ հարցում օգնի հորը, իսկ տղա երեխան՝ մորը: Ծնողը, միևնույնն է, հստակ վարքային ակնկալիքներ է ունենում ամեն սեռի երեխայից, բայց արդեն դաստիարակման ոճը և ձևը ընդհանուր է լինում: Ծնողն այս պարագայում համեմատաբար տուլերանդ է:

Անգամ խաղալիքների հարցում մայրերն ունենին հստակ կողմնորոշվածություն, թե որ սեռի երեխան ինչ տեսակի խաղալիքով պետք է խաղա և ինչպես պետք է ժամանակի սնօրինումը լինի:

- Առաջին խմբի հարցվողները, ովքեր ունենին միայն աղջիկ երեխա, նշում էին, որ հիմնական զբաղվածությունը պետք է լինի տիկնիկներով խաղալը, մոր կոսմետիկայով հետաքրքրվելը, մայրիկի շորեր հագնելը, և իրեն մեծ օրորդ երևակայելը:
- Տղա երեխայի համար հատկանշական է մեքենաներով, ռոբոտներով, զենքերով խաղալը: Բոլոր մարդիկ, ով տղա երեխայի համար նվեր է ուզում գնել, ավելի շատ առաջնորդվում է վերոհիշյալ խաղալիքների ընտրությամբ:
- Մայրերը, ովքեր ունենին երկու սեռի երեխաներից էլ, առանձնացնում էին, որ աղջիկ երեխան պետք է խաղա տիկնիկներով, իսկ տղա երեխան՝ մեքենաներով, սակայն նրանց համար խնդիր չի լինի, եթե տղան խաղա տիկնիկով, իսկ աղջիկը՝ մեքենայով, որովհետև դիտարկում են դրանք որպես ուղղակի խաղալիք, և անհանգստանալու տեղիք չի տալիս, դա իրենց համար

երեխայի ժամանցը ապահովման ձև է, ու կարևոր չէ երեխան կոնկրետ ինչ խաղալիքով է իրեն զբաղացնում:

Այս պարագայում ևս մեկ անգամ համոզվում ենք, որ այն մայրերը, ովքեր դաստիարակում են երկու սեռի երեխաներ, ավելի տոլերանդ են:

Հաջորդ բլոկի հարցերը ուղղված են մոր սպասելիքներին իր երեխաներից: Այստեղ ակտուալ է մասնագիտության ընտրության հարցը, թե ինչպես են պատկերացնում ծնողները իրենց երեխաների ապագան:

Կինն անկախ ամեն ինչից, պետք է լինի լավ տնային տնտեսուհի, որպեսզի կարողանա հոգ տանել ընտանիքի անդամների մասին, իսկ տղամարդն էլ իր հերթին լինի գումար վաստակող աշխատույժ: Այստեղ շատ հետաքրքրական էր այն փաստը, որ բոլոր մայրերը ցանկանում են իրենց երեխաներին տեսնել բարեկեցիկ, հաջողակ, կրթված, սակայն աղջիկ երեխայի պարագայում առաջնային նախապայման է, որ նա պետք է ունենա հաջողված ամուսնություն և այն մասնագիտությունը, որը նա ընտրում է, կամ այն աշխատանքը, որը նա հետագայում կատարելու է ցանկալի է, որ լինի նախասիրությունից ելնելով կատարված ընտրություն, իսկ տղա երեխայի պարագայում ընտրվում է մի բան, որը կարող է հետագայում մեծ եկամտի աղբյուր հանդիսանալ: Կան մասնագիտություններ, որոնցով կնոջ զբաղվելն այդքան էլ պատվելի չէ: Մասնագիտությունների հարցի շուրջ էլի գրեթե բոլորը համակարծիք էին, քանի որ կան այնպիսի մասնագիտություններ, որոնք վայել չեն կանաց: Այդպես, օրինակ՝ դոդո-փչող, գնացքի մագուղ լցնող, շինարարություն և այլն: Սա բխում է նրանից, որ նախկինում տղամարդիկ են նմանատիպ աշխատանքներով զբաղվել, իրենց ուժի պատճառով, քանի որ բնատուր ֆիզիկապես ավելի ուժեղ են, հետո ժամանակի ընթացքում դա դարձել է բնական երևույթ, որ այդ աշխատանքները տղամարդիկ պետք է կատարեն, ու եթե հասարակության մեջ մի բան կարծրանում է, այն դժվարությամբ է փոփոխությունների ենթարկվում, դրա համար եթե կինն այսօր կատարի նման աշխատանք, ուղղակի գեղեցիկ չի դիտարկվի: Այստեղ հարցը ֆիզիկական ունակությունների տարբերությունն է, որը հետագայում դարձել է ակնկալիք կամ խտրականություն, որոնք ունենում են սովորաբար կանանց հանդեպ:

Առաջին խմբի հարցվողները, իրենց աղջիկ երեխաներին պարտադրում են, որպեսզի նրանք միշտ հետևեն իրենց հիգիենային, պահեն տան մեջ կարգ ու կանոն, չաղտոտեն, իսկ աղտոտելու դեպքում անպայման հավաքեն իրենց ետևից:

Աղջկա առջև դրված հիմնական սահմանափակումները կապված են հայ հասարակության ավանդապաշտ լինելու հետ, դրա համար հաճախ մայրերը նշում էին, որ աղջկա առաքինի և բարոյական լինելը պարտադիր է, ու մեծանալիս՝ կարգելվի նրան հաճախակի շփում ունենա հակաձակ սեռի ներկայացուցիչների հետ, իսկ տղաների առջև դրվում էր այն սահմանափակումը, որ նրանք ամեն կերպ հեռու մնան այն ամենից, ինչը կանացի է համարվում: Օրինակ՝ կոսմետիկա օգտագործելը, երբ տղան լացում է, նրան

սաստում են, ասելով «Դու աղջիկ չես» ու փոքր հասակից սովորեցնում են տղաներին իրենց էմոցիաները քողարկել:

- Աղջիկ երեխա ունեցող մայրերը շատ հետևողական են, որ իրենց երեխաները անպայման օգնեն իրենց տան գործերում, փոշիները սրբեն, անկողինը հարդարեն, ափսեները չորացնեն և այլն:
- Երկրորդ խմբի մայրերը ինչքան էլ ստիպեն, որ իրենց տղաները լինեն հետևողական տան մաքրությանը, միևնույնն է, մայրերը շատ հեշտությամբ այդ աշխատանքը կատարում են տղայի փոխարեն, եթե նույնիսկ պարտադրեն, ու տղան չկատարի այն, ապա դա խնդիր չի լինի մոր համար, որովհետև ինքը կարող է անել դա:
- Երրորդ խմբի մայրերը կրկին հետևողական են, որ յուրաքանչյուր երեխան մեծանա ինքնուրույն և ինքը կարողանա բավարարել սեփական պահանջմունքները, սակայն երբ տղա երեխան կամակորություն է անում, և հրաժարվում է իր ետևից մաքրել, ապա մայրը հրահանգ է տալիս աղջիկ երեխային, որ նա անի դա եղբոր փոխարեն և փոքր հասակից սովորեցնում են աղջիկներին, որ դա իրենց «պարտականությունն» է:

Կրթական բարձր մակարդակ ունեցող կանայք ավելի դեմոկրատական հայացքների տեր են և ունեն ավելի քննադատական մոտեցում գենդերային կարծրատիպերի նկատմամբ: Ըստ նրանց, ընտանիքում դաստիարակության և կենցաղային հարցերում պետք չէ դերերի հստակ տարանջատում լինի, քանի որ գույգերը պետք է միմյանց լրացնեն, փոխզիջման գնան և օգնեն իրար ամեն ինչում: Սակայն այսպիսի հայացքների տեր կանայք ավելի քննադատաբար մոտեցում կունենան այն տղամարդկանց հանդեպ, ովքեր խոհանոցային, մաքրության, կենցաղային հարցերով զբաղվեն, քան երբ այդ ամենը կանի կինը:

Հայ հասարակության մեջ կարծրացած գենդերային կարծրատիպերը ամուր կերպով կառչած են հայկական կենցաղին: Դրա համար կան տարբերություններ, թե ինչպիսի վարք պետք է ցուցաբերի աղջիկ երեխան և ինչպիսի վարք՝ տղա: Եթե աղջկա համար նախատեսված վարքը ցուցաբերում է տղան, կամ հակառակը, ապա դա դիտարկվում է նորմային խաղտում և սրացման ժամանակ նույնիսկ անոմալ երևույթ է համարվում:

Վարքագծի հետ կապված, բոլոր բացասական դրսևորում ունեցող վարքեր ավելի բնութագրական են տղաներին, ու ամոթալի է, երբ աղջիկն է ընդօրինակում այդ վարքը, որովհետև կա կարծրատիպային մտածողություն, որ աղջիկը պետք է լինի մաքրասեր, օրինակելի, հնազանդ, համեստ, իսկ տղան իրավունք ունի ուշ ժամի տուն գալու, ինչ-որ բան կոտրելու, փչացնելու, աղտոտելու և այլն: Կինը միշտ պետք է պատշաճ տեսք ունենա, իսկ տղամարդը իրավունք ունի նույնիսկ կիսամերկ ներկայանալու հանրությանը:

Անբակտելի փաստ է, որ հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը և կրոնը հայերի կյանքում կարևորագույն տեղ է զբաղեցնում: Եթե հիշենք, թեկուզ Աստվածաշունչը,

այնտեղ էլ Աստված Եվային ստեղծեց Ադամի կողից, որ լինի կողակից ու հնազանդ: Ասավ, որ Ադամը պետք է տանջվի ընտանիքի համար կերակուր հայթհայթելով, իսկ Եվան էլ պետք է տանջվի երեխաներ ունենալուց: Այսինքն՝ հստակ տարանջատած դերեր կան, որ տղամարդը պետք է ընտանիքը պահի, կինը՝ երեխաներով զբաղվի: Մա ամուսնական կյանքի այն բանաձևն է, որը ավելի ներդաշնակ է դարձնում ընտանեկան մթնոլորտը:

Հայաստանը իր պատմության մեջ, մշտապես պատերազմական հարձակումների մեջ է եղել, անընդհատ թշնամիների կողմից կշտամբանքների է ենթարկվել: Դրա համար լինելով թվաքանակով քիչ՝ հայ կանանց տղամարդիկ պահել են մեկուսացած, որպեսզի թշնամու զոհ չդառնան, ու կարողանան միայն հայի համար սերունդ տալ: Այստեղից էլ եկել է այն դերային բաշխումը, որ կինը պետք է զբաղվի ներընտանեկան, կենցաղային հարցերով, իսկ տղամարդը՝ պաշտպանի արտաքին վնասներ կրելուց, ապահովի ընտանիքը նյութապես:

Հաջորդ պատճառը՝ տարածաշրջանային է: կովկասյան բոլոր երկրներում, կնոջ հանդեպ կիրառվում են մի շարք սանկցիաներ: Չկա որևէ Կովկասյան երկիր, որտեղ կինը լինի հավասարազոր տղամարդուն: Դա կապված է բնակլիմայական պայմաններից: Լեռնային երկրներում մարդիկ ավելի դժվարությամբ են հաց հայթհայթում, իսկ դժվարությունն էլ ենթադրում է ֆիզիկական ուժի գործադրում, ինչի առկայությամբ օժտված չէր կինը, դրա համար, նրա կարևորությունն էլ սահմանափակվում էր: Ու այդ պատճառում, կովկասյան երկրներում ընտանիքի ղեկավարը տղամարդն է: Տղամարդիկ Կովկասում ցանկացած կնոջ մեջ տեսնում են պոտենցիալ մոր կերպար և դրա համար էլ նրանց վերաբերվում են, որպես սրբություն: Իսկ այն, ինչ սուրբ է, պետք է ցանկացած պիղծ երևույթներից լինի հեռու, պետք է տան մեջ ապահով, փափուկ պահպանվի: Տղամարդկանց մոտ հստակ տարանջատվում է ուղղակի կին և տան կին կերպարները: <<Տուն տանելու>> կինը պետք է լինի ամեն ասպեկտներով առաքինի, որ նմանատիպ սերունդ կարողանա դաստիարակել:

Հետազոտության ընթացքում եկանք հետևյալ եզրակացության,որ՝

1. Երեխայի կենսաբանական սեռը ուղղակիորեն ազդեցություն է ունենում նրա քաղաքացիական, գենդերային, սոցիալական սեռի ձևավորման վրա:
  - 1.1. Երեխայի գենդերային սեռը որոշվում է նրա կենսաբանական տարբերակման առանձնահատկություններով, որի համապատասխան ընթանում է երեխայի հետագա դաստիարակությունը:
  - 1.2. Գենդերային կարծրատիպերը ազդում են մոր՝ տարբեր սեռի երեխաներից ունեցած դերային սպասելիքների վրա:
2. Կախված երեխայի սեռից, տարբեր են ծնողավարման ոճերը:
  - 2.1. Տղա երեխաներին դաստիարակելիս, ամենից շատ հատուկապող դաստիարակման ոճը սիմբոզն է:
  - 2.2. Աղջիկ երեխաների պարագայում գերակշռում է դաստիարակման ավտորիտար ոճը:

3. Գոյություն ունեն մայրերի դաստիարակման տարբերություններ կախված նրանցից, թե մայրը դաստիարակում է միայն աղջիկ երեխա, միայն տղա երեխա թե միառժամանակ երկու սեռի երեխաներ:
  - 3.1. Մայրերը, ովքեր դաստիարակում էին երկու սեռի երեխաներ, ավելի հանդուրժող են:
4. Մայրերը տարբեր սեռի երեխաներից ունեն դերային տարբեր սպասելիքներ:
  - 4.1. Տնային տնտեսության վարման գործընթացը համարվում է կնոջ պարտականությունը, իսկ ընտանիքը ֆինանսապես ապահովելը՝ տղամարդու պարտականությունը:
  - 4.2. Աղջիկ երեխաներին տրվող ուղերձները ֆեմիննական են, իսկ տղաներին՝ մասկուլին:
  - 4.3. Տղա երեխաների պարագայում չի խրախուսվում, երբ նրանք արտահայտում են իրենց էմոցիաները և լաց են լինում, իսկ աղջիկ երեխաների պարագայում դա նորմալ է համարվում, իսկ մեծ տարիքում նորմալ է. Երբտղամարդը ունենում է էմոցիոնալ պոռթկում, իսկ կինը ամեն ձև պետք է զսպի էմոցիաները:
  - 4.4. Տղամարդու աշխատանքը պետք է լինի եկամտաբեր, իսկ կնոջ աշխատանքը կարող է բխել նրա հետաքրքրություններից և բարձր աշխատավարձը պարտադիր նախապայման չէ:
  - 4.5. Տղա երեխայից ակնկալվում է, որ ապագայում նա առաջնահերթ պետք է եկամտաբեր աշխատանք ունենան, իսկ աղջիկ երեխայից՝ ունենան բարեհաջող ամուսնություն:

**Ամփոփում** – Թեմայի շրջանակներում կատարվել է հետազոտություն, որի նպատակն էր հասկանալ, թե ինչ դերային սպասելիքների են ունենում մայրերը տարբեր սեռի երեխաներից, արդյոք գենդերային կարծրատիպերը ազդում են ծնողի՝ դաստիարակման ոճ ընտրելու վրա, և կա արդյոք դաստիարակման ոճի, ուղերձների, դերային սպասելիքների, ակնկալիքների տարբերություն՝ կախված երեխայի սեռից: Հիմնվելով խորին հարցազրույցի մեթոդի վրա՝ հաստատվել է, որ գենդերային կարծրատիպերը ամուր կերպով կառչած են կենցաղին և դառել են կենսակերպ, իսկ ծնողը՝ լինելով առաջնային սոցիալիզացիայի ազենտ, այդ կարծրատիպերը արմատացնում է երեխայի գիտակցման մեջ:

**Резюме** - В рамках статьи было проведено исследование с целью выяснения, какие ролевые ожидания есть у матери от своих детей в зависимости от пола ребенка. Влияют ли гендерные стереотипы на стиль воспитания детей. В ходе глубинных интервью стало ясно, что гендерные стереотипы прочно сплетены с бытом и являются образом жизни, и родители, как первичные агенты социализации, укрепляют это все в мышлении ребенка.

**Resume** – This article is based on a study aimed at understanding what kind of role expectations have mothers from the children of different sexes and to find out whether gender stereotypes have any



impact on parent's choice choosing the upbringing type, and whether the way of upbringing, messages, and role expectations differs depending on the gender of the child. Based on the deep interview method, it has been stated, that gender stereotypes are strongly connected to the routine life and have become a lifestyle. And being a primary socialization agent, the parent ingrains these stereotypes in the child's mind.

### Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք/ ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին ըստ 173 հոդվածի
2. Берн Э. “Трансакционный анализ и психотерапия” СПб, 1992 стр. 16
3. Берн Эрик. Люди, которые играют в игры. — М., 1988. стр. 40-45
4. Захарова И. В. Роль родителей в гендерной социализации ребенка [Текст] / И. В. Захарова // Молодой ученый. — 2011. — №5. Т.2. — С. 140-142
5. Ильин Е.П.. Пол и гендер. С-Пб.: Питер, 2010. Ст 156
6. Реан А.А, Психология подростка С.Петербург Москва 2003 с.87
7. Кле М. Психология подростка. Психосексуальное развитие. (Пер. с фр.). - М., 1991
8. Кон И.С. Психология ранней юности. - М., 1982
9. Национальный Университет Узбекистана, отделение психологии. Т., 2003. 145
10. Блохина Наталья Александровна понятие гендера: становление, основные концепции и представления/ <http://www.gender-cent.ryazan.ru/blohina.htm>

## Աննա Բաղրամյան

Վանաձորի պետական համալսարան,

Մանկավարժության ֆակուլտետ, մագիստրատուրա 2-րդ կուրս

### Սեռականությունը և դրա բաղադրիչները

Տարբեր դարաշրջաններում սեռականության մասին ունեցած պատկերացումները եղել են խիստ սահմանափակ: Այն հարցերը, որոնք կապված են եղել սեռական ուղորտի հետ, ուղղակի չեն քննարկվել: Այսօր էլ հայ հասարակության մեջ գերադասվում է չանդրադառնալ տվյալ հիմնախնդրին: Ոչ տանը, ոչ դպրոցներում, ոչ բարձրագույն ուսումնական հաստատություններում չի իրականացվում սեռական դաստիարակություն, սեռականության, սեռական հասունացման, սեռական կողմնորոշման և այլ թեմաների շուրջ խոսակցությունները, քանի որ դա համարվում է անբարո:

XXI դարում տեղի ունեցած հսկայական փոփոխությունների կյանքի տարբեր ուղորտներում՝ գիտություն, տեխնիկա, բժշկություն և այլն, անհրաժեշտություն առաջացրեցին մարդկանց իրազեկելու և հիմնարար գիտելիքներ հաղորդելու սեռականության մասին: Հոգեբանության և բժշկության շրջանակներում կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ սեռականության վերաբերյալ գիտելիքների պակասը հանգեցնում են մի շարք բացասական հետևանքների, որոնք առաջնահերթ սպառնում են մարդու ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Կարևոր է հասկանալ, որ սեռականությունը մարդու անհատականության կարևոր մասն է, որը հնարավորություն է տալիս իրեն զգալու լիարժեք և ներադաշնակ:

Գոյություն ունեն սեռականության եզրույթի մասին տարբեր սահմանումներ, սակայն առավել ընդունված և տարածված է հետևյալ սահմանումը. Սեռականությունը յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունն է, որը ապահովում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատի և հասարակության անդամի:<sup>108</sup>

---

<sup>108</sup> Акимова Л. Психология сексуальности. Учебное пособие. — Одесса: СМЛ, 2005,

Սեռականությունը, որպես հոգեբանական երևույթ, ունի մի շարք բաղադրիչներ, սակայն այս հոդվածում կանդրադառնանք 4 հիմնականներին՝ կենսաբանական սեռին, սեռական կողմնորոշմանը, սեռական նույնականացմանն ու սեռի սոցիալական/գենդերային դերերին (կնոջ կամ տղամարդու վարքագծով բնորոշվող մշակութային նախադրյալներին պատկանելը):<sup>109</sup>

Առանձնացնում են կենսաբանական սեռի երեք տեսակ՝ արական, իգական, միջին սեռ:

Անհատի սեռը միջին է համարվում, երբ անհատի ներքին և արտաքին սեռական օրգանները ոչ հստակ արական են, ոչ էլ հստակ իգական և կան արական և իգական ներքին ու արտաքին սեռական օրգաններ:

Խոսելով մարդու կենսաբանական սեռի մասին՝ անհրաժեշտ է նշել, թե սեռական տարբերակման ո՞ր մակարդակն է դիտարկվում: Ըստ այդմ, դիտարկում են՝

1. գենետիկական սեռ, որը բնորոշվում է մարդու քրոմոսոմային հավաքակազմով և լինում է XX (իգական), XY (արական), ինչպես նաև հնարավոր են միջանկյալ տարբերակներ՝ XXY (ինտերադիկ) և XYY (ինտերտոլա),

2. գոնադային սեռ, որը բնորոշվում է սեռական գեղձերի առկայությամբ և որոշիչ է հանդիսանում սերմնարանի կամ ձվարանի առկայությանը, սակայն հնարավոր է նաև երկու գեղձերի միաժամանակյա առկայություն (հերմոֆրոդիտիզմ) կամ սեռական գեղձերի միջանկյալ տարբերակները (օրինակ՝ օվոտեստիոս),

3. անատոմիական սեռ, որը բնորոշվում է մարդու արտաքին կամ ներքին սեռական օրգանների առկայությամբ,

4. մանկաբարձական սեռ, որը պտղի սեռն է և բնորոշվում է մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից՝ համաձայն հղի կնոջ կլինիկական գնումների

5. ծննդյան սեռ, որը նորածնի սեռն է, բնորոշվում է ծնունդն ընդունող մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից,

6. հորմոնային սեռ, որը բնորոշվում է անձի սեռական գեղձերի կողմից արտադրվող սեռական հորմոնների քանակական առավելությամբ և երկրորդային սեռական հատկանիշների առկայությամբ (հաճախ հորմոնային խանգարումները պատճառ են հանդիսանում անձի հորմոնային սեռի և անատոմիական սեռի տարբերության)

---

<sup>109</sup> The International Encyclopedia of Sexuality, p. 27

7. անձնագրային սեռ կամ անձի փաստաթղթերում նշված սեռ, որը կարող է չհամընկնել ծննդյան սեռի հետ (օրինակ՝ հերմոֆրոդիտիզմի կամ փոխսեռականության դեպքում):<sup>110</sup>

2. Մեռական կողմնորոշումը անհատի հուզական, ռոմանտիկ կամ սեքսուալ գրավչությունն է նույն կամ այլ սեռի անձանց նկատմամբ:

Առանձնացնում են սեռական կողմնորոշման հետևյալ տեսակները.

1. տարասեռական կամ հետերոսեքսուալ,
2. նույնասեռական կամ հոմոսեքսուալ,
3. երկսեռական կամ բիսեքսուալ,
4. անսեռական կամ ասեքսուալ:<sup>111</sup>

Մեռական կողմնորոշումը հայ իրականության մեջ մարդու սեռականության թերևս ամենավիճահարույց բաղադրիչն է հանդիսանում: Մինչև 20-րդ դարի 70-ական թվականները նույնասեռականությունը համարվել է հոգեկան և վարքային շեղում, որը ենթակա է բուժման: Սակայն երկար բանավեճերի, հանրային ճնշումների, հետազոտությունների հետևանքով 1973թ. Ամերիկյան հոգեբույժական ասոցիացիայի հոգաբարձուների խորհուրդը նույնասեռականությունը հանել է Հոգեկան խանգարումների ախտորոշման և վիճակագրության ձեռնարկից (DSM-II), որով ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում առաջնորդվում են հոգեկան և վարքային խանգարումներն ախտորոշելիս: Հարկ է նշել, որ առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 1990թ. մայիսի 17-ին հեռացրել է նույնասեռականությունն ախտորոշումը Հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD-10) հոգեկան խանգարումների շարքից, որով առաջնորդվում են նաև մեր երկրի հոգեկան առողջության մասնագետները:

Անհաժեշտ է գիտակցել, որ նույնասեռականությունը ոչ հիվանդություն է, ոչ հոգեկան խանգարում, ինչը մասին փաստում են հոգեկան առողջության առաջատար կազմակերպությունները, այդ թվում առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

3. Մեռական նույնակացումը անհատի կողմից սեփական սեռի հոգեբանական զգացումն ու ընկալումն է՝ արական, իգական, միջին, չեզոք և այլն: Եթե կենսաբանական սեռն այն է, ինչը որոշվում է արտաքին և ներքին սեռական օրգանների և արտադրվող միավորների

<sup>110</sup> [www.msarmenia.org](http://www.msarmenia.org)

<sup>111</sup> <http://www.psychiatry.org>

հիման վրա, ապա սեռական նույնակացումն այն է, ինչը մեր գլխում է, <sup>112</sup> Ի՞նչ սեռի եմ եսե հարցի պատասխանն է անհատի կողմից:

Սովորաբար կենսաբանական սեռը և սեռային ինքնությունը համապատասխանում են մեկը մյուսին. իգական կենսաբանական սեռի անհատներն իրենց սովորաբար համարում են իգական սեռին պատկանող: Նույնն էլ արական սեռի անհատների դեպքում. երբ կենսաբանական սեռն արական է լինում, անհատն իրեն սովորաբար արական սեռի է համարում: Այնուամենայնիվ, կան մարդիկ, որոնք զգում են տարբերություն և անհամապատասխանություն իրենց կենսաբանական սեռի ու սեռային ինքնության միջև: Նման անհամապատասխանության զգացումը բնորոշ է տրանսսեքսուալ մարդկանց:

4. Սեռի/գենդերի սոցիալական դերեր: Շատ մշակույթներում հասարակության սպասումները հետևյալն են՝ իգական սեռի անհատները պետք է իրենց գենդերով աղջիկ, հետագայում էլ կին լինեն, իսկ արական սեռի անհատները՝ տղա, հետո էլ՝ տղամարդ:

Գենդերային ինքնությունն անհատի կողմից իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին: <sup>113</sup>

Գենդերային դերն այն հասարակական սեռն է, գործողություններն ու վարքագիծը, որոնցով դու հանդես ես գալիս հասարակության մեջ: Գենդերային դերը դրսևորվում է այն գործողություններով ու վարքով, որոնցով հասարակության մեջ հանդես է գալիս անհատը՝ ելնելով իր գենդերային ինքնությունից: Այն սեփական գենդերի արտահայտումն է տվյալ մշակույթում: <sup>114</sup>

Գենդերային դերը մշակույթի կողմից սահմանված դիրքորոշումների, վարքագծի օրինաչափությունների և անձնային հատկանիշների ամբողջությունն է, որոնցով անհատն

---

<sup>112</sup> [www.pinkarmenia.org](http://www.pinkarmenia.org)

<sup>113</sup> [www.apa.org](http://www.apa.org)

<sup>114</sup> Ильин Е. П. Пол и гендер. — СПб.: Питер, 2010, стр. 72

ապրում է որպես կարծրատիպորեն սահմանված առնական կամ կանացի սոցիալական դերերով: <sup>115</sup>

Հիմնականում գենդերային ինքնության հիման վրա է կառուցվում գենդերային դերը: Այսպես, արական սեռի անհատի գենդերային ինքնությունը սովորաբար տղամարդ է լինում: Նրան նաև կարող է դուր գալ այն ամենը, ինչը տվյալ տարածաշրջանում և մշակույթի մեջ գուցորդվում է տղամարդ հասկացության հետ, և նա կարող է հանդես գալ որպես տղամարդ (այսինքն, լինել տղամարդ և գենդերային ինքնությամբ, և գենդերային դերով), նույնն էլ՝ կնոջ դեպքում:

Այն անհատները, որոնք իրենց գենդերային ինքնությամբ ու գենդերային դերով համապատասխանում են սոցիումի սպասումներին ու տվյալ մշակույթում իշխող գենդերային կարծրատիպերին կոչվում են սիսգենդերներ: Իսկ նրանք, ովքեր անհամապատասխանություն ունեն իրենց կենսաբանական սեռի, սեռային և գենդերային ինքնության և գենդերային դերի ու հասարակական ակնկալիքների հետ և հանդես չեն գալիս այն գենդերային դերով, որն իրենցից ակնկալվում է կոչվում են տրանսգենդերներ:

Տրանսգենդերն այն անհատն է, որը ժամանակավորապես կամ մշտապես նույնականացնում է իրեն ծննդյան ժամանակ հաստատված գենդերից տարբերվող գենդերի հետ: <sup>116</sup>

Բացի կին և տղամարդ գենդերային ինքնություններից, աշխարհի բազմաթիվ հասարակություններում կան նաև այլ գենդերային ինքնություններ՝ հիջրաները (Հնդկաստան), բիսուները, չալալայներն ու չալաբայները (Ինդոնեզիա), ֆա'աֆաֆինները (Սամոա), մահուները (Պոլինեզիա), «երկու հոգի ունեցողները» (Ամերիկայի բնիկների մոտ) և այլն: Այս մշակույթներում հասարակությունն ընդունում է, որ բացի կին ու տղամարդ գենդերներից կան այլ գենդերային ինքնություն ունեցող անհատներ՝ տրանսգենդերներ:

Հայ հասարակության մեջ տղամարդուց ակնկալում են որոշակի գործողություններ, պահվածք, վարվելաձև: Նույնիսկ խոսքեր կան, որոնց գործածումը տղամարդկանց կողմից

---

<sup>115</sup> Бёрн Шон. Гендерная психология = The Social Psychology of Gender. — СПб: Прайм-Еврознак, 2002, стр.202

<sup>116</sup> Всемирная профессиональная ассоциация по трансгендерному здоровью. Стандарты помощи транссексуальным, трансгендерным и гендерно неконформным людям. 7-я версия

առավել թույլատրելի է, ինչպես նաև արտահայտություններ, որոնք ավելի շատ բնորոշ են կնոջը: Այսինքն, միայն արական սեռական օրգաններ ունենալը դեռևս չի նշանակում տղամարդ կատեգորիային համապատասխանել. տղամարդ չեն ծնվում, տղամարդ դառնում են,- ասում է հայտնի խոսքը: Հայ մշակույթներում ընդունված է իսկական տղամարդու մասին հետևյալ պատկերացումը՝ իսկական տղամարդը պետք է տուն կառուցի, ծառ տնկի և որդի ունենա: Բացի սրանից, ակնկալվում է, որ «իսկական տղամարդը պետք է լինի առնական, ուժեղ և նախաձեռնող, «իսկական տղամարդը երբեք չպետք է լացի և այլն: Ակնկալվում է, որ տղամարդը պետք է լինի ակտիվ, ձեռնարկող, գործունյա:

Նույնը և կանանց դեպքում. կան որոշակի ակնկալիքներ կնոջ պահվածքի, խոսքի, տեսքի առումով՝ «խելոք, «տուն տանելու կամ «օջախի աղջիկ, «բարոյական, «եփող-թափող և այլն: Հայաստանում ենթադրվում է, որ կինը պետք է լինի հեզ, հնազանդ, պասիվ և ենթարկվող: Եվ եթե աղջիկը կամ կինը չի համապատասխանում տվյալ պահանջներին, նրան տարբեր պիտակներ են տրվում, առավել պահպանողականները կին և տղամարդ գենդերներին չհամապատասխանող անհատներին համարում են այլասերված, վատ «անբարոյակա» վտանգավոր:

### **Եզրակացություն**

Սեռականությունը լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է կենսաբանական, հոգեկան, սոցիալական և մշակութային գործոններ: Այն համարվում է բնական պահանջմունք և հանդես է գալիս որպես կյանքի շարժիչ ուժը: Այն անձին դարձնում է գրավիչ, ինքնավստահ, ինքնաբավ, ապահովում է նրա ակտիվությունը սոցիալական միջավայրում, պահպանում է ֆիզիկական և հոգեկան առողջությունը, հնարավորություն է տալիս միջանձնային հարաբերություններ հաստատելու, ընտանիք կազմելու, սերունդը շարունակելու:

Մակայն երբ մարդը գաղափար չունի սեռականության մասին կամ ունենք գիտելիքի պակաս այդ ոլորտում, դա հանգեցնում է մի շարք բացասական հետևանքների՝ մենք սկսում ենք կողմնակալ վերաբերմունք ցուցաբերել և՛ ինքերս մեր, և՛ ուրիշների նկատմամբ, ունենք անինքնավստահություն և սեփական անձի մերժում, անհանդուրժող և չընդունող վերաբերմունք մարդկանց նկատմամբ, ագրեսիվ ու բռնի վարքի դրսևորում, խտրականություն, ատելություն և այլն: Հետևաբար, մեր և ուրիշների սեռականության մասին գիտելիքների ու տեղեկատվության շարունակական համալրումը կարևոր է ոչ միայն մեր սեռական և հոգեկան առողջության ու ներդաշնակության, այլև մեր ու այլոց բարօրության և համերաշխության համար:

## Ամփոփում

Հոդվածում ներկայացված է սեռականությունը և դրա բաղադրիչները՝ կենսաբանական սեռը, սեռական կողմնորոշումը, սեռական նույնականացում, սեռի սոցիալական դերերը (կնոջ կամ տղամարդու վարքագծով բնորոշվող մշակութային նախադրյալներին պատկանելի):

**Բանալի բառեր** - սեռականությունը և դրա բաղադրիչները՝ կենսաբանական սեռը, սեռական կողմնորոշումը, սեռական նույնականացումը, սեռի սոցիալական դերերը, տրանսգենդեր

## Резюме

В данной статье представлена сексуальность человека, структура сексуальности, так же гендерные и половые роли и стереотипы . В статье также представлены типы сексуальной ориентации, гендерной идентификации. В статье отдельно представлены трансгендеры.

**Ключевые слова** – сексуальность, гендерные роли, гендерная идентификация, сексуальная ориентация, биологический пол, трансгендер, пол.

## Summary

This article presents the structure of human sexuality, as well as gender identification, gender roles and stereotypes. The article also presents types of sexual orientation, gender identification. The transgressors are presented separately in the article.

**Keywords** – sexuality, gender identification, gender roles and stereotypes, sexual orientation, transgender, sex

## Գրականություն

1. Акимова Л. Психология сексуальности. Учебное пособие. — Одесса: СМІЛ, 2005, стр. 11



2. The International Encyclopedia of Sexuality, p. 27
3. [www.msarmenia.org](http://www.msarmenia.org)
4. Sexual Orientation // Американская психиатрическая ассоциация
5. [www.pinkarmenia.org](http://www.pinkarmenia.org)
6. [www.apa.org](http://www.apa.org)
7. Ильин Е. П. Пол и гендер. — СПб.: Питер, 2010, стр. 72
8. Бёрн Шон. Гендерная психология = The Social Psychology of Gender. — СПб: Прайм-Еврознак, 2002, стр.202
9. Всемирная профессиональная ассоциация по трансгендерному здоровью. Стандарты помощи транссексуальным, трансгендерным и гендерно неконформным людям. 7-я версия